Նախադպրոցական կրթական միկրոծրագրեր իրականացնող հաստատություններում ընդգրկված երեխաների զարգացման դինամիկայի գնահատման և դրա վրա ազդող գործոնների հետազոտություն

«Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ

Երկրորդ միջանկյալ հաշվետվություն

Երևան, հուլիս 2017թ.

BAKER TILLY
ARMENIA

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Նախնական ակնարկ 4
1.1. Ներածություն 4
1.1.1. Առաջին խմբի խնդիրներ....5
1.1.2. Երկրորդ խմբի խնդիրներ 5
2. Դաշտային աշխատանքների նկարագրություն....7
2.1. Աշխատանքային խմբերի ստեղծում 7
2.2. Դաշտային աշխատանքներում ներգրավված մասնագետների նախապատրաստում 7
2.3. Ուսումնական տարվա սկզբի դաշտային աշխատանքների իրականացում 8
2.3.1. Նախակրթարանում ընդգրկված երեխաների թեստավորում 8
2.3.2. Նախակրթարանում չընդգրկված երեխաների թեստավորում 9
2.4. Ուսումնական տարվա վերջում նախատեսված դաշտային աշխատանքների իրականացում 11
2.4.1. Նախակրթարանում ընդգրկված երեխաների թեստավորում 11
2.4.2. Նախակրթարանում չընդգրկված երեխաների թեստավորում 12
2.5. Դաշտային աշխատանքների քանակային պատկերը 14
3. Խնդիրներ/վրիպումներ....18
4. Արդյունքների վերլուծություն 19
4.1. Վերլուծության սկզբունքները....19
4.1.1. Քանակական վերլուծության սկզբունքները 19
5. Մարզային վերլուծություն 25
5.1. Արմավիրի մարզ 25
5.1.1. «Արմավիրի Զորավար Անդրանիկ Օզանյանի անվան N 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ («Մանչուկ» նախակրթարան)....25
5.1.2. «Մեծամորի N1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ («Արևիկ» նախակրթարան) 36
5.1.3. «Ոսկեհատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ 46
5.1.4. Ընդհանրացված վերլուծություն 57
5.2. Տավուշի մարզ 61
5.2.1. «ՀՀ Տավուշի մարզի Դովեղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ 61
5.2.2. «ՀՀ Տավուշի մարզի Ոսկեպարի Հ.Բարսեղյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ 71
5.2.3. «ՀՀ Տավուշի մարզի Ներքին Ծաղկավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ 81
5.2.4. Ընդհանրացված վերլուծություն 91

5.3. Լոռու մարզ 95
5.3.1. «Ստեփանավանի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ 95
5.3.2. «Սպիտակի թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ 104
5.3.3. «Վանաձորի Ս.Շահումյանի անվան թիվ 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ 114
5.3.4. Ընդհանրացված վերլուծություն 126
6. Վերլուծություն՝ ըստ ցուցանիշների 130
6.1. Պարապմունքի դիտարկման վերլուծություն՝ ըստ չափանիշների 130
6.2. Երեխաների թեստավորման վերլուծություն՝ ըստ ցուցանիշների և ենթաոլորտների 142
6.3. Թեստավորման ընդհանրացված սեռային տվյալներ՝ ըստ ցուցանիշների և ենթաոլորտների 150
6.4. Նախակրթարանում ընդգրկված և չընդգրկված երեխաների ընտանիքների սոցիալ-ժողովրդագրական բնութագրի նկարագրություն և երեխաների զարգացման դինամիկայի վրա սեռային հատկանիշների ազդեցության նկարագրություն 153
7. Ընդհանուր վերլուծություն/ամփոփում 159
7.1. Որակական վերլուծության ամփոփում 159
7.2. Քանակական վերլուծության ամփոփում 164
7.2.1. Երեխայի թեստավորման ամփոփում 164
7.2.2. Պարապմունքների դիտարկումների ամփոփում 165
Եզրակացություններ եվ առաջարկություններ 167

1. ՆԱԽՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Երեխաների զարգացվածության և ընդհանուր կրթական համակարգում նախակրթարանների դերն ու կարևորությունն ուսումնասիրող բազում հետազոտություններ են կատարվել, որոնք փաստում են, որ նախադպրոցական կրթությունը դրականորեն է ազդում տարրական կրթության որակի վրա. բարձրացնում է երեխայի՝ դպրոցին հարմարեցումը, ընկալունակությունը և ուսումնական առաջընթացը: Նախադպրոցական կրթության հիմնական նպատակն է հիմք ստեղծել երեխայի ֆիզիկական, հոգեբանական և ինտելեկտուալ զարգացման համար՝ նրան նախապատրաստելով դպրոցին:

Նախադպրոցական կրթությունը Հայաստանում ևս զարգացման փուլում է, և առաջնահերթ խնդիրներից մեկը վերջինիս մատչելիության ապահովումն է՝ նախակրթարանների վերականգնման և հիմնադրման միջոցով՝ հատուկ ուշադրություն դարձնելով նախադպրոցական կրթության մեջ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների ընդգրկվածության մակարդակի բարձրացմանը: Սույն հետազոտության նպատակն է ուսումնասիրել նախադպրոցական կրթական միկրոծրագրեր իրականացնող հաստատություններում ընդգրկված և չընդգրկված երեխաների զարգացման դինամիկան և դրա վրա ազդող գործոնները /յուրաքանչյուր տարի՝ ըստ մարզերի և միկրոծրագրերի իրականացման գործընթացի/:

Այս հետազոտությունը համապատասխան մարմիններին թույլ կտա ոչ միայն ամրագրել Ծրագրի ազդեցությունը նախադպրոցական կրթության արդյունավետության և երեխաների զարգացման վրա, այլև մշակել այն առաջարկությունների փաթեթը, որը թույլ կտա հետագայում զարգացնել նախադպրոցական կրթության ոլորտը:

1.1. Ներածություն

Կարևորելով նախադպրոցական կրթության ոլորտի խնդիրները և համակարգում բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունը՝ ՀՀ Կառավարությունը Համաշխարհային բանկի հետ կնքել է համաձայնագրեր՝ աջակցելու Կրթության բարելավման ծրագրի իրականացմանը: ՀՀ Կառավարության հիմնական նպատակը նախադպրոցական կրթության ծառայությունների որակի և մատչելիության բարելավումն է՝ հատուկ ուշադրություն դարձնելով նախադպրոցական կրթության մեջ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների ընդգրկման ավելացմանը:

Նախակրթարանների հիմնադրումը ծրագրի շրջանակներում կատարվել և կատարվելու է տարբեր ժամանակահատվածներում, ուստի ուսումնասիրությունը ևս նախատեսվել է իրականացնել մի քանի փուլերով՝ յուրաքանչյուր տարի ընդգրկելով այն մարզերը, որտեղ տվյալ տարում ստեղծվել են նախակրթարաններ:

Ծրագրի նպատակն է ուսումնասիրել նախադպրոցական կրթական միկրոծրագրեր իրականացնող հաստատություններում ընդգրկված երեխաների զարգացման դինամիկան և դրա վրա ազդող գործոնները ՀՀ մարզերում՝ ըստ միկրոծրագրի իրականացման գործընթացի: Հետազոտությունն իրականացնելու համար առանձնացվել են որոշակի խնդիրներ՝ (1) նկարագրել միկրոծրագրերում ընդգրկված և չընդգրկված երեխաների զարգացման դինամիկան՝ ըստ համապատասխան ոլորտների, տարվա սկզբի ու վերջի կտրվածքներով և (2)

ուսումնասիրել միկրոծրագրերում ընդգրկված և չընդգրկված[1] երեխաների զարգացման դինամիկայի վրա ազդող գործոնները: Առաջին խմբի խնդիրների համար օգտագործվել են քանակական հետազոտության գործիքներ՝ երեխաների թեստավորում, պարապմունքների դիտարկումներ: Երկրորդ խմբի խնդիրների նկարագրման համար օգտագործվել են որակական հետազոտության գործիքներ՝ խորին հարցազրույցներ, ֆոկուս խմբային քննարկումներ, ֆիզիկական միջավայրի դիտարկումներ, ծնողների սոցիալ-ժողովրդագրական բնութագրի ստանդարտացված հարցում: Մանրամասն նկարագրությունը, ըստ խնդիրների խմբերի, բերված է ստորև:

1.1.1. Առաջին խմբի խնդիրներ

Առաջին խմբի խնդիրների իրականացումը ենթադրում է հետևյալ քայլերը՝

- ☐ Ուսումնասիրել ծրագրում ընդգրկված և չընդգրկված երեխաների հմտությունների, կարողությունների և գիտելիքների զարգացվածության մակարդակը ուսումնական տարվա սկզբում:
- ☐ Ուսումնասիրել ծրագրում ընդգրկված և չընդգրկված երեխաների հմտությունների, կարողությունների և գիտելիքների զարգացվածության մակարդակը ուսումնական տարվա վերջին:
- ☐ Համեմատել և վերլուծել վերը նշված երկու քայլերի իրականացման արդյունքում ստացված տվյալները:

1.1.2. Երկրորդ խմբի խնդիրներ

Նախադպրոցական կրթական հաստատություններում ընդգրկված և չընդգրկված[2] երեխաների զարգացման դինամիկայի վրա ազդող գործոնների վերլուծության տրամաբանությունը ներկայացված է ստորև:

Յուրաքանչյուր մարզի յուրաքանչյուր համայնքի նկարագրություն

1. Նախակրթարանի մոդելի նկարագրություն՝
   - ☐ շաբաթական քանի օր,
   - ☐ օրական քանի ժամ,
   - ☐ աշխատողների կազմ,
   - ☐ վերապատրաստում անցնողների քանակ,
   - ☐ սննդի ապահովում,
   - ☐ քնելու հնարավորություններ:

[1] Այս խմբի երեխաների համար, որպես զարգացման դինամիկայի վրա ազդող գործոններ՝ առանձնացվել են միայն սեռային հատկանիշներ և ընտանիքի սոցիալ-տնտեսական վիճակ գործոնները:
[2] Այս խմբի երեխաների համար, որպես զարգացման դինամիկայի վրա ազդող գործոններ՝ առանձնացվել են միայն սեռային հատկանիշներ և ընտանիքի սոցիալ-տնտեսական վիճակ գործոնները:

2. Նախակրթարանի ֆիզիկական միջավայրի պայմանների նկարագրություն և խնդիրների վերհանում:
3. Նախակրթարանի աշխատակազմի, աշխատանքային փորձի, կարծիքների, և հնարավոր խնդիրների նկարագրություն:
4. Նախակրթարանում ընդգրկված երեխաների ծնողների կարծիքների, ընկալումների, նախակրթարանից սպասումների և վերաբերմունքի նկարագրություն.
   - ☐ նախակրթարանում ընդգրկված երեխաների ծնողների հետ ֆոկուս խմբային քննարկումների նկարագրություն,
   - ☐ նախակրթարանում ընդգրկված հատուկ կարիքներ ունեցող երեխաների ծնողների հետ հարցազրույցների նկարագրություն,
   - ☐ նախակրթարանում ընդգրկված սոցիալապես անապահով երեխաների ծնողների հետ հարցազրույցների նկարագրություն,
   - ☐ նախակրթարանում ընդգրկված երեխաների՝ նախակրթարանում վարձատրությամբ աշխատող ծնողների հետ հարցազրույցների նկարագրություն:
5. Նախակրթարանում ընդգրկված և չընդգրկված երեխաների ընտանիքների սոցիալ-ժողովրդագրական բնութագրի նկարագրություն:
6. Նախակրթարանում ընդգրկված և չընդգրկված երեխաների զարգացման դինամիկայի վրա սեռային հատկանիշների ազդեցության նկարագարություն[3]:
7. Նախակրթարաններում՝ ուսումնական տարվա սկզբի և վերջի հետազոտությունների ընթացքում դուրս բերված տարբերությունների նկարագրություն:

Միկրոծրագրերի արդյունավետությունը ճիշտ հասկանալու համար, վերը նշված խնդիրների նկարագրությունները պետք է սինթեզվեն: Այսինքն, պետք է հասկանալ և՛ երեխայի զարգացման դինամիկան, և՛ դրա վրա ազդող գործոնները, և՛ դրանց ընդհանրացված արդյունքը:

Հաշվետվությունը բաղկացած է հետևյալ բաժիններից.

- ☐ դաշտային աշխատանքների նկարագրություն, որտեղ ներկայացվում է ողջ գործընթացը,
- ☐ վրիպումներ/խնդիրներ, որտեղ մանրամասն նկարագրվում է ցանկացած խնդիր, որ առաջացել է թե՛ դաշտային աշխատանքների ժամանակ, թե՛ վերլուծության ընթացքում, և թե՛ ընդհանուր գործընթացում,
- ☐ արդյունքների վերլուծություն, որտեղ նկարագրվում են և՛ քանակական, և՛ որակական հետազոտության արդյունքները՝ ըստ համայնքների, մարզերի և նկարագրվող էլեմենտների,
- ☐ արդյունքների ամփոփում, որն իր մեջ ներառում է հետազոտության եզրակացությունը, վերը նշված յուրաքանչյուր խնդրի խմբի ամփոփումը և ընդհանուր եզրահանգումները:

[3] Աղբյուրը՝ երեխաների թեստավորում:

2. ԴԱՇՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտությունը կատարվել է 2016-2017 թվականների ընթացքում ՀՀ երեք մարզերում՝ Արմավիր, Լոռի, Տավուշ: Դաշտային աշխատանքներն իրականացվել են ստորև բերված չորս փուլերով:

2.1. Աշխատանքային խմբերի ստեղծում

Հետազոտությունն իրականացնելու համար ձևավորվել է համապատասխան աշխատանքային խումբ: Խումբը ներառում է՝ կոորդինատոր, մեթոդաբան-փորձագետներ, հետազոտության որակական մասը ապահովող հարցազրուցավարներ, երեխաների կրթական զարգացումը թեստավորողներ, որակական հարցազրույցները սղագրողներ, ֆիզիկական միջավայրի, պարապմունքների դիտարկումների և թեստերի տվյալները մուտքագրողներ և վերլուծաբաններ:

Դաշտային աշխատանքներն իրականացրել են միանման կազմ ունեցող հետազոտական երկու խմբեր, որոնցից յուրաքանչյուրում ներգրավված են եղել երկուական որակական հարցազրուցավարներ և երկուական թեստավորողներ: Սակայն պետք է նշել, որ նման կերպ աշխատանքը կազմակերպվել է մեկ այցի ժամանակ, իսկ մնացած այցերի ժամանակ աշխատել է մեկ հիմնական հետազոտական խումբ:

Ուսումնական տարվա վերջում նախատեսված դաշտային աշխատանքների փուլում աշխատանքային խմբում որակական հարցազրուցավարների կազմը հիմնականում չի փոխվել տարվա սկզբի համեմատ, ինչը հնարավորություն է տվել դիտարկել տարեսկզբի և տարեվերջի փոփոխությունները, ֆիզիկական միջավայրի հնարավոր փոփոխությունները, նախակրթարանի աշխատակազմի ուսուցանման մեթոդների և սկզբունքների կիրառության ձևերը, ծնողների վերաբերմունքի, սպասումների, նախակրթարանի կյանքին ներգրավվածության, երեխաների դաստիարակության նկատմամբ մոտեցումների, ինչպես նաև նախակրթարանի պայմաններից բավարարվածության հնարավոր փոփոխությունները: Միևնույն ժամանակ, հետազոտողների անձնական փորձը, վերաբերմունքն ու գիտելիքները նույնպես որոշակի ազդեցություն են ունեցել (քանի որ, հիմնականում, տարվա և՛ սկզբում, և՛ վերջում միևնույն հարցազրուցավարներն են այցելել նույն համայնքներ): Ժամանակի սղության պատճառով և աշխատանքի օպտիմալ կազմակերպման նպատակով՝ հարցազրուցավարների մեջ իրականացվել է որոշակի դերային բաշխում: Յուրաքանչյուր հետազոտող հիմնականում ունեցել է միևնույն կատեգորիայի ինֆորմանտներ, մասնավորապես՝ ծնողները և դաստիարակները հարցվել են միևնույն հարցազրուցավարի կողմից՝ պայմանավորված ֆոկուս խմբային քննարկման կազմակերպման և իրականացման առաջնահերթությամբ: Տեղեկատվության որակի և կարգավիճակների համապատասխանեցման պահպանման նպատակով՝ միկրոծրագրի տնօրենի հետ հարցազրույցները ևս իրականացվել են միևնույն հարցազրուցավարի կողմից:

2.2. Դաշտային աշխատանքներում ներգրավված մասնագետների նախապատրաստում

Փորձագետները և մեթոդաբանները ներկայացրել են միկրոծրագրի համառոտ նկարագիրը, հետազոտության նպատակը, ժամկետները, մանրամասն ներկայացվել են հետազոտական

գործիքները, քննարկվել են աշխատանքի բաշխման և կազմակերպչական հարցերը: Հարցաթերթերը ներկայացվել են հարցազրույցավարներին և բոլոր կետերը մանրակրկտորեն բացատրվել են՝ համոզվելու, որ հարցազրույցավարները հստակ պատկերացնում են հարցի նպատակը:

Մասնագետների հետ քննարկվել են այն բոլոր խնդրահարույց հարցերը, որոնք հարցազրուցավարների մոտ անվստահություն կամ օգնության անհրաժեշտություն էին առաջացնում, այն հնարավոր դեպքերը, որ արագ կողմնորոշում և որոշակի վարվելակերպ կպահանջեն աշխատողների կողմից՝ ամբողջ գործընթացի սահուն և անխափան ընթացքն ապահովելու համար: Նախապատրաստական աշխատանքներից հետո կատարվել է գործիքների փորձարկում:

2.3. Ուսումնական տարվա սկզբի դաշտային աշխատանքների իրականացում

Ուսումնական տարվա սկզբում նախակրթարանում ընդգրկված և չընդգրկված երեխաների թեստավորման համար կատարվել են այցելություններ 27 համայնքներ: Աշխատանքային օրը գրեթե միշտ սկսվել է վաղ առավոտյան և ավարտվել բավականին ուշ: Այնուամենայնիվ, աշխատանքային խումբը մեծ եռանդով է կատարել աշխատանքը՝ ներկայանալի և ճշգրիտ արդյունքներ ստանալու համար: Բոլոր համայնքներում (և՛ հիմնական, և՛ օժանդակ) այցը կատարել է մեկ խումբ:

Ըստ մեթոդաբանության՝ յուրաքանչյուր հիմնական համայնքում պետք է թեստավորվեին 5-6 տարեկան 18 երեխա: Այնուհետև, յուրաքանչյուր համայնքի նախակրթարան հաճախող երեխաների խմբի համար պետք է կազմվեր նախակրթարան չհաճախող երեխաների խումբ, որը պետք է նույնական լիներ նախակրթարան հաճախող երեխաների խմբին իր բոլոր գլխավոր չափորոշիչներով՝ երեխաների քանակով, խմբի սեռային կազմով և խմբի տարիքային կազմով: Այդ իսկ պատճառով նախակրթարան հաճախող երեխաների խումբը թեստավորել է համայնք կատարվող այցի սկզբում, որպեսզի ունենանք նախակրթարան հախաճող երեխաների խմբի կազմի բնութագիր:

2.3.1. Նախակրթարանում ընդգրկված երեխաների թեստավորում

Ուսումնական տարվա սկզբում նախակրթարանում ընդգրկված երեխաների թեստավորման համար դաշտային աշխատանքները տևել են 2016թ.-ի նոյեմբերի 9-ից մինչև 25-ը: Դաշտային աշխատանքների ընթացքում նախակրթարաններում ընդգրկված երեխաներից ուսումնասիրվել են մեթոդաբանությամբ նախատեսված ընտրանքային թվին համապատասխան երեխաներ (յուրաքանչյուրում՝ 10-ից ոչ պակաս երեխա): Հարկ է նշել, որ Տավուշի մարզում ընտրանքով նախատեսված երեք նախակրթարաններում երեխաների քիչ լինելու հետևանքով, մեթոդաբանությամբ նախատեսված ընտրանքային թիվը պահպանելու համար կատարվել են լրացուցիչ այցեր այդ նույն մարզի մնացած երեք նախակրթարաններ ևս (Դովեղ - Աչաջուր, Ոսկեպար - Ենոքավան, Ներքին Ծաղկավան - Վազաշեն)՝ ապահովելու ընտրանքային պարամետրերի ներկայացուցչականությունը:

Այցի նախորդ օրը ֆոկուս խմբային քննարկումների համար ծնողների հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել. նախապես զգուշացվել է այցի մասին միկրոծրագրի

ղեկավարին կամ դաստիարակին, ճշտվել է համապատասխան քանակով երեխաների առկայությունը, ինչպես նաև զգուշացվել է առավոտյան՝ երեխաներին ուղեկցելուց հետո, համապատասխան թվով ծնողներին հավաքելու մասին:

Համայնքներ այցեր կազմակերպելու համար հստակ ամսաթվի ընտրությունը կատարվել է՝ ելնելով որոշ հանգամանքներից՝ համապատասխան քանակով շահառու երեխաների ներկայության ապահովում, եղանակային պայմանների պատճառով հարմար ուղղության ընտրություն, հեռավորություն մայրաքաղաքից, մեկ կամ երկու օրում աշխատանքը իրականացնելու հնարավորություն, բացման ամսաթիվ և այլն: Այդ իսկ պատճառով, յուրաքանչյուր մարզի համայնքների այցելությունները հաջորդական ամսաթվերով չեն կատարվել: Այցերի ժամանակացույցը ներկայացված է Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1: 2016-2017թթ.-ի ուսումնական տարվա սկզբում հիմնական համայնքներում նախատեսված դաշտային աշխատաքների ժամանակացույց՝ ըստ մարզերի

Մարզ	Գյուղ/Քաղաք	Ամսաթիվ
Արմավիր	Արմավիր	10.11.2016թ.
	Մեծամոր	09.11.2016թ.
	Ոսկեհատ	10.11.2016թ.
Տավուշ	Դովեղ[4]	23.11.2016թ.
	Ոսկեպար[5]	23.11.2016թ.
	Ներքին Ծաղկավան[6]	22.11.2016թ.
Լոռի	Ստեփանավան	24.11.2016թ.
	Վանաձոր	25.11.2016թ.
	Սպիտակ	25.11.2016թ.

2.3.2. Նախակրթարանում չընդգրկված երեխաների թեստավորում

Որպես հարցվողների կատեգորիա՝ դիտարկվել են նաև նախակրթարան չհաճախող երեխաները և նրանց ծնողները (այն դեպքում, երբ չհաճախող երեխաները թեստավորվել են հիմնական համայնքում):

Այն համայնքներում, որտեղ չեն գտնվել համապատասխան քանակությամբ չհաճախող երեխաներ, ընտրվել են օժանդակ համայնքներ (մեթոդաբանության համաձայն): Առաջնահերթ հաշվի են առնվել մեթոդաբանության համաձայն ընտրված օժանդակ համայնքները, սակայն այցելության ժամանակ այդ համայնքներում ևս համապատասխան քանակությամբ երեխաներ չեն եղել: Հաջորդ ընտրությունը կատարվել է կոորդինատորների կողմից՝ հիմնական համայնքին մոտ գտնվելու և նախակրթարանի բացակայության սկզբունքներով: Երբեմն ընտրվել են երկու կամ ավելի օժանդակ համայնքներ, ընդ որում՝ որոշ դեպքերում ընտրված օժանդակ

[4] Երեխաների լրացուցիչ հարցումներ են կատարվել նաև Ակնաղբյուր նախակրթարանում, քանի որ Դովեղի նախակրթարանում համապատասխան քանակությամբ երեխաներ չեն եղել:
[5] Երեխաների լրացուցիչ հարցումներ են կատարվել նաև Ենոքավանի նախակրթարանում, քանի որ Ոսկեպարի նախակրթարանում համապատասխան քանակությամբ երեխաներ չեն եղել:
[6] Երեխաների լրացուցիչ հարցումներ են կատարվել նաև Վազաշենի նախակրթարանում, քանի որ Ներքին Ծաղկավանի նախակրթարանում համապատասխան քանակությամբ երեխաներ չեն եղել:

համայնքները բավականին հեռու են եղել հիմնական համայնքից, որովհետև մոտակա համայնքներում կա՛մ 5-6 տարեկան երեխա չի եղել, կա՛մ էլ նախակրթարան է գործել:

Համապատասխան քանակով երեխաներ չգտնելու պատճառները հիմնականում հետևյալներն են եղել՝ ի սկզբանե 5-6 տարեկան երեխաների քանակը փոքրաթիվ է եղել, մեկնել են երկրից կամ տեղափոխվել են համայնքից, հիվանդ են եղել, փաստացի բնակվում էին այլ համայնքում, հաճախում էին մանկապարտեզ:

Հետևաբար, որոշ հիմնական համայնքների համար ձևավորվել է չհաճախող երեխաների համախմբված սեռային կազմով ընդհանրական խմբեր: Ըստ այդմ, յուրաքանչյուր նախակրթարանի համար ստուգիչ խումբն ընտրվել է նշված ընդհանրական խմբերից՝ հաշվի առնելով սեռային և քանակային բաշխվածությունը, ինչպես նաև հիմնական համայնքից օժանդակ համայնքի հեռավորությունը:

Աղյուսակ 2: 2016-2017թթ.-ի ուսումնական տարվա սկզբում՝ ընտրված օժանդակ համայնքներ կատարված այցերի ժամանակացույց՝ ըստ մարզերի և հիմնական համայնքների

Մարզ	Հիմնական համայնք	Օժանդակ համայնք	Ամսաթիվ
Արմավիր	Արմավիր	Մրգաշատ	10.11.2016թ.
	Մեծամոր	Ակնալիճ Տարոնիկ	09.11.2016թ. 16.11.2016թ.
	Ոսկեհատ	Տարոնիկ Մրգաստան	16.11.2016թ.
Տավուշ	Դովեղ	Կողբ Բերդավան Աչաջուր Ազատամուտ	23.11.2016թ. 23.11.2016թ. 22.11.2016թ. 25.11.2016թ.
	Ոսկեպար	Կիրանց Սարիգյուղ Աչաջուր	22.11.2016թ.
	Ներքին Ծաղկավան	Ազատամուտ	25.11.2016թ.
		Սարիգյուղ	22.11.2016թ.
Լոռի	Ստեփանավան	Լոռիբերդ Ուրասար Պուշկինո Ամրակից Արմանիս	24.11.2016թ.
	Վանաձոր	Վանաձոր	25.11.2016թ.
	Սպիտակ	Սպիտակ	25.11.2016թ.

Նախակրթարան չհաճախող երեխաների հետ հանդիպում կազմակերպելու գործում զգալի աջակցություն են ցուցաբերել համայնքների հանրակրթական դպրոցների տնօրենները, գյուղապետարանները՝ հանձինս գյուղապետերի, քաղաքապետարանը (Սպիտակի

քաղաքապետարանի Կրթության բաժին), պոլիկլինիկաները և այլն: Հանդիպումները տեղի են ունեցել կա՛մ դպրոցներում, կա՛մ երեխաների տներում, կա՛մ էլ համայնքապետարաններում:

2.4. Ուսումնական տարվա վերջում նախատեսված դաշտային աշխատանքների իրականացում

Ուսումնական տարվա վերջում թեստավորման համար կատարվել են այցելություններ՝ տարվա սկզբում այցելած նույն 27 համայնքները: Ուսումնական տարվա վերջի դաշտային աշխատանքներն իրականացվել են 2017թ.-ի մայիսի 17-ից հունիսի 23-ը:

Երեխաների զարգացման դինամիկան ուսումնասիրելու նպատակով դաշտային աշխատանքների այս փուլում պետք է թեստավորվեին նախորդ փուլում արդեն թեստավորված երեխաները: Նախորդ փուլում թեստավորված երեխաներից որոշները տարվա վերջի այցելության ժամանակ բացակայել են՝ հիվանդացության, համայնքից տեղափոխվելու, երկրից մեկնելու և այլ պատճառներով: Վերլուծությունը կատարվել է դաշտային աշխատանքների երկու փուլերում էլ թեստավորված նույն երեխաների արդյունքների հիման վրա՝ պահպանելով ընտրանքով նախատեսված սեռային բաշխվածությունը:

2.4.1. Նախակրթարանում ընդգրկված երեխաների թեստավորում

Հարցումների համար պայմանավորվածությունները ձեռք են բերվել նախօրոք: Ինչպես նախորդ փուլում, նախակրթարան հաճախող երեխաների համար կոորդինատորը նախակրթարանի դաստիարակի կամ տնօրենի հետ նախապես հստակեցրել է առավոտյան հանդիպման ժամը, որպեսզի հնարավոր լինի ապահովել համապատասխան երեխաների ներկայությունը, դիտարկել երեխաների պարապմունքները՝ չխախտելով երեխաների նախաճաշի/քնի/ճաշի ժամը և ավարտելով աշխատանքը մինչև երեխաների տուն գնալը, ինչպես նաև համաձայնեցվել է որոշակի ժամ՝ անհրաժեշտ թվով ծնողների ֆոկուս խմբային քննարկումներ անցկացնելու համար:

Համաձայն տարվա սկզբին կատարված այցերին, տարվա վերջում ևս Տավուշի մարզում երեք նախակրթարաններից բացի կատարվել են լրացուցիչ այցեր այդ նույն մարզի մնացած երեք նախակրթարաններ (Դովեղ - Աչաջուր, Ոսկեպար - Ենոքավան, Ներքին Ծաղկավան - Վազաշեն)՝ ապահովելու ընտրանքային պարամետրերի ներկայացուցչականությունը[7]:

Հիմնական համայնքներ կատարված այցերի ժամանակացույցը՝ ըստ մարզերի, ներկայացված է Աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3: 2016-2017թթ.-ի ուսումնական տարվա վերջում հիմնական համայնքներում նախատեսված դաշտային աշխատանքների ժամանակացույց՝ ըստ մարզերի

Մարզ	Գյուղ/Քաղաք	Ամսաթիվ
Արմավիր	Արմավիր	17.05.2017թ.
	Մեծամոր	17.05.2017թ.

[7] Չնայած լրացուցիչ այցերի ժամանակ պահպանվել է մեթոդաբանությամբ նախատեսված ընտրանքային թիվը՝ առաջնահերթությունը տալով սեռային ճիշտ բաշխվածությանը վերջնական ընտրանքային թիվը ստացվել է մեթոդաբանությամբ նախատեսված թվից փոքր:

	Ոսկեհատ	19.05.2017թ.
Տավուշ	Դովեղ[8]	21.06.2017թ.
	Ոսկեպար[9]	21.06.2017թ.
	Ներքին Ծաղկավան[10]	20.06.2017թ.
Լոռի	Ստեփանավան	22.06.2017թ.
	Վանաձոր	23.06.2017թ.
	Սպիտակ	23.06.2017թ.

2.4.2. Նախակրթարանում չընդգրկված երեխաների թեստավորում

Նախակրթարան չհաճախող երեխաների հետ հանդիպում կազմակերպելու գործում զգալի աջակցություն են ցուցաբերել համայնքների հանրակրթական դպրոցների տնօրենները, գյուղապետարանները՝ հանձինս գյուղապետերի, քաղքապետարանի Կրթության վարչությունը (Սպիտակ քաղաքի Կրթության բաժին), պոլիկլինիկաները (Վանաձոր քաղաքում): Հանդիպումները տեղի են ունեցել կա՛մ դպրոցներում, կա՛մ երեխաների տներում, կա՛մ էլ համայնքապետարաններում:

Աղյուսակ 4: 2016-2017թթ.-ի ուսումնական տարվա վերջում՝ ընտրված օժանդակ համայնքներ կատարված այցերի ժամանակացույց՝ ըստ մարզերի և հիմնական համայնքների

Մարզ	Հիմնական համայնք	Օժանդակ համայնք	Ամսաթիվ
Արմավիր	Արմավիր	Մրգաշատ	17.05.2017թ.
	Մեծամոր	Ակնալիճ Տարոնիկ	17.05.2017թ.
	Ոսկեհատ	Տարոնիկ Մրգաստան	17.05.2017թ. 19.05.2017թ.
Տավուշ	Դովեղ	Կողբ Բերդավան Աչաջուր Ազատամուտ	21.06.2017թ. 21.06.2017թ. 20.06.2017թ. 20.06.2017թ.
	Ոսկեպար	Կիրանց Սարիգյուղ Աչաջուր	20.06.2017թ.
	Ներքին Ծաղկավան	Ազատամուտ Սարիգյուղ	20.06.2017թ.

[8] Երեխաների լրացուցիչ հարցումներ են կատարվել նաև Ակնաղբյուրի նախակրթարանում, քանի որ Դովեղի նախակրթարանում համապատասխան քանակությամբ երեխաներ չեն եղել:
[9] Երեխաների լրացուցիչ հարցումներ են կատարվել նաև Ենոքավանի նախակրթարանում, քանի որ Ոսկեպարի նախակրթարանում համապատասխան քանակությամբ երեխաներ չեն եղել:
[10] Երեխաների լրացուցիչ հարցումներ են կատարվել նաև Վազաշենի նախակրթարանում, քանի որ Ներքին Ծաղկավանի նախակրթարանում համապատասխան քանակությամբ երեխաներ չեն եղել:

Լոռի	Ստեփանավան	Լոռիբերդ Ուրասար Պուշկինո Ամրակից Արմանիս	22.06.2017թ.
	Վանաձոր	Վանաձոր	23.06.2017թ.
	Սպիտակ	Սպիտակ	23.06.2017թ.

2.5. Դաշտային աշխատանքների քանակային պատկերը

Ուսումնական տարվա սկզբում և վերջում իրականացվել է 474 ստանդարտացված հարցում՝ նախակրթարանում ընդգրկված և չընդգրկված 5-6 տարեկան երեխաների հետ, որից տարվա սկզբում թեստավորված երեխաների քանակը կազմել է 256 հոգի, տարվա վերջում՝ համապատասխանաբար 218: Ընդհանուր առմամբ, թեստավորվել են նախակրթարանում ընդգրկված 140 և նախակրթարանում չընդգրկված 116[11] երեխաներ, որոնցից վերաթեստավորվել են համապատասխանաբար 104 և 84[12] երեխաներ: Ճիշտ է, այս առումով մի փոքր շեղում է եղել մեթոդաբանությամբ նախատեսված երեխաների քանակից, սակայն վիճակագրական ներկայացչությունը վերլուծության ժամանակ հիմնականում պահպանվել է ինչպես սեռային, այնպես էլ քանակային (բացառությամբ որոշ համայնքների՝ Ոսկեպար, Ներքին Ծաղկավան և Վանաձոր): Արդյունքում, վերլուծությանը մասնակցել է 5-6 տարեկան 172 երեխա՝ 88 նախակրթարանում ընդգրկված և 84 նախակրթարանում չընդգրկված:

Աղյուսակ 5: 2016-2017թթ.-ի ուսումնական տարվա սկզբին և վերջին թեստավորված և վերաթեստավորված շահառու և նախակրթարան չհաճախող երեխաների քանակը՝ ըստ մարզերի

Մարզ	Գյուղ/Քաղաք	Թեստավորված շահառու երեխաների թիվ	Վերաթեստավորված շահառու երեխաների թիվ (որից՝ վերլուծությանը մասնակցել է)	Թեստավորված չայցելող երեխաների թիվ	Վերաթեստավորված չայցելող երեխաների թիվ (որից՝ վերլուծությանը մասնակցել է)
Արմավիր	Արմավիր	19	10 (10)	16	14 (10)
	Մեծամոր	19	15 (11)	15	13 (11)
	Ոսկեհատ	18	15 (11)	11	11 (11)
Տավուշ	Դովեղ[13]	14	14 (12)	23	17 (12)

[11,12] Նշված թիվը չի համապատասխանում աղյուսակում բերված թեստավորված չհաճախող երեխաների ընդհանուր թվին, քանի որ եղել են օժանդակ համայնքներ, որոնք օգտագործվել են մի քանի հիմնական համայնքների համար:

[13] Երեխաների լրացուցիչ հարցումներ են կատարվել նաև Ակնաղբյուրի նախակրթարանում, քանի որ Դովեղի նախակրթարանում համապատասխան քանակությամբ երեխաներ չեն եղել:

	Ոսկեպար[14]	10	10 (9)[15]	14	11 (9)
	Ներքին Ծաղկավան[16]	11	10 (8)[17]	15	12 (8)
Լոռի	Ստեփանավան	16	11 (10)	11	10 (10)
	Վանաձոր	21	9 (7)[18]	25	14 (7)
	Սպիտակ	12	10 (10)	12	11 (10)
Ընդամենը		**140**	**104 (88)**	**142**	**106 (88)**

Յուրաքանչյուր համայնքում հարցազրույց է իրականացվել տնօրենի, դաստիարակի և շահառու երեխաների ծնողների հետ: Վերջիններիս հետ իրականացվել է նաև ֆոկուս խմբային քննարկում: Այս համայնքների նախակրթարաններում բացակայել են դաստիարակի օգնական և վարձատրությամբ աշխատող ծնողներ կատեգորիաները, սակայն որտեղ հատուկ կարիքներով երեխաների, անապահով ընտանիքների երեխաների ծնողներ կատեգորիաներ են եղել, խորին հարցազրույցներ են իրականացվել նաև նրանց հետ: Յուրաքանչյուր կատեգորիայի առավել մանրամասն նկարագրությունը տրված է վերլուծության բաժնում:

[14] Երեխաների լրացուցիչ հարցումներ են կատարվել նաև Ենոքավանի նախակրթարանում, քանի որ Ոսկեպարի նախակրթարանում համապատասխան քանակությամբ երեխաներ չեն եղել:

[15, 17] Սեռային բաշխվածությունը պահպանելու հետևանքով չի պահպանվել մեթոդաբանությամբ նախատեսված ընտրանքային թիվը:

[16] Երեխաների լրացուցիչ հարցումներ են կատարվել նաև Վազաշենի նախակրթարանում, քանի որ Ներքին Ծաղկավանի նախակրթարանում համապատասխան քանակությամբ երեխաներ չեն եղել:

[18] Նախակրթարանը չի ապահովել երեխաների անհրաժեշտ քանակը բացակայությունների պատճառով:

Աղյուսակ 6: 2016-2017թթ.-ի ուսումնական տարվա սկզբին և վերջին կատարված որակական հետազոտությունները՝ ըստ մարզերի և կատեգորիաների

Մարզ	Գյուղ/Քաղաք	Նախակրթարաններում	Չայցելող երեխաների ծնողներ	
			Տարվա սկիզբ	Տարվա վերջ
Արմավիր	Արմավիր	1 ֆոկուս խմբային քննարկում 1 տնօրենի հետ խորին հարցազրույց 2 դաստիարակի հետ խորին հարցազրույց 1 անապահով ծնողի հետ խորին հարցազրույց	0	0
	Մեծամոր	1 ֆոկուս խմբային քննարկում 1 տնօրենի հետ խորին հարցազրույց 2 դաստիարակի հետ խորին հարցազրույց 1 հատուկ կարիքներ ունեցող երեխայի ծնողի հետ խորին հարցազրույց	0	0
	Ոսկեհատ	1 ֆոկուս խմբային քննարկում 1 տնօրենի հետ խորին հարցազրույց 1 դաստիարակի հետ խորին հարցազրույց 1 անապահով ծնողի հետ խորին հարցազրույց 1 հատուկ կարիքներով երեխայի ծնողի հետ խորին հարցազրույց	0	0
Տավուշ	Դովեղ[19]	1 ֆոկուս խմբային քննարկում 1 տնօրենի հետ խորին հարցազրույց 1 դաստիարակի հետ խորին հարցազրույց 1 անապահով ծնողի հետ խորին հարցազրույց	0	0

[19] Երեխաների լրացուցիչ հարցումներ են կատարվել նաև Աչաջուրի նախակրթարանում, քանի որ Դովեղի նախակրթարանում համապատասխան քանակությամբ երեխաներ չեն եղել:

	Ոսկեպար[20]	1 ֆոկուս խմբային քննարկում 1 տնօրենի հետ խորին հարցազրույց 1 դաստիարակի հետ խորին հարցազրույց 1 անապահով ծնողի հետ խորին հարցազրույց	0	0
	Ներքին Ծաղկավան[21]	1 ֆոկուս խմբային քննարկում 1 տնօրենի հետ խորին հարցազրույց 1 դաստիարակի հետ խորին հարցազրույց 1 անապահով ծնողի հետ խորին հարցազրույց	0	0
Լոռի	Ստեփանավան	1 ֆոկուս խմբային քննարկում 1 տնօրենի հետ խորին հարցազրույց 1 դաստիարակի հետ խորին հարցազրույց 1 անապահով ծնողի հետ խորին հարցազրույց	0	0
	Վանաձոր	1 ֆոկուս խմբային քննարկում 1 տնօրենի հետ խորին հարցազրույց 1 դաստիարակի հետ խորին հարցազրույց[22] 1 անապահով ծնողի հետ խորին հարցազրույց	4	4
	Սպիտակ	1 ֆոկուս խմբային քննարկում 1 տնօրենի հետ խորին հարցազրույց 1 դաստիարակի հետ խորին հարցազրույց 1 անապահով ծնողի հետ խորին հարցազրույց	4	4

[20] Երեխաների լրացուցիչ հարցումներ են կատարվել նաև Ենոքավանի նախակրթարանում, քանի որ Ոսկեպարի նախակրթարանում համապատասխան քանակությամբ երեխաներ չեն եղել:

[21] Երեխաների լրացուցիչ հարցումներ են կատարվել նաև Վազաշենի նախակրթարանում, քանի որ Ներքին Ծաղկավանի նախակրթարանում համապատասխան քանակությամբ երեխաներ չեն եղել:

[22] Տարվա վերջում երկու դաստիարակի հետ է իրականացվել հարցազրույց, քանի որ տարվա սկզբում ներկայացվել էր, որ նա անհատույց էր աշխատում:

3. ԽՆԴԻՐՆԵՐ/ՎՐԻՊՈՒՄՆԵՐ

Հետազոտության իրականացման ընթացքում առաջացել են տարբեր տիպի խնդիրներ: Մի մասը կախված է եղել դաշտային աշխատանքների հետ, մյուս մասը՝ հետազոտության գործիքների, համայնքների կամ միկրոծրագրերի: Դաշտային աշխատանքների հետ կապված խնդիրները հետևյալն էին.

1. Դաշտային աշխատանքները սկսվել են նոյեմբեր ամսին, ինչը երկու ամսով ուշ է պայմանագրով նախատեսված աշխատանքների սկզբից՝ սեպտեմբեր ամսից:

   - Տարվա սկզբի դաշտային աշխատանքների նպատակն էր ֆիքսել հետազոտական բոլոր կատեգորիաների՝ նախակրթարանի աշխատակազմի, ծնողների կարծիքների, երեխաների գիտելիքների և ֆիզիկական միջավայրի սկզբնական պատկերը, ինչը հնարավոր էր իրականացնել նախակրթարանների աշխատանքի մեկնարկին զուգընթաց (ուսումնական տարվա սկիզբը եղել է նոյեմբեր ամիսը): Այսինքն, աշխատանքների՝ պայմանագրով նախատեսված ժամկետներից շեղումը կապված է նախակրթարանների ուշ բացման հետ:

2. Դաշտային աշխատանքների ընթացքում նշանակալի խնդիր էր նաև ֆոկուս խմբային քննարկումների ընտրանքի պահպանումը: Բոլոր մարզերում ընտրանքով սահմանված չափանիշներով՝ ծնողների ընտրության իրականացումը գրեթե անհնար էր, քանի որ աշխատող ծնողներ կային: Հարցազրույցավարները առաջնորդվել են՝ հասանելի ծնողների մասնակցությամբ ֆոկուս խմբերի անցկացման սկզբունքով:

3. Նախակրթարան չհաճախող երեխաների թեստավորման մասով խնդիր է հանդիսացել ճիշտ ժամանակին ու երեխաների ճիշտ թվաքանակով պայմանավորվածությունը: Եղել են համայնքներ, որ այցի պահին համապատասխան թվով երեխաներ ներկա չեն եղել (հիվանդացության, համայնքից բացակայելու պատճառով), որի հետևանքով էլ լրացուցիչ օժանդակ համայնքներ են ընդգրկվել, որոնք նախակրթարան չեն ունեցել:

Ծրագրի հետագա փուլերի արդյունավետության համար դաշտային աշխատանքներից քաղված դասերը հետևյալն են.

1. Ծրագրի հետագա փուլերի արդյունավետության համար հատկանշական և առավել նպատակահարմար է, որ որոշ աշխատանքների համար ոչ թե մեթոդաբանությամբ սահմանել հստակ չափանիշ, այլ գործել իրավիճակային կողմնորոշմամբ և հանգամանքների ճիշտ դասավորվածության պարագայում նպատակահարմար սկզբունքների ընտրությամբ: Քանզի, չնայած մեթոդաբանությամբ պահանջվող երկուական այցերին՝ ծրագրի և՛ սկզբնական, և՛ վերջնական փուլերում ժամանակի սղության և եղանակային պայմանների պատճառով դեպի համայնքներ այցերը կազմակերպվել են մեկ օրով, ինչը, այնուամենայնիվ, չի ազդել ստացված արդյունքների որակի վրա:

2. Այնուհետև, ինչպես նկատելի է, ուսումնական տարվա թե՛ սկզբում, և թե՛ վերջում կատարված այցերի ժամանակացույցը նկարագրող աղյուսակներից, յուրաքանչյուր մարզում տարբեր համայնքներ այցերը կազմակերպվել են ոչ հաջորդական ամսաթվերով և ոչ մեթոդաբանությամբ նախատեսված համայնքային հաջորդականությամբ: Պատճառները տարբեր էին՝ համապատասխան քանակով շահառու երեխաների ներկայության ապահովում, եղանակային պայմանների պատճառով հարմար ուղղության ընտրություն, հեռավորություն մայրաքաղաքից, առավոտյան ուշ բացվելու կամ վաղ ավարտելու հետ կապված ժամային անհամապատասխանություն և այլն: Հետևությունն այն է, որ այցերի համայնքային հաջորդականությունը ևս նշանակալի ազդեցություն չունի ստացված արդյունքների որակի և տվյալների համեմատականության վրա:

4. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության ընթացքում հավաքագրված բոլոր տվյալների վերլուծությունը ներկայացված է այս բաժնում: Քանի որ հետազոտության հիմնական նպատակը հանդիսանում է երեխաների զարգացման դինամիկայի և դրա վրա ազդող գործոնների ուսումնասիրությունը, ապա նպատակահարմար է ուսումնասիրության արդյունքները ներկայացնել ըստ այդ երկու բաժինների՝ երեխաների զարգացման դինամիկայի և դրա վրա ազդող գործոնների: Ավելին՝ վերլուծությունը նաև ներկայացված է մարզային, համայնքային և գործոնային հիմնաբաժիններով:

Մինչև հետազոտության բուն արդյունքներին անցնելը՝ ստորև ներկայացվում են վերլուծության սկզբունքները:

4.1. Վերլուծության սկզբունքները

Որակական մասի վերլուծությունն իր մեջ ներառում է ֆոկուս խմբային քննարկումների վերլուծությունը, խորին հարցազրույցների վերլուծությունները և ֆիզիկական միջավայրի դիտարկումը, մինչդեռ քանակական մասի վերլուծությունը ներառում է երեխայի թեստավորումն ու պարապմունքների դիտարկումը:

4.1.1. Քանակական վերլուծության սկզբունքները

4.1.1.1. Երեխաների թեստավորում

Նախակրթարաններում ընդգրկված երեխաների զարգացման դինամիկայի վերլուծության համար գնահատվել են նախակրթարան հաճախող և չհաճախող 188 երեխաներ /նախակրթարան հաճախող՝ 104, նախակրթարան չհաճախող՝ 84/, որոնցից յուրաքանչուրն անցել է և՛ սկզբնական, և՛ կրկնակի թեստավորում: Միայն այսպիսի վերլուծության դեպքում կարելի է նկատել երեխաների զարգացման դինամիկան:

Նախակրթարան չայցելող երեխաների խումբը հետազոտության համար հանդիսացել է ստուգիչ /վերահսկող/ խումբ: Ծրագրերում չընդգրկված երեխաները կա՛մ նույն մարզի բնակիչներ են, կա՛մ որոշ համայնքների երեխաների փոքրականակության հետևանքով հնարավորինս մոտ համայնքի երեխաներ: Ստուգիչ խմբի տարեսկզբի/տարեվերջի թեստավորման արդյունքները կհամեմատվեն հետազոտական խմբի՝ տարեսկզբի/տարեվերջի թեստավորման արդյունքների հետ՝ ծրագրի արդյունավետության չափման նպատակով:

Հիմք ընդունելով «Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ»-ը՝ երեխաների թեստավորման փաթեթում ընդգրկված բոլոր առաջադրանքները կարելի է բաժանել հինգ ոլորտների և դրանցում տարանջատել հետևյալ ենթաոլորտները՝

- ☐ <u>տարրական մաթեմատիկական գիտելիքներ</u> (տիրապետում է համրանքի տարրական գիտելիքներին, գիտելիքներ ունի մեծության, չափի և ձևի մասին, կարողանում է կողմնորոշվել տարածության, ժամանակի մեջ) /առաջադրանք 2,3,5,6,9,10/ /իմացական ոլորտ/,
- ☐ <u>տրամաբանություն և մտածողություն</u> (երեխան կարողանում է համեմատել, հետազոտել երևույթները և առարկաները, գտնում է տարբեր խնդիրների լուծում, գտնում է օրինաչափություններ, կատարում է քննադատական վերլուծություն) /առաջադրանք 11,4/ /իմացական ոլորտ/,
- ☐ <u>բանավոր խոսքի ընկալում</u> (երեխան ունի իր տարիքին համապատասխան բառապաշար, ճանաչում է լեզվական հասկացությունները, դրսևորում է լեզվի տարբեր հնչյունների և քերականական հասկացությունների իմացություն, հետաքրքրություն է ցուցաբերում գրքերի և ընթերցանության նկատմամբ, երեխան արտահայտում և հասկանում է բառերը, պատմում է պատմություններ) /առաջադրանք 7/ /խոսքի զարգացում/,
- ☐ <u>վաղ գրաճանաչություն</u> (հասկանում է տպագիր խոսքի սկզբունքները, տարբերակում է տառերն ու դրանց պատկերները գրքերում) /առաջադրանք 1,8/ /խոսքի զարգացում/
- ☐ <u>մանր /նուրբ/ շարժողական ոլորտ</u> (երեխան քայլելիս, վազելիս, սողանցելիս, շարժվելիս դրսևորում է կոորդինացիայի, հավասարակշռության, վերահսկողության աճ, մանր շարժողական ոլորտում ցուցաբերում է նկարչական, ծեփելու, կտրատելու, կառուցելու հմտություններ) /առաջադրանք 12, 13/ /շարժողական ոլորտ/:

Նախադպրոցական կրթական միկրոծրագրեր իրականացնող հաստատություններում ընդգրկված երեխաների զարգացման դինամիկայի, ինչպես նաև սույն ծրագրի մեջ չընդգրկված երեխաների զարգացման մակարդակների վերլուծությունը իրականացվել է հետևյալ սկզբունքներով.

- ☐ յուրաքանչյուր համայնքի՝ նախակրթարան հաճախող և չհաճախող երեխաների զարգացման դինամիկայի վերլուծություն՝ համաձայն վերը նշված չափանիշների,

- ☐ յուրաքանչյուր մարզի՝ նախակրթարան հաճախող և չհաճախող երեխաների զարգացման դինամիկայի վերլուծություն՝ համաձայն վերը նշված չափանիշների,
- ☐ բոլոր մարզերի ընդհանրացված արդյուքների համեմատություն՝ համաձայն վերը նշված չափանիշների:

Վերլուծված տվյալները ներկայացվում են հիստոգրամների տեսքով և տոկոսային արտահայտվածությամբ: Յուրաքանչյուր պատկեր ուղեկցվում է վերլուծությամբ:

4.1.1.2. Պարապմունքների դիտարկում

Նախակրաթարաններում իրականացվող պարապմունքների դիտարկումը հնարավորություն է ընձեռում պատկերացում կազմել և վերլուծել իրականացված պարապմունքի՝

- ☐ նպատակը,
- ☐ խնդիրները /զարգացնող, ուսուցանող, դաստիարակչական/,
- ☐ կառուցվածքը /պարապմուքնի տեսակը, պարապմունքի փուլերի հստակ հերթականությունը, ժամանակային սահմանները, պարապմունքի փուլերի համապատասխանությունը երեխայի իմացական գործունեության բնույթին և այլ/,
- ☐ բովանդակությունը /ուսուցանվող նյութի գիտականությունը, նշանակությունը, նյութի բովանդակության, բարդության և ծավալի համապատասխանելիությունը երեխայի տարիքային առանձնահատկություններին, դիդակտիկ և տեսական նյութի հարաբերակցությունը, տրված նյութի կապը իրական կյանքի հետ և այլ/,
- ☐ մեթոդական հագեցվածությունը /ուսուցման զանազան մեթոդների և հնարների օգտագործում, դրանց ընտրության հիմնավորվածություն, կիրառման նպատակահարմարություն և արդյունավետություն և այլ/
- ☐ ընթացքում երեխաների վարքի և գործունեության առանձնահատկությունները /ակտիվություն, ինքնուրույնություն, հետաքրքրվածություն, ուշադրության կայունություն պարապմունքի տարբեր փուլերում, գործունեության կազմակերպվածություն, երեխաների ներխմբային և միջանձնային, ինչպես նաև ուսուցչի հետ փոխհարաբերությունների առանձնահատկությունները և այլ/
- ☐ ընթացքում մանկավարժի մասնագիտական որակների առանձնահատկությունները /նյութի իմացության աստիճան, պատրաստվածությունը դասին, մանկավարժական տակտ, հմտություններ, երեխայի հետ շփման հմտությունների կիրառում, խոսքի գրագիտություն, մանկավարժի դիրքը և այլ/
- ☐ ընդհանուր արդյունքներ /պարապմունքի պլանի իրականացում, նպատակին հասնել, պարապմունքի արդյունավետութուն, որակ, հետագա աշխատանքի

կատարելագործմանն ուղղված եզրակացություններ, հաջողությունների ամրապնդում և այլ/:

Յուրաքանչյուր պարապմունք կարելի է վերլուծել տարբեր մոտեցումներից: Վերլուծության ընթացքում հաշվի է առնվել պարապմունքի դիտարկման քարտում առանձնացված չափանիշները և նրանցում առանձնացված բնութագրիչները:

Պարապմունքների դիտարկման քարտերի վերլուծությունը իրականացվել է հետևյալ սկզբունքներով՝

- ☐ յուրաքանչյուր նախակրթարանի պարապմունքների դիտարկման քարտերի ամբողջական վերլուծություն՝ ըստ քարտում առանձնացված 8 չափանիշների,
- ☐ յուրաքանչյուր մարզի ամբողջական վերլուծություն՝ ըստ քարտում առանձնացված 8 չափանիշների,
- ☐ քարտում առանձնացված 8 չափանիշների ընդհանուր միջին ցուցանիշները՝ բոլոր մարզերի կտրվածքով:

Նախակրթարաններում իրականացված պարապմունքների վերլուծության ընթացքում ստացված արդյունքների համեմատական պատկերը առավել ակնառու ցուցադրելու նպատակով տվյալները ներկայացված են հետևյալ կերպ.

- ☐ յուրաքանչյուր չափանիշի համեմատություն՝ ըստ բոլոր նախակրթարանների,
- ☐ յուրաքանչյուր չափանիշի վերլուծություն՝ ըստ մարզերի,
- ☐ պարապմունքների դիտարկման արդյունքների վերլուծություն ըստ բոլոր համայքների/մարզերի նախակրթարանների ընդհանուր միջին ցուցանիշների:

Վերլուծված տվյալները ներկայացվում են հիստոգրամների տեսքով և տոկոսային արտահայտությամբ: Յուրաքանչյուր պատկեր ուղեկցվում է վերլուծությամբ:

4.1.2. Որակական վերլուծության սկզբունքները

4.1.2.1. Հարցազրույցներ և քննարկումներ

Նախակրթարաններում որակյալ կադրեր հավաքագրելու և պատշաճ կերպով միկրոծրագրի կառավարումը և երեխաների դաստիարակումը իրագործելու միտումը հասկանալու և փաստելու համար իրականացվել են.

- ☐ Ֆոկուս խմբային քննարկումներ, որոնք իրականացվել են միկրոծրագրում ընդգրկված երեխաների ծնողների հետ,
- ☐ խորին հարցազրույցներ հետևյալ կատեգորիաներով.
  - o միկրոծրագրերի տնօրեններ,

- դաստիարակներ,
- դաստիարակի օգնականներ,
- հատուկ կարիքներով երեխաների ծնողներ,
- սոցիալապես անապահով երեխաների ծնողներ,
- վարձատրությամբ աշխատող ծնողներ,
- նախակրթարան չհաճախող երեխաների ծնողներ:

Վերլուծելիս հաշվի է առնվել երեխաների զարգացման վրա յուրաքանչյուր կատեգորիայով հարցվածների ազդեցությունը, նրանց բնութագրերը, և հմտությունները: Հարցազրույցների և քննարկումների վերլուծությունը իրականացվել է հետևյալ սկզբունքներով.

- ☐ յուրաքանչյուր նախակրթարանում իրականացված հարցազրույցների և քննարկումների ամբողջական վերլուծություն՝ ըստ վերը նշված կատեգորիաների,
- ☐ յուրաքանչյուր մարզի նախակրթարանների իրականացված հարցազրույցների և քննարկումների ամբողջական վերլուծություն՝ ըստ վերը նշված կատեգորիաների:

Վերլուծելիս առավելագույնս փորձել ենք ներկայացնել նույն մարզի տարբեր նախակրթարանների համեմատական պատկերը: Վերլուծված տվյալները ներկայացվում են հիմնականում տեքստային վերլուծության միջոցով:

4.1.2.2. Ֆիզիկական միջավայրի դիտարկում

Նախակրթարաններում ֆիզիկական միջավայրի դիտարկման ուսումնասիրությունը կատարվել է՝ ըստ հետևյալ չափանիշների.

- ☐ երեխայի համար անվտանգություն,
- ☐ համապատասխանությունը երեխայի չափսերին, թե ինչքանով են առարկաները, շենքային պայմանները և այլ պարագաներ մատչելի երեխային,
- ☐ անհրաժեշտ պարագաներով հագեցվածությունը, որը իր մեջ կներառի թե՛ գրքային, թե՛ նստելու, թե՛ հիգիենիայի համար անհրաժեշտ պարագաները,
- ☐ պարագաների հասանելիությունը երեխաներին, որն էլ ցույց կտա, թե որքանով երեխաները հեշտությամբ կարող են օգտվել պարագաներից,
- ☐ տարածքի շարժականությունը,
- ☐ պարագաների սարքինությունը:

Վերլուծելիս հաշվի է առնվել յուրաքանչյուր չափանիշի ազդեցությունը երեխաների ֆիզիկական զարգացման վրա: Վերլուծությունը իրականացվել է հետևյալ սկզբունքներով.

- ☐ յուրաքանչյուր նախակրթարանում ֆիզիկական միջավայրի դիտարկման ամբողջական վերլուծություն՝ ըստ չափորոշիչների,

- ☐ յուրաքանչյուր մարզի նախակրթարաններում իրականացված ֆիզիկական միջավայրի դիտարկման ամբողջական վերլուծություն:

Վերլուծելիս առավելագույնս փորձել ենք ներկայացնել նույն մարզի տարբեր նախակրթարանների համեմատական պատկերը: Վերլուծված տվյալները ներկայացվում են հիմնականում տեքստի և նկարների միջոցով:

5. ՄԱՐԶԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

5.1. Արմավիրի մարզ

Մարզում ընտրվել են երեք համայնքներ, որոնցից երեքն էլ ստեղծված են դպրոցի հիմքի վրա: Այս մարզում ընտրված համայնքներն են՝ Արմավիրը, Մեծամորը և Ոսկեհատը:

5.1.1. «Արմավիրի Զորավար Անդրանիկ Օզանյանի անվան N 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ («Մանչուկ» նախակրթարան)

Նախակրթարանը ստեղծված է դպրոցի հիմքի վրա, ունի երեխաների երկու խումբ: Ըստ մեկ խմբի համար նախատեսված միկրոծրագրի բյուջեի մեծության՝ համայնքի նախակրթարանը մարզում դասակարգվում է «միջին» միջոցներ (ընտրանքում ներառված մարզի համայնքների դասակարգման ֆինանսական չափանիշ) ունեցող նախակրթարանների շարքին:

Այցելությունների ընթացքում նախակրթարանը գործում էր հետևյալ *մոդելով*.

- ☐ շաբաթական 5 օր,
- ☐ աշխատանքային կարճօրյա ռեժիմ՝ 09:00-14:00,
- ☐ այցելությունների ժամանակ նախակրթարանում աշխատում էր երկու դաստիարակ,
- ☐ երկու դաստիարակներն էլ վերապատրաստված էին,
- ☐ ՄԱԿ-ի պարենային ծրագրի շրջանակներում՝ նախակրթարանում ապահովվում էր մեկանգամյա տաք սնունդ,
- ☐ նախակրթարանը ջեռուցվում էր դպրոցի կենտրոնական կաթսայատնից,
- ☐ նախակրթարանը չուներ քնելու հնարավորություն:

Նախակրթարանի ընդհանուր պայմանների նկարագրությունը հետևյալն է.

- ☐ Նախակրթարանին տրամադրված էին խմբասենյակներ, հանդերձարան, սանհանգույցներ (առանձնացված աղջիկների ու տղաների):
- ☐ Ուսուցչի սենյակը, խմբասենյակները, հանդերձարանը և սանհանգույցները համապատասխանում էին սահմանված վերանորոգվածության, անվտանգության, երեխաների չափսերին համապատասխանության, հասանելիության և մաքրության պահանջներին (քանի որ Ծրագրի շրջանակներում նախակրթարանում դաստիարակի օգնական չի նախատեսվում, դաստիարակը պարապմունքների ընթացքում չէր հասցնում հետևել սանհանգույցից օգտվելուց հետո երեխաների հիգիենային) (*Տե՛ս Նկարներ 1 և 2*):
- ☐ Նախակրթարանն ապահովված էր սառը մշտական ջրով:
- ☐ Նախակրթարանն ուներ կենտրոնական ջեռուցման համակարգ:

Նկար 1. ՏՄ, Արմավիր, սանհանգույց

Նկար 2. ՏՄ, Արմավիր, խմբասենյակ

Խմբասենյակի և աշխատանքային կենտրոնների պայմանները բավարարում էին սահմանված նորմերին: Ճիշտ է, կենտրոնները առանձնացված չէին դեռևս, սակայն պարագաներն առկա էին: Մասամբ էր հագեցած բնագիտության կենտրոնը, բացակայում էր միայն դերային խաղի կենտրոնը (*Տե՛ս Նկարներ 3 և 4*): Խմբասենյակներն ունեին հանդերձապահարաններ, գորգեր, սեղան-աթոռներ, խաղալիքի պահարաններ, գրատախտակներ, հեռուստացույցներ, ջրի սարք և այլն: Խմբասենյակը բավականին լուսավոր էր: Նախակրթարանի երեխաների սնունդը կազմակերպվում էր դպրոցի ճաշարանում՝ ՄԱԿ-ի պարենային ծրագրի շրջանակներում (ծնողները վճարում էին ամսական 2000 ՀՀ դրամ): Նախակրթարանն օգտագործում էր դպրոցի բացօթյա խաղահրապարակը և ճաշարանը:

Նկար 3. ՏՄ, Արմավիր, հանդերձապահարաններ

Նկար 4. ՏՄ, Արմավիր, պահարան

Ըստ տնօրենի՝ նախակրթարանը ստեղծվել էր՝ համապատասխան թվով առաջին դասարանցիներ ապահովելու և դպրոցը համալիր կառույցի վերածելու համար, իսկ դպրոցի ուսուցիչներն ու ծնողներն իրենց երեխաներին ու թոռներին նախակրթարան տանելու ցանկություն էին հայտնել (մոտ 30 երեխա):

Նախակրթարանի ստեղծումը, ըստ տնօրենի, համայնքի համար մեծ ներդրում էր, քանի որ անապահով ընտանիքների համար սնունդն անվճար էր, միևնույն ժամանակ, այն երեխաներին զարգանալու և դպրոցին պատրաստ լինելու հնարավորություն էր տալիս: Ծնողներն իրենց երեխաներին բերում էին նախակրթարան մանկապարտեզի վարձի բարձր լինելու պատճառով:

Նախակրթարանի ուժեղ կողմ, ըստ տնօրենի, կարելի էր համարել այն, որ երեխաները նախակրթարանում լավ սնվում էին, խաղում էին, սովորում, իսկ թույլ կողմ՝ աշխատակիցները նոր էին ու դեռ փորձառություն չունեին:

Տնօրենը նշել էր, որ դիդակտիկ նյութերին ավելի շատ գումար պետք է հատկացվեր:

Նախակրթարանի երկու դաստիարակներն ու տնօրենը *շենքային պայմաններից* գոհ էին եղել, սակայն տնօրենը նշել էր, որ *դիդակտիկ նյութերի* պակաս կար՝ պատճառաբանելով, որ դրանք երբևիցե շատ չէին լինում, ինչպես նաև խմբասենյակներում ջրի ապարատներ տեղադրելու ցանկություն էլ էր հայտնել: Ըստ դաստիարակներից մեկի՝ նախակրթարանի խմբասենյակի պահարաններն էին քիչ ու նա կնախընտրեր, որ սենյակների արանքում դուռ լիներ, քանի որ իրենց խմբասենյակը դառնում էր միջանցիկ ու անհարմարություններ էին ստեղծվում:

Նախակրթրանում, ըստ տնօրենի, առկա էին բոլոր *աշխատանքային կենտրոնները*, սակայն նրանցից որոշներն առանձնացված չէին:

Նախակրթարանում աշխատում էր *տնօրենը* և երկու *դաստիարակ:* Տնօրենը նախկինում աշխատել էր որպես գիտաշխատող, գիտքարտուղար, այնուհետև դպրոցի տնօրեն: Դաստիարակներից մեկը նախկինում աշխատել էր մանկապարտեզում և քիչ թե շատ փորձ ուներ, իսկ մյուսը չէր աշխատել: Նախակրթարանի գործարկման աշխատանքներին երկուսն էլ միացել էին հենց սկզբից: Դաստիարակները վերապատրաստվել էին ու տիրապետում էին նախակրթարանի ուսումնական ծրագրի դրույթներին:

Դաստիարակներից մեկն արտահայտվել էր աշխատաժամանակի երկար լինելու մասին՝ պատճառաբանելով, որ երեխաները պարապմունքների վերջում արդեն ընկալունակ չէին լինում: Եթե հաշվի առնենք այն փաստը, որ այս դաստիարակը նախկինում չէր աշխատել, ապա սա կարող է լինել զուտ աշխատանքային փորձի պակասի հետևանք:

Երկու դաստիարակներն էլ համագործակցում էին միմյանց հետ, աշխատում նույն նյութերով:

Դաստիարակների պնդմամբ, *վերապատրաստումն* անցել էր շատ հետաքրքիր ու նյութառատ: Դաստիարակներից մեկը ցանկություն էր հայտնել, որ վերապատրաստումը երկար տևեր, իսկ մյուսը գտնում էր, որ իր դեպքում վերապատրաստումը մեծ օգուտ էր տվել, քանի որ ձեռք էր բերել ինքնավստահություն, կարողացել էր համակարգել գիտելիքները:

Երկու դաստիարակներն էլ կիրառում էին պարապմունքի անցկացման ինտեգրված սկզբունքը՝ փորձելով նույն թեման ամրապնդել տարբեր առարկաների շրջանակներում: Պարապմունքներն անց էին կացնում խաղերի, վարժությունների միջոցով: Դաստիարակներից մեկը կենտրոնանում էր երեխայի զարգացման բոլոր ոլորտների վրա՝ փորձելով բոլոր ոլորտները միասին զարգացնել, իսկ մյուսը (ով նախկինում չէր աշխատել) կենտրոնանում էր երեխայի իմացական զարգացման վրա, սակայն բոլոր ոլորտներն էլ առաջնային էր համարում: Երեխաներին գնահատում էին խրախուսական մեթոդով (աստղիկներ, ժպիտներ), դասընթացը պլանավորում էին օրվա կտրվածքով:

Դաստիարակներից մեկի *պարապմունքի* պլան-կոնսպեկտը այցի պահին չկար, սակայն դաստիարակը պնդում էր, որ այն պատրաստ էր, միայն տիտղոսաթերթն էր մնացել պատրաստել: Մյուս դաստիարակը, որ ուներ պարապմունքի պլան-կոնսպեկտ, չէր հաշվառել ժամանակի գործոնը: Պարապմունքներն անց էին կացվում ցուցադրություններով, օգտագործվում էին դիդակտիկ նյութեր, խաղային մեթոդներ, կիրառվում էին մտածողությունը խթանող առաջադրանքներ: Երեխաների նկատմամբ ցուցաբերում էին անհատական մոտեցում: Գենդերային հարցերում երեխաների միջև տարբերություն չէին դնում: Պարապմունքների ընթացքում չէր դիտարկվել խմբային աշխատանք ու հետազոտություն, գիտելիքի ձեռքբերում համագործակցության միջոցով: Դաստիարակները չէին օգտագործում երեխայի զարգացման դինամիկայի դիտարկման և գնահատման թերթիկները:

Դաստիարակները պնդում էին, որ այս խմբերում ամենաուժեղ երեխաներն իրենց տարիքից բարձր ընդունակություններ ունեին: Ինչ վերաբերում է թույլ երեխաներին, մի խմբում չկային, իսկ մյուսում՝ կային գույները չճանաչող երեխաներ: Միջին ընդունակություններով երեխայի խնդիրը հիմնականում անուշադրությունն էր: Ըստ երկու դաստիարակների՝ *երեխաների ընդունակությունները, սեռից կախված*, տարբերվում էին. տղաներն ավելի խելացի էին:

Ծնողների հետ կապը սերտ էր. օգնում էին խմբասենյակը զարդարելու, ձեռակերտ իրեր պատրաստելու հարցերում:

Համայնքի *ընտանիքների սոցիալ-տնտեսական վիճակը* հիմնականում բավարար էր: Դաստիարակներից մեկը գտնում էր, որ երեխաներն իրենց ընտանիքի խնդիրներն իրենց հետ բերում էին նախակրթարան, երեխաները լավ էին տեղկացված տան խնդիրներից:

Ինչ վերաբերում էր երեխայի զարգացվածության վրա *ընտանիքի/ համայնքի սոցիալ-տնտեսական վիճակի* ազդեցությանը, դաստիարակները կարծում էին, որ այն անուղղակիորեն էր ազդում: Միջոցներ չունենալու և տան խնդիրներից տեղեկացված լինելու պատճառով երեխաները չէին կարողանում կենտրոնանալ, կարծես իրենց հոգսերը բերում էին նախակրթարարան: Տնօրենը պնդում էր, որ համայնքի սոցիալ-տնտեսական վիճակն ազդում էր երեխաների զարգացվածության վրա, օրինակ, այդ համայնքի ծնողները ֆինանսապես ի վիճակի չէին երեխաներին տանել թատրոն, կինո և այլ մշակութային վայրեր:

Ծնողների հետ անցկացված ֆոկուս խմբային քննարկման ժամանակ ներկաների ընտանիքները բաղկացած էին 4-7 հոգուց, չկային նպաստառու ընտանիքներ: Հիմնականում հայրերն աշխատում էին, մայրերը տնային տնտեսուհիներ էին: Մեկ ընտանիքում աշխատում էր նաև մայրը: Երեխաների՝ նախակրթարան հաճախելու հիմնական նպատակը կրթված ու դպրոցին ադապտացված լինելն էր: Ծնողները գոհ էին դաստիարակներից՝ երեխայի կարգապահության, ստացած գիտելիքների, անվտանգության և այլ հարցերում:

Ֆոխուս խմբային քննարկման ժամանակ պարզ էր դարձել, որ մասնակից ընտանիքների երեխաները տանը հիմնականում հավաքում էին իրենց ետևից, օգնում էին տնային պարզ գործերում: Ֆոկուս խմբին մասնակցած ծնողներից երկուսը նշել էին, որ իրենց երեխան միայնակ գնումներ էր անում: Մեծ մասամբ, երեխաներն ինքնուրույն էին միայն սնվելու, հագնվելու հարցում, իսկ հիգիենայի և այլ հարցերում մայրը պարտադիր օգնում էր երեխային: *Սոցիալապես անհապահով* ընտանիքի ծնողի հետ ունեցած հարցազրույցից պարզ էր դարձել, որ մայրը կենցաղային հարցերում երեխային ինքնուրույնություն չէր տալիս. երեխան ինքնուրույն էր միայն իր զբաղմունքը որոշելիս՝ նկարել, թե խաղալ:

Երեխայի խնամքի պատասխանատուները հիմնականում մայրերն էին, երբեմն օգնում էին նաև հայրերն ու տատիկները: Դաստիարակության հարցով երեխաների հետ ծնողները հավասարապես էին զբաղվում: Մայրերի բացակայության ժամանակ երեխային խնամում էին հիմնականում տատիկները: Երեխայի առօրյան հիմնականում պլանավորում էին մայրերը՝ հնարավորության դեպքում հաշվի առնելով երեխայի ցանկությունները:

Ծնողները հիմնականում գտնում էին, որ ծնողի որոշումներն ու պահանջները պետք է բացատրվեն երեխային:

Երեխայի արարքներից պատժելի էին համարում սուտը, համակարգչի առաջ երկար մնալը և այլն: Պատժում էին սիրած բաներից զրկելով, անկյուն կանգնեցնելով:

Քննարկմանը մասնակցած ծնողների երեխաների կեսը հաճախել էին մանկապարտեզ, ինչի շնորհիվ երեխաները ոտանավորներ, երգեր, կարգապահություն ու ռեժիմ էին սովորել: Սակայն, ըստ ծնողների, ի տարբերություն նախակրթարանի, մանկապարտեզում հիմնական շեշտը դրվում էր ուտելու ու քնելու վրա, այլ ոչ՝ սովորելու: Երեխային նախակրթարան տեղափոխելու հիմնական պատճառը մանկապարտեզի վճարովի լինելն էր: *Սոցիալապես անապահով երեխայի ծնողի* հետ ունեցած հարցազրույցից պարզ էր դարձել, որ երեխան հաճախել էր մանկապարտեզ, սակայն բարձր վարձի (ամսական 7000 ՀՀ դրամ) պատճառով ծնողն այլևս չէր տարել: Իսկ նախակրթարանում նրան ընդառաջել էին ու նա վարձ չէր տալիս:

Ծնողները կարծում էին, որ երեխայի զարգացման վրա մեծ ազդեցություն ունեին ուսուցումը (ուսուցանման մեթոդներ, թեմաներ), ընտանիքը (ծնողների ազդեցությունը) և շրջապատը:

Քննարկմանը մասնակցած ծնողները ցանկություն էին հայտնել որոշակի խմբակների ստեղծման մասով (այդ պահին լրացուցիչ վճարում էին միայն սննդի համար՝ ամսական 2000 դրամ): Ընդհանուր առմամբ, ծնողները շատ գոհ էին նախակրթարանի աշխատանքից ու այն

հնարավորությունից, որ իրենց երեխան դպրոցին ինտեգրված կգնա առաջին դասարան: *Սոցիալապես անապահով երեխայի ծնողի* հետ ունեցած հարցազրույցից պարզ էր դարձել, որ նա նույնպես կցանկանար, որ երեխան լրացուցիչ պարապմունքներ ունենար, սակայն ի վիճակի չէր վճարելու:

Ծնողները նշել էին նաև, որ մի քանի անգամ եկել էին նախակրթարան՝ դասալսման, ու շատ գոհ էին եղել: Բացի այդ, ժողովների ժամանակ իրենց խորհուրդներ էին տվել հիգիենայի ու երեխաների հետ ընկերական լինելու մասին: Ծնողների միակ նկատառումն այն էր, որ դաստիարակին օգնական էր անհրաժեշտ:

Ընդհանուր առմամբ, կարելի է ասել, որ այս նախակրթարանում սերտ կապ էր ստեղծվել ծնողների ու դաստիարակների միջև: Դաստիարակները կարողանում էին ծնողներին ներգրավել երեխաների նախակրթարանային կյանքին:

Տնօրենի հետ անցկացված խորին հարցազրույցից դուրս է բերվել. «Համայնքը չուզեց լսել այդ մասին, որպեսզի ներդրում ունենար, մենք արդեն մտածեցինք բարեգործների միջոցով այդ հարցը կարգավորել… ես ունեի բարեգործներ, որոնք նախնական մուծումն արեցին շինարարության համար 1.800.000-ի չափով…», «Ծնողներին մենք աշխատում ենք նեղություն չտալ, որովհետև մեզ մոտ բերում են ավելի անապահովները. միայն սննդի համար 1000-ից 2000 դրամ: Սննդի հարցով ընդամենը երկու ծնող է դիմել, որ ազատվել են վճարից (սոցիալապես անապահովները)…»:

Որպես դրամական ներդում՝ ծնողները վճարել էին միայն գրենական պիտույքների համար, որն էլ մի կերպ էին տվել (դուրս է բերվել սոցիալապես անապահով ծնողի հետ խորին հարցազրույցից, ֆոկուս խմբային քննարկման ժամանակ ոչ մի ծնող չի նշել այս մասին):

Ծրագրի շարունակականության հետ կապված տնօրենը վտանգ չէր տեսնում, քանի որ դիմողները շատ-շատ էին ու մի մասին ստիպված մերժել էր:

Տարվա վերջի այցելությունից դուրս բերված նկատառումները բերված են ստորև:

Ի տարբերություն տարվա սկզբի՝ տարվա վերջում *նախակրթարանի թույլ կողմը,* ըստ տնօրենի, հանգստի սենյակ չունենալն է և այն, որ սննդի հարցն ամբողջովին չեն կարողանում լուծել:

Ընդհանուր պայմանների հետ կապված՝ ծնողները նշել են, որ նախակրթարանում սնունդը տարբեր չէ՝ բրինձ, հնդկաձավար, ոլոռ, և կան երեխաներ, որ չեն ուտում ձավարեղեն (ամսական 2000 դրամ): Իսկ երկարօրյայի դեպքում սնունդը բազմազան էր, որի համար ծնողները վճարում են ամսական 6000 դրամ:

Շենքային պայմանների մասով տարվա վերջում փոփոխություններ չեն նկատվել: Բոլոր շահառու կողմերը գոհ են ստեղծված պայմաններից:

Տարվա սկզբի համեմատ ավելացել են որոշ *աշխատանքային կենտրոնների* պարագաներ, ձեռակերտ իրեր, ինքնաշեն դիդակտիկ նյութեր: Սակայն և՛ տնօրենը, և՛ դաստիարակները իրենց

հետ անցկացված հարցազրույցներում նշել են, որ <<լավ>> դիդակտիկ նյութերի համալրման կարիք ունեն: Այս խնդիրն արդիական էր նաև տարվա սկզբում (*Տե՛ս Նկարներ 5 և 6*):

Նկար 5. ՏՎ, Արմավիր, խմբասենյակ

Նկար 6. ՏՎ, Արմավիր, խմբասենյակ, տեխնիկական կենտրոն

Դաստիարակներից մեկը նշել է, որ հաջորդ տարիներին ավելի սերտ պետք է աշխատի ծնողների հետ, քանի որ որոշ հարցերում իրենք սխալ մոտեցումներ են ցուցաբերում, օրինակ, երբ ձեռքին 10 գնահատական նկարված ունենալու համար երեխային գումար են խոստանում: Դաստիարակները տարվա վերջում արդեն դասի անցկացման ավելի շատ մեթոդներ էին կիրառում՝ մտագրոհ, հարցազրույցներ, խաղեր, վարժություններ: Տարվա վերջում երեխաներն ավելի էին կապվել դպրոցի հետ: Ընդհանուր առմամբ, դաստիարակներն ավելի փորձառու էին դարձել:

Ըստ դաստիարակների՝ երեխաները տարվա վերջում ավելի ակտիվ, ինքնուրույն և շփվող են դարձել: Ընդհանուր առմամբ, երեխաները տառաճանաչ են, գիտեն թվերը, բավականին առաջընթաց են ապահովել: Ծնողները փաստում են, որ երեխաները նոր գիտելիքներ են ստացել, վարվելաձև ու կարգուկանոն են սովորել, տրամաբանում են լավ, պատրաստ են դպրոցին:

Ինչ վերաբերում է ըստ սեռի երեխաների զարգացվածությանը, տարվա վերջում դաստիարակները նշել են, որ տղաներն ավելի ակտիվ են և դա կապում են այն հանգամանքի հետ, որ աղջիկների ծնողներն ավելի քիչ են <<զբաղվում>> իրենց երեխաների հետ:

Դաստիարակներն անհատական մոտեցում են ցուցաբերում երեխաների նկատմամբ: Ծնողները, համեմատելով երեխաներին իրենց մեծահասակ երեխաների հետ այս տարիքում, գտնում են, որ այս երեխաներն ավելի զարգացած են ու այդ հարցում մեծ դեր է ունեցել նախակրթարանը: Ծնողներն աջակցել են ձեռակերտ իրերի պատրաստման, խմբասենյակը զարդարելու հարցերում, նրանք տեղյակ են օրվա ռեժիմից, պարապմունքի թեմաներից, միջոցառումների ժամանակ օգնել են զարդարանքի պարագաներ ձեռք բերել: Մի խմբի ծնողներից էլ նշել են, որ իրենց դաստիարակը մի փոքր այլ մտածելակերպ ունի և ֆինանսական հարցերում խիստ է, օրինակ, երբ ծողները

ցանկացել են հանդեսի զարդարանքների կամ երեխաների համար պարագա գնել, դաստիարակը թույլ չի տվել:

Ծնողները ֆոկուս խմբային քննարկման ժամանակ նշել են, որ իրենց երեխաներին նախակրթարանից հետո տանում են երգի, պարի և ավելի հարմար կլիներ, որ այդ պարապմունքներն անցկացվեին հենց նախակրթարանում: Իրենք պատրաստ են լրացուցիչ գումար վճարել:

Դաստիարակներից մեկը նշել է նաև, որ դպրոցների համար նախակրթարան ունենալն առավելություն է այն առումով, որ երեխաներն արդեն գրեթե պատրաստ են առաջին դասարանին:

Արմավիրի «Մանչուկ» նախակրթարանում պարապմունքների դիտարկման ընդհանուր պատկերը միջինից բարձր է: Առավելագույն արտահայտվածություն ունեն *Մեթոդներ, Ուսումնական գործողություններ և Հարցեր* չափանիշները /100.00%/, ինչը վկայում է, որ դաստիարակները արդյունավետ են կազմակերպում պարապմունքներն ու իրենց հարցերով ապահովում են՝ դեպի նպատակ պարապմունքի ճիշտ ընթացքը: Մնացած չափանիշները գտնվում են 75% և բարձր միջակայքում:

Գծապատկեր 1. Արմավիրի «Մանչուկ» նախակրթարանում պարապմունքի դիտարկման տվյալների վերլուծություն



Գծապատկեր 2. Արմավիրի «Մանչուկ» նախակրթարանի երեխաների թեստավորման և վերաթեստավորման տվյալների վերլուծություն



Արմավիր համայնքի «Մանչուկ» նախակրթարանի երեխաների թեստավորման ու վերաթեստավորման արդյունքներին նայելիս (Գծապատկեր 2–ում) տեսնում ենք, որ առավելապես աճ է դրսևորվել *բանավոր խոսքի ընկալում* ենթաոլորտի (7) բազմաբայլ հրահանգների հետևում /30.00%→90.00%/, *տրամաբանություն և մտածողություն* ենթաոլորտի (4) օրինաչափությունների կազմում /40.00%→90.00%/ և *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (10) ժամի ճանաչում /50.00%→90.00%/ ցուցանիշների մասով: Անփոփոխ է մնացել *մանր/նուրբ շարժողական* ենթաոլորտի (12) գրելու տարրական հմտություններ ցուցանիշը:

Նախակրթարան չհաճախող երեխաների թեստավորման ու վերաթեստավորման արդյունքներին նայելիս տեսնում ենք, որ առավելապես աճել են *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (3) թվերի ճանաչում /20.00%→60.00%/ և (9) աջի և ձախի իմացություն /70.00%→100.00%/ ցուցանիշները: Բացասական միտում է եղել *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (6) մաթեմատիկական պատկերացումներ /47.00%→40.00%/ ցուցանիշի մասով: Անփոփոխ է մնացել *վաղ գրաճանաչություն* ենթաոլորտի (8) տառաճանաչություն /0.00%→0.00%/ ցուցանիշի մասով:

Նայելով Գծապատկեր 2-ին՝ կարող ենք տեսնել, որ նախակրթարան հաճախող երեխաների թեստավորման արդյունքները առավելապես գերազանցում են նախակրթարան չհաճախող երեխաների թեստավորման արդյունքներին՝ բացառությամբ *բանավոր խոսքի ընկալում* ենթաոլորտի (7) բազմաբայլ հրահանգների հոտնում /30.00% և 40.00%/ և ցուցանիշի: Առավելագույն տարբերություն է գրացվել *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (3) թվերի ճանաչում /50.00%/ և *տրամաբանություն և մտածողություն* ենթաոլորտի (11) նմանության և տարբերության իմացություն /40.00%/ ցուցանիշների մասով: Տարբերություն չի նկատվում *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (2) տարածական պատկերացումներ և *վաղ գրաճանաչություն* ենթաոլորտի (8) տառաճանաչություն ցուցանիշների մասով:

Համեմատելով նախակրթարան հաճախող ու չհաճախող երեխաների վերաթեստավորման արդյունքները՝ տեսնում ենք, որ գրեթե բոլոր ցուցանիշների մասով նախակրթարան հաճախող երեխաներն ավելի բարձր արդյունք են ապահովել տարվա վերջում, քան չհաճախողները: Առավելապես տարբերվում են հետևյալ ցուցանիշները՝ *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (10) ժամի ճանաչում /70.00%/, (6) մաթեմատիկական պատկերացումներ /50.00%/, (3) թվերի ճանաչում /40.00%/ ցուցանիշների, *տրամաբանություն և մտածողություն* ենթաոլորտի (11) նմանության և տարբերության իմացություն /40.00%/ ցուցանիշի և *տրամաբանություն և մտածողություն* ենթաոլորտի (4) օրինաչափությունների կազմում /45.00%/ ցուցանիշների մասով: Տարբերություն չի նկատվում *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (5) տարրական մաթ. պատկերացումներ, աջի և ձախի իմացություն և *մանր/նուրբ շարժողական* ենթաոլորտի զգայաշարժողական հմտություններ ցուցանիշների մասով:

Գծապատկեր 3: Արմավիրի «Մանչուկ» նախակրթարանի երեխաների տվյալների համեմատությունը ըստ ենթաոլորտների



Գծապատկեր 3-ից տեսնում ենք, որ Արմավիր համայնքի «Մանչուկ» նախակրթարանի երեխաների թեստավորման արդյունքների համեմատ՝ վերաթեստավորման արդյունքներն առավելապես աճել են (3) *բանավոր խոսքի ընկալում* /40.00%→90.00%/ և (2) *տրամաբանություն և մտածողություն* /50.00%→90.00%/ ենթաոլորտների մասով:

Նախակրթարան չհաճախող երեխաների թեստավորման ու վերաթեստավորման արդյունքներին նայելիս (Գծապատկեր 3) տեսնում ենք, որ բոլոր ենթաոլորտներն էլ աճ են ունեցել, իսկ առավելապես աճ է գրանցել (3) *բանավոր խոսքի ընկալում* /40.00%→60.00%/ ենթաոլորտը:

Նայելով Գծապատկեր 3-ին՝ կարող ենք տեսնել, որ նախակրթարան հաճախող երեխաների թեստավորման արդյունքները՝ բոլոր ենթաոլորտների մասով, գերազանցում են նախակրթարան չհաճախող երեխաների թեստավորման արդյունքներին՝ բացառությամբ (3) *բանավոր խոսքի ընկալում* ենթաոլորտի /10.00%/: Թիրախային խմբի արդյունքը առավելապես գերազանցել է ստուգիչ խմբի արդյունքին՝ (2) *տրամաբանություն և մտածողություն* /27.50%/ ենթաոլորտի մասով:

Համեմատելով նախակրթարան հաճախող ու չհաճախող երեխաների վերաթեստավորման արդյունքները՝ տեսնում ենք, որ նախակրթարան հաճախող երեխաներն ավելի բարձր արդյունք են ապահովել, քան չհաճախողները: Առավելապես տարբերվում են հետևյալ ենթաոլորտները՝ (2) *տրամաբանություն և մտածողություն* /42.50%/, (1) *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* /30.00%/ և *բանավոր խոսքի ընկալում* /30.00%/:

5.1.2. «Մեծամորի N1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ («Արևիկ» նախակրթարան)

Նախակրթարանը ստեղծված է դպրոցի հիմքի վրա, ունի երեխաների երկու ավագ խումբ: Ըստ մեկ խմբի համար նախատեսված միկրոծրագրի բյուջեի մեծության՝ համայնքի նախակրթարանը մարզում դասակարգվում է «միջին» միջոցներ (ընտրանքում ներառված մարզի համայնքների դասակարգման ֆինանսական չափանիշ) ունեցող նախակրթարանների շարքին:

Այցելությունների ընթացքում նախակրթարանը գործում էր հետևյալ *մոդելով*.

- ☐ շաբաթական 5 օր,
- ☐ աշխատանքային կարճօրյա ռեժիմ՝ 09:00-13:00,
- ☐ այցելությունների ժամանակ նախակրթարանում աշխատում էր երկու դաստիարակ,
- ☐ երկու դաստիարակներն էլ վերապատրաստված էին,
- ☐ նախակրթարանում ապահովվում էր մեկանգամյա տաք սնունդ,
- ☐ նախակրթարանը ջեռուցվում էր դպրոցի կենտրոնական կաթսայատնից,
- ☐ նախակրթարանը չուներ քնելու հնարավորություն:

Նախակրթարանի ընդհանուր պայմանների նկարագրությունը հետևյալն է.

- ☐ Նախակրթարանին տրամադրված էին խմբասենյակներ, սանհանգույց (առանձնացված չէր ըստ սեռի, սակայն զուգարանակոնքերի միջև բաժանարար դռներ կային), հանդերձարաններ:
- ☐ Խմբասենյակները, սանհանգույցները և հանդերձարանները համապատասխանում էին սահմանված վերանորոգվածության, անվտանգության, երեխաների չափսերին համապատասխանության, հասանելիության և մաքրության պահանջներին (քանի որ Ծրագրի շրջանակներում նախակրթարանում դաստիարակի օգնական չի նախատեսվում, դաստիարակը պարապմունքների ընթացքում չէր հասցնում հետևել սանհանգույցից օգտվելուց հետո երեխաների հիգիենային) (*Տե՛ս Նկարներ 7 և 8*):
- ☐ Նախակրթարանն ապահովված էր սառը մշտական ջրով:
- ☐ Նախակրթարանն ուներ կենտրոնական ջեռուցման համակարգ:

Նկար 7. SU, Մեծամոր, սանհանգույց

Նկար 8. SU, Մեծամոր, խմբասենյակ

Խմբասենյակի և աշխատանքային կենտրոնների պայմանները բավարարում էին սահմանված նորմերին, իսկ հագեցվածության տեսանկյունից՝ այդքան էլ հարուստ չէին (*Տե՛ս Նկարներ 9 և 10*): Խմբասենյակներն ունեին հանդերձապահարաններ, գորգեր, սեղան-աթոռներ, խաղալիքի պահարաններ, գրատախտակներ, հեռուստացույցներ, թվային կրիչներ, էլեկտրական տաքացուցիչ, փոշեկուլ և այլն: Խմբասենյակը բավականին լուսավոր էր: Նախակրթարանի երեխաների սնունդը կազմակերպվում էր դպրոցի ճաշարանում՝ ծնողների միջոցներով (ամսական 1000 դրամ):

Նկար 9. SU, Մեծամոր, հանդերձապահարաններ

Նկար 10. SU, Մեծամոր, պահարան

Ըստ տնօրենի, քանի որ տարածքի մանկապարտեզները ձմռան ամիսներին չէին գործում, աշխատող ծնողների համար երեխաներին պահելը խնդիր էր հանդիսացել: *Նախակրթարանի ստեղծումը* համայնքին հնարավորություն էր տվել երեխաներին ապահովել նախադպրոցական կրթությամբ ու ցերեկային խնամքով նաև ձմռան ամիսներին: Նախակրթարանի գործարկման շնորհիվ երեխաները սահուն անցում կկատարեին դպրոցին. երեխան ո՛չ գիտելիքային, ո՛չ հուզական խոչընդոտների չէր հանդիպի: Բացի դրանից, նախակրթարանը նույն դպրոցի ներսում էր, երեխան հարմարված կլիներ դպրոցի միջավայրին, աշխատողներին և այլն:

Որպես *նախակրթարանի ուժեղ կողմ՝* տնօրենը նշել էր նախակրթարանի կահավորված, գրենական պիտույքներով հագեցած լինելն ու վերապատրաստված մասնագետներ ունենալը: Տեղի մանկապարտեզի հետ համեմատած՝ բացի դաստիարակներից, այստեղ կան նաև սոցաշխատողներ և լոգոպետ: Իսկ որպես թույլ կողմ նշվել էր առավոտյան սննդով չապահովելու փաստը (ռեժիմի հետ կապված):

Նախակրթարանն օգտագործում էր դպրոցի բացօթյա խաղահրապարակը, որի սարքավորումները նոր չէին: Տնօրենը նշել էր, որ մինչև գարուն վերջինս կհամալրվի անհրաժեշտ պարագաներով: Ըստ դաստիարակների ու տնօրենի՝ նախակրթարանի շենքային պայմաններն անթերի էին, քանի որ նոր վերանորոգված էին:

Խմբասենյակներում առանձնացված կենտրոններ չկային, սակայն բոլոր կենտրոնների պարագաներից առկա էին, հագեցվածության տեսանկյունից թույլ էին միայն սպորտի ու բնագիտության կենտրոնները: Նախակրթարանի մի խմբում բացակայում էր դերային խաղի կենտրոնը:

Նախակրթարանում աշխատում էին տնօրենը և երկու դաստիարակ: Տնօրենը նախկինում աշխատել էր որպես հայոց լեզվի ու գրականության ուսուցչուհի: Երկու դաստիարակներն էլ նախկինում չէին աշխատել, իսկ նախակրթարանի գործարկման աշխատանքներին միացել էին հենց սկզբից: Դաստիարակները վերապատրաստվել էին ու տիրապետում էին նախակրթարանի ուսումնական ծրագրի դրույթներին:

Երկու դաստիարակներն էլ աշխատանքային պայմանները նպաստավոր էին համարում:

Մեծամորի նախակրթարանի երկու դաստիարակներն էլ վերապատրաստված էին: Վերապատրասատումը, ըստ դաստիարակների, եղել էր բովանդակալից և շատ հետաքրքիր: Դաստիարակների պնդմամբ, նրանք շատ երգեր, խաղեր ու մանկավարժական հնարքներ են սովորել: Երկուսն էլ ցանկություն էին հայտնել, որ վերապատրաստումը երկար տևեր:

Երկու դաստիարակներն էլ կիրառում էին պարապմունքի անցկացման ինտեգրված սկզբունքը՝ փորձելով նույն թեման ամրապնդել տարբեր առարկաների շրջանակներում: Պարապմունքներն անց էին կացնում խաղերի, վարժությունների միջոցով: Երկու դաստիարակներն էլ կենտրոնանում էին երեխայի զարգացման բոլոր ոլորտների վրա, գնահատում էին խրախուսական մեթոդով (աստղիկներ, հերոս), դասընթացը պլանավորում էին օրական՝ օգտագործելով տարբեր մեթոդական գրքեր:

Դաստիարակներից մեկը չուներ *պարապմունքի* պլան-կոնսպեկտ, իսկ մյուսն ուներ, սակայն բացատրություններն ու պատմումները չէր զուգակցում ցուցադրություններով՝ նկարներ, քարտեր, առարկաներ: Երկու դաստիարակներն էլ չէին հաշվառում ժամանակի գործոնը: Երկու դաստիարակներն էլ երեխաների նկատմամբ ցուցաբերում էին անհատական մոտեցում և գենդերային հարցերում երեխաների միջև տարբերություն չէին դնում:_Դաստիարակները չէին օգտագործում երեխայի զարգացման դինամիկայի դիտարկման և գնահատման թերթիկներ:

Ըստ դաստիարակների՝ այս խմբերում ամենաուժեղ երեխաները գիտեին թվերը (մի խմբում երեխա կա, որ հաշվում է մինչև 100-ը), մի քանի տառ, տարբերակում էին ընտանի ու վայրի կենդանիներին, գիտեին արտասանել, երգել և այլն, իսկ թույլ երեխանները այս ամենը դեռ նոր էին սովորում: Ըստ երկու դաստիարակների՝ երեխաների ընդունակությունները, սեռից կախված, չէին տարբերվում:

Ծնողները որոշակի մասնակցություն ունեին նախակրթարանի կյանքում, մասնավորապես ծնող-կոմիտեի կազմակերպմամբ նախակրթարանում ծնողներն իրականացնում էին մաքրության ու պարագաների դասավորման աշխատանքներ, հանդեսների ժամանակ օգնում էին ձեռակերտ իրերի պատրաստման հարցերում:

Ըստ դաստիարակների և տնօրենի՝ *համայնքի ընտանիքների սոցիալ-տնտեսական վիճակը* բավարար էր: Ինչ վերաբերում էր նրան, թե ինչպես էր *ընտանիքի/ համայնքի սոցիալ-տնտեսական վիճակն* ազդում երեխայի զարգացվածության վրա, դաստիարակները կարծում էին, որ այն անուղղակիորեն էր ազդում, նախակրթարանը որոշ հարցերում այդ տարբերությունները շտկելու միջոց էր հանդիսանում, քանի որ բոլոր երեխաների համար ստեղծվել էին միևնույն լավ պայմանները: Տնօրենը նույնպես գտնում էր, որ համայնքի սոցիալ-տնտեսական վիճակն անուղղակիորեն ազդում էր երեխաների զարգացվածության վրա, սակայն նախակրթարանն օգնում էր, որ երեխաները «հավասար» լավ պայմաններում զարգանային:

Ծնողների հետ անցկացված ֆոկուս խմբային քննարկման ժամանակ ներկաների ընտանիքները բաղկացած էին 3-10 հոգուց, չկային նպաստառու ընտանիքներ: Հիմնականում հայրերն էին աշխատում (աշխատանքի բնույթը՝ արտագնա ու ներքին, հավասար բաշխվածությամբ), մայրերը տնային տնտեսուհիներ էին: Երկու ընտանիքներում աշխատում էին նաև մայրերը: Պարզ էր դարձել, որ երեխաների՝ նախակրթարան հաճախելու հիմնական նպատակը կրթված ու դպրոցին պատրաստ լինելն էր: Ծնողները գոհ էին դաստիարակներից՝ երեխայի կարգապահության, գիտելիքի, անվտանգության և այլ հարցերում:

Տվյալ ընտանիքների երեխաները տանը հիմնականում հավաքում էին իրենց ետևից, օգնում էին տնային պարզ գործերում: Փոքրամասնություն էին այն ընտանիքները, երբ երեխաները ինքնուրույն գնումներ էին կատարում: Մեծ մասամբ, երեխաներն ինքնուրույն էին միայն սնվելու հարցում, իսկ հիգիենայի և այլ հարցերում մայրը պարտադիր օգնում էր:

Երեխայի խնամքի ու դաստիարակության պատասխանատվությունը կիսում էին մայրերն ու հայրերը, բացի այն դեպքերից, երբ հայրն արտագնա աշխատանքի էր, այս դեպքերում խնամքը ամբողջությամբ մայրն էր կատարում, իսկ դաստիարակությունը երկուսով (հոր դեպքում երբեմն նաև հեռախոսով): Մայրերի բացակայության ժամանակ երեխային խնամում էին հիմնականում տատիկները: Երեխայի առօրյան հիմնականում պլանավորում էին մայրերը՝ հնարավորության դեպքում հաշվի առնելով երեխայի ցանկությունները:

Ծնողները հիմնականում գտնում էին, որ ծնողի որոշումներն ու պահանջները պետք է բացատրվեին երեխային:

Երեխայի արարքներից պատժելի էին սուտը, համակարգչային խաղերով երկար խաղալը, փոքրերին ծեծելը, առանց զգուշացնելու տնից դուրս գալը և այլն: Պատժում էին սիրած բաներից զրկելով՝ փորձելով հնարավորինս հոգեբանորեն ճնշել երեխային (սակայն քննարկման ժամանակ նշվել էր նաև, որ երբեմն ձայն էին բարձրացնում երեխայի վրա):

Քննարկմանը մասնակցող ծնողների երեխաների կեսը հաճախել էին մանկապարտեզ, ինչը երեխային ինքնուրույնություն ու շփում էր տվել, լեզուներ էին սովորել: *Հատուկ կարիքներով երեխայի ծնողի* հետ ունեցած հարցազրույցից պարզ էր դարձել, որ երեխան հաճախել էր մանկապարտեզ, սակայն քանի որ այնտեղ լոգոպետ չէր եղել, երեխային տեղափոխել էին նախակրթարան:

Ծնողները կարծում էին, որ երեխայի զարգացման վրա մեծ ազդեցություն ունեին ուսուցումը (ուսուցանման մեթոդներ, թեմաներ), ընտանիքը (ծնողների ազդեցությունը):

Քննարկմանը մասնակցած ծնողները որոշակի խմբակների առկայության և սննդի բարելավման ցանկություն էին հայտնել: Ընդհանուր առմամբ, ծնողները շատ գոհ էին նախակրթարանի աշխատանքից ու այն հնարավորությունից, որ իրենց երեխան դպրոցին ինտեգրված կգնար առաջին դասարան:

Այս նախակրթարանի գործարկման համար դրամական ներդրում կատարել էր միայն համայնքը, իսկ ծնողները կատարել էին ընթացիկ ոչ դրամական աջակցություն՝ «ներկիր ինքդ», մատիտներ, ծեփամածիկ (պլաստիլին): Ծնողները լրացուցիչ վճարում էին միայն սննդի համար՝ ամսական 1000 դրամ:

Ծրագրի շարունակականության հետ կապված՝տնօրենը վտանգ չէր տեսնում, քանի որ պահանջարկը շատ մեծ էր:

Տարվա վերջի այցելության նկարագրությունը բերված է ստորև:

Աշխատանքային կենտրոնների մասով տարվա սկզբի համեմատ ավելացել են սպորտի և բնագիտության կենտրոնների պարագաները, տարբեր ձեռակերտ իրեր, պաստառներ (Տե՛ս Նկարներ 11 և 12):

Տնօրենը նշել է, որ գույքը նորացնելու ու թարմացնելու ցանկություն ունեն, իսկ գրենական պիտույքները դպրոցն է գնում (Տարվա սկզբում հատուկ կարիքներով ծնողը նշել էր, որ իրենք են տանում գրենական պիտույքներ): Նա նաև ցանկություն է հայտնել, որ ուղեցույցեր ու մեթոդական գրականություն տրամադրեն իրենց:

Դաստիարակներից մեկը տարվա վերջում հարցազրույցի ժամանակ նշել է, որ նախակրթարանում ունեն նաև օգնական ու հավաքարար, որ զբաղվել է մաքրության հարցերով ու երեխաներին օգնել է սանհանգույցից օգտվելիս:

Երեխաներ են եղել, որ նախկինում լացել են, ամաչկոտ են եղել, սակայն տարվա վերջի այցելության ժամանակ ծնողները նշել են, որ երեխաները սիրով են գալիս նախակրթարան:

Հատուկ կարիքներով երեխայի հետ աշխատել է լոգոպետը և արդյունքը տեսանելի է եղել: Ընդհանուր առմամբ, ըստ դաստիարակների՝ երեխաները գրաճանաչ են, գիտեն թվերը, բառերը վանկատում են, ծանոթ են դպրոցի կարգուկանոնին: Ուժեղ երեխաներ ունեն, որ եռանիշ թվեր են գումարում-հանում, գիտեն ձայնավոր-բաղաձանը և այլն: Երեխաներ կային, որ շատ ամաչկոտ էին ու չէին խոսում, իսկ տերեվերջին նրանք ակտիվացել են ու ամբողջությամբ ընդգրկվում են պարապմունքին:

Նկար 11. ՏՎ, Մեծամոր, տեխնիկական կենտրոն

Նկար 12. ՏՎ, Մեծամոր, խմբասենյակ

Դաստիարակներն ավելի փորձառու էին դարձել, կիրառում էին փորձեր, խաղեր, վարժություններ: Դաստիարակներից մեկը տարվա սկզբում նշել էր, որ կցանկանար, որ պատրաստի դասի պլան տրամադրվեր, իսկ տարեվերջում նշել է, որ չէր ցանկանար, որ նման ծրագիր լիներ, քանի որ կսահմանափակեր ստեղծագործ մոտեցումը, իսկ այսպես ինքը օգտվում է տարբեր գրքերից ու ծաղկաքաղ անում լավագույնը՝ հարմարեցնելով իր խմբի երեխաների ցանկություններին ու կարողություններին:

Ինչ վերբերում է ըստ սեռի երեխաների տարբերությանը՝ դաստիարակներից մեկը նշել է, որ տարբերություն չկա, մյուսն էլ, թե՝ տարբերությունը դրսևորվել է միայն ավարտական հանդեսի ժամանակ՝ աղջիկներն ավելի լավ են երգել:

Տարվա վերջում ծնողները փաստում են, որ երեխաները նոր գիտելիքներ են ստացել, պատրաստ են դպրոցին, ծանոթ են դպրոցի անցուդարձին: Այս երեխաները, մեծ երեխաների հետ համեմատած (նույն տարիքում), ավելի շատ բան գիտեն և ըստ ծնողների դա նախակրթարանի շնորհիվ է: Ծնողներին նախակրթարանը տվել է ազատ ժամանակ՝ կենցաղի հոգսերը հոգալու, աշխատանքի տեղավորվելու:

Գծապատկեր 4-ում ներկայացված պարապմունքի դիտարկման տվյալները վկայում են այն մասին, որ Մեծամորի «Արևիկ» նախակրթարանում ևս ծրագիրը հաջող է իրականացվում: Առավելագույն արտահայտվածություն ունեն *Ուսումնական գործողություններ, Հարցեր և Երեխաների*

ակտիվություն չափանիշները /100.00%/: Մնացած չափանիշները գտնվում են 78.13% - 96.43% միջակայքում:

Գծապատկեր 4. Մեծամորի «Արևիկ» նախակրթարանում պարապմունքի դիտարկման տվյալների վերլուծություն



Գծապատկեր 5. Մեծամորի «Արևիկ» նախակրթարանի երեխաների թեստավորման և վերաթեստավորման տվյալների վերլուծություն



Գծապատկեր 5–ում Մեծամորի «Արևիկ» նախակրթարանի երեխաների թեստավորման ու վերաթեստավորման արդյունքներին նայելիս տեսնում ենք, որ առավելապես աճ է դրսևորվել *տրամաբանություն և մտածողություն* ենթաոլորտի (4) օրինաչափությունների կազմում /36.36%→86.36%/ և *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (3) թվերի ճանաչում /54.55%→81.82%/ ցուցանիշների մասով: Անփոփոխ, բայց առավելագույն սանդղակում է մնացել *մանր/նուրբ շարժողական* ենթաոլորտի (13) զգայաշարժողական հմտություններ /100.00%→100.00%/ ցուցանիշը:

Ստուգիչ խմբի երեխաների թեստավորման ու վերաթեստավորման արդյունքներին նայելիս տեսնում ենք, որ փոփոխությունների չի ենթարկվել միայն *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (9) աջի և ձախի իմացություն ցուցանիշը /72.13%→72.13%/: Բացասական փոփոխություն է գրանցվել *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (3) թվերի ճանաչում /27.27%→18.18%/ և *մանր/նուրբ շարժողական* ենթաոլորտի (13) զգայաշարժողական հմտություններ /90.91%→61.36%/ ցուցանիշների մասով, իսկ մնացած բոլոր ցուցանիշների դեպքում վերաթեստավորման արդյունքները բարձր են եղել թեստավորման արդյունքներից: Ավելին, առավելագույն աճը դիտվել է *տրամաբանություն և մտածողություն* ենթաոլորտի (11) նմանության և տարբերության իմացություն /27.27%→63.64%/ ցուցանիշի մասով:

Նայելով Գծապատկեր 6-ին՝ կարող ենք տեսնել, որ Մեծամորի համայնքի «Արևիկ» նախակրթարան հաճախող երեխաների թեստավորման արդյունքները՝ ցուցանիշների մասով, հիմնականում գերազանցում են ստուգիչ խմբի երեխաների թեստավորման արդյունքներին՝ բացառությամբ *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (6) մաթեմատիկական պատկերացումներ /6.82%/ և (10) ժամի ճանաչում /7.09%/ ցուցանիշների: Հատկապես, տարբերությունը մեծ է *վաղ գրաճանաչություն* ենթաոլորտի (1) *տպագիր տեքստ* /45.45%/ ցուցանիշի մասով: *Տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (2) տարածական պատկերացումներ /0.00%/, *տրամաբանություն և մտածողություն* ենթաոլորտի (4) օրինաչափությունների կազմում /36.36%/ և *մանր/նուրբ շարժողական* ենթաոլորտի (12) գրելու տարրական հմտություններ /0.00%/ ցուցանիշների մասով՝ հաճախող ու չհաճախող երեխաների մոտ տարբերություն չկա:

Համեմատելով նախակրթարան հաճախող ու չհաճախող երեխաների վերաթեստավորման արդյունքները՝ տեսնում ենք, որ նախակրթարան հաճախող երեխաները բոլոր ցուցանիշների մասով ավելի բարձր արդյունք են ապահովել, քան չհաճախողները: Առավելապես տարբերվում են հետևյալ ցուցանիշները՝ *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (3) թվերի ճանաչում /63.64%/, *տրամաբանություն և մտածողություն* ենթաոլորտի (4) օրինաչափությունների կազմում /40.91%/ և *մանր/նուրբ շարժողական* ենթաոլորտի (13) զգայաշարժողական հմտություններ /38.64%/:

Գծապատկեր 6: Մեծամորի «Արևիկ» նախակրթարանի երեխաների տվյալների համեմատությունը ըստ ենթաոլորտների



Մեծամորի համայնքի «Արևիկ» նախակրթարանի երեխաների թեստավորման ու վերաթեստավորման արդյունքներին նայելիս (Գծապատկեր 6), տեսնում ենք, որ առավելապես աճ է դրսևորվել (2) *տրամաբանություն և մտածողություն* /52.27%→90.91%/ և (1) *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* /43.52%→67.42%/ ենթաոլորտների մասով:

Գծապատկեր 6-ից տեսնում ենք, որ ստուգիչ խմբի երեխաների թեստավորման ու վերաթեստավորման արդյունքները աճել են՝ բացառությամբ (5) *մանր շարժողական* /45.45%%→34.09%/ ենթաոլորտի: Առավելապես աճել է (2) *տրամաբանություն և մտածողություն* /31.82%→54.55%/ և վաղ գրաճանաչություն /20.45%→40.91%/ ենթաոլորտները:

Նայելով Գծապատկեր 6-ին՝ կարող ենք տեսնել, որ նախակրթարան հաճախող երեխաների վերաթեստավորման արդյունքները բոլոր ենթաոլորտների մասով, գերազանցում են նախակրթարան չհաճախող երեխաների թեստավորման արդյունքներին: Առավելապես տարբերվում է (4) *վաղ գրաճանաչություն* /22.73%/ և (2) *տրամաբանություն և մտածողություն* /20.45%/ ենթաոլորտների մասով:

Համեմատելով նախակրթարան հաճախող ու չհաճախող երեխաների վերաթեստավորման արդյունքները՝ տեսնում ենք, որ նախակրթարան հաճախող երեխաներն ավելի բարձր արդյունք են ապահովել ստուգիչ խմբի երեխաներից: Առավելապես տարբերվում է (2) *տրամաբանություն և մտածողություն* /36.36%/ ենթաոլորտը:

5.1.3. «Ոսկեհատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Նախակրթարանը ստեղծված է դպրոցի հիմքի վրա, ունի երեխաների մեկ խումբ: Ըստ մեկ խմբի համար նախատեսված միկրոծրագրի բյուջեի մեծության՝ համայնքի նախակրթարանը մարզում դասակարգվում է «մեծ» միջոցներ (ընտրանքում ներառված մարզի համայնքների դասակարգման ֆինանսական չափանիշ) ունեցող նախակրթարանների շարքին:

Այցելությունների ընթացքում նախակրթարանը գործում էր հետևյալ *մոդելով*.

- ☐ շաբաթական 5 օր,
- ☐ աշխատանքային կարճօրյա ռեժիմ՝ 09:00-13:00,
- ☐ այցելությունների ժամանակ նախակրթարանում աշխատում էր մեկ դաստիարակ,
- ☐ դաստիարակը վերապատրաստված էր,
- ☐ նախակրթարանում ապահովվում էր մեկանգամյա սառը սնունդ,
- ☐ նախակրթարանը ջեռուցվում էր դպրոցի կենտրոնական կաթսայատնից,
- ☐ նախակրթարանը չուներ քնելու հնարավորություն:

Նախակրթարանի ընդհանուր պայմանների նկարագրությունը հետևյալն է.

- ☐ Նախակրթարանին տրամադրված էր խմբասենյակ, խաղասենյակ, սանհանգույց (ցանկալի էր, որ առանձնացված լիներ ըստ սեռի և զուգարանակոնքերի հատվածում դռներ լինեին:
- ☐ Խմբասենյակը, խաղասենյակը, հանդերձասենյակը և սանհանգույցը համապատասխանում էին սահմանված վերանորոգվածության, անվտանգության, երեխաների չափսերին համապատասխանության, հասանելիության և մաքրության պահանջներին (քանի որ Ծրագրի շրջանակներում նախակրթարանում դաստիարակի օգնական չի նախատեսվում, դաստիարակը պարապմունքների ընթացքում չէր հասցնում հետևել սանհանգույցից օգտվելուց հետո երեխաների հիգիենային) (*Տե՛ս Նկարներ 13 և 14*):
- ☐ Նախակրթարանն ապահովված էր սառը մշտական ջրով:
- ☐ Նախակրթարանն ուներ կենտրոնական ջեռուցման համակարգ:

Նկար 13. SU, Ոսկեհատ, սանհանգույց **Նկար 14. SU, Ոսկեհատ, խմբասենյակ**

Խմբասենյակի, խաղասենյակի և աշխատանքային կենտրոնների պայմանները բավարարում էին սահմանված նորմերին, իսկ հագեցվածության տեսանկյունից՝ այդքան էլ հարուստ չէին (*Տե՛ս Նկարներ 15 և 16*): Նախակրթարանն ուներ հանդերձապահարաններ, գորգ, սեղան-աթոռ, խաղալիքի պահարաններ, գրատախտակ, հեռուստացույց, թվային կրիչ, փոշեկուլ և այլն: Խմբասենյակն ու խաղասենյակը բավականին լուսավոր էին: Նախակրթարանի երեխաներին տրվում էր մեկանգամյա սառը սնունդ:

Նկար 15. SU, Ոսկեհատ, խաղասենյակ **Նկար 16. SU, Ոսկեհատ, պահարան**

Ըստ *տնօրենի*՝ նախակրթարանը ստեղծվել էր, որպեսզի երեխաներին հասցնեին այն մակարդակին, որ առաջին դասարանում դժվարություններ չունենային, պատրաստված լինեին դպրոցին, բացի դա, նախակրթարանի պահանջարկ կար, քանի որ համայնքի մանկապարտեզում մեկ խմբում տարբեր տարիքի երեխաներ էին հաճախում:

Նախակրթարանի ստեղծումից, ըստ տնօրենի, ծնողները շատ գոհ էին, քանի որ երեխան չէր մնում տանը, ուներ զբաղվածություն, գրագետ խոսել էր սովորում, նիստուկաց էր սովորում, շփվում էր իր հասակակիցների հետ և ի վերջո պատրաստվում էր դպրոցին:

Նախակրթարանի ուժեղ կողմ, ըստ տնօրենի, կարելի էր համարել այն, որ դպրոցին պատրաստ երեխաներ կունենային, իսկ թույլ կողմ՝ անվճար սննդի բացակայությունը (Ծնողներն ասել էին, որ մեկ բուլկին բավարար էր, բայց տնօրենը ցանկանում էր տաք ճաշ ապահովել: ՄԱԿ-ի «Տաք սնունդ» ծրագրին պետք էր միանային, համայնքի ղեկավարը բոլոր պարագաները գնել էր, իրենք պատրաստ էին, բայց ծրագիրը հետաձգվում էր):

Նախակրթարանի շենքային պայմանները բարվոք էին, միայն ծնողները ցանկություն էին հայտնել տաք սննդի հարցը կարգավորվելու:

Դաստիարակը խորին հարցազրույցի ժամանակ նշել էր, որ աշխատանքային պայմանները լավ էին, սակայն աշխատաժամանակն էր քիչ (խմբում 32 երեխա ունեին, դաստիարակը միայնակ դժվարանում էր կազմակերպել նախակրթարանի ուսումնադաստիարակչական մասն ու ապահովել հիգիենայի հարցերը (նկատառումը դուրս էր բերվել պարապմունքի դիտարկումից)):

Խմբասենյակում դեռևս առանձնացված կենտրոններ չկային, սակայն բոլոր կենտրոնների պարագաներից առկա էին: Նախակրթրանում բացակայում էին միայն խոհարարության ու բնագիտության կենտրոնների պարագաները: Նախակրթարանն օգտագործում էր դպրոցի բացօթյա խաղահրապարակը միայն զբոսնելու համար:

Նախակրթարանում աշխատում էին *տնօրենը* և մեկ *դաստիարակ:* Դաստիարակը նախկինում աշխատել էր մանկապարտեզում՝ որպես դաստիարակչուհի, այնուհետև Էջմիածնի քաղաքապետարանում՝ որպես հոգեբան: Նա վերապատրաստվել էր ու տիրապետում էր նախակրթարանի ուսումնական ծրագրի դրույթներին: Տնօրենն աշխատել էր որպես գիտաշխատող, դպրոցում՝ որպես կազմակերպիչ, այնուհետև՝ տնօրեն:

Վերապատրաստումն անցել էր շատ հետաքրքիր: Դաստիարակը նշել էր, որ թեև հիմնական գիտելիքներ ուներ, սակայն վերապատրաստման ժամանակ ավելի պատկերավոր էր եղել գիտելիքը, քանի որ խմբային աշխատանքներ էլ էին արել: Դաստիարակի միակ նկատառումն այն էր, որ 32 հոգանոց խմբի մեջ նա միայնակ ի վիճակի չէր պարապմունք անցկացնել ու բավարարել երեխաների հիգիենայի և այլ պահանջմունքները, երեխայակենտրոն ուսուցումը հնարավոր էր իրականացնել միայն այն դեպքում, եթե օգնական լիներ կամ երեխաների քանակը քիչ լիներ:

Դաստիարակը չուներ պարապմունքի պլան-կոնսպեկտ, չէր հաշվառվում ժամանակի գործոնը: Պարապմունքների ընթացքում չէին կիրառվում դիդակտիկ նյութեր, զննական պարագաներ, բացակայում էին խմբային աշխատանքները, համագործակցության միջոցով գիտելիքների ձեռքբերումը, չէր ապահովվում երեխաների կենսափորձի կիրառումը: Երեխաների նկատմամբ ցուցաբերվում էր անհատական մոտեցում: Դաստիարակը չէր օգտագործում երեխայի զարգացման դինամիկայի դիտարկման և գնահատման թերթիկներ: Գենդերային հարցերում երեխաների միջև տարբերություն չէր դնում (դուրս է բերվել պարապմունքի դիտարկումից):

Դաստիարակը կիրառում էր պարապմունքի անցկացման ինտեգրված սկզբունքը՝ փորձելով նույն թեման ամրապնդել տարբեր առարկաների շրջաններում: Պարապմունքներն անց էր կացնում խաղերի, խմբային աշխատանքների միջոցով: Դաստիարակը կենտրոնանում էր երեխայի

զարգացման ուսումնադաստիարակչական ու հուզական ոլորտների վրա, իրականացնում էր խմբային գնահատում, դասընթացը պլանավորում էր շաբաթվա կտրվածքով (դուրս է բերվել դաստիարակի հետ անցկացված խորին հարցազրույցից):

Դաստիարակը պնդում էր, որ ամենաուժեղ երեխաները նույնիսկ կարող էին առաջին դասարան գնալ, իսկ թույլերն էլ նույնիսկ տարրական շփման ձևերը չգիտեին: Ըստ դաստիարակի՝ երեխաների ընդունակությունները, սեռից կախված, տարբերվում էին. աղջիկներն ավելի ակտիվ էին:

Ծնողները հաճախ գալիս էին նախակրթարան ու տեղեկանում երեխաների առաջընթացի, խնդիրների ու նախակրթարանի առօրյայի մասին:

Տնօրենի կարծիքով, համայնքի *ընտանիքների սոցիալ-տնտեսական վիճակը* հիմնականում բավարար էր: Ըստ դաստիարակի՝ համայնքում շատ կային մասնագիտական կրթություն չունեցող ծնողներ:

Տնօրենը պնդում էր, որ *համայնքի սոցիալ-տնտեսական վիճակն* ազդում էր երեխաների զարգացվածության վրա, սակայն իրենք ամեն ինչ անում էին, որ այդ ազդեցությունը մինիմալի հասցնեին: Դաստիարակը նույնպես նշել էր ուղղակի ազդեցության մասին և ի հավելումն տնօրենի կարծիքի՝ նշել էր, որ երեխաներ կային, որ բղավելով էին իրար հետ խոսում, շփման կանոններ չգիտեին:

Ծնողների հետ անցկացված ֆոկուս խմբային քննարկման ժամանակ ներկաների ընտանիքները բաղկացած էին 4-11 հոգուց, չկային նպաստառու ընտանիքներ: Հիմնականում հայրերն աշխատում էին, մայրերը տնային տնտեսուհիներ էին, բացառությամբ երկու դեպքի՝ մի դեպքում մայրն ուսանող էր, մյուս դեպքում՝ մայրը ֆիզարձակուրդի մեջ էր գտնվում: Մեկ ընտանիքում աշխատում էր նաև մայրը: Մեկ ընտանիքում պապիկը զբաղվում էր հողակտորի մշակմամբ: Երեխաների՝ նախակրթարան հաճախելու հիմնական նպատակը կրթված ու դպրոցին պատրաստ լինելն էր: Ծնողները գոհ էին դաստիարակներից՝ երեխայի կարգապահության, գիտելիքի, անվտանգության և այլ հարցերում:

Տվյալ ընտանիքների երեխաները տանը հիմնականում հավաքում էին իրենց ետևից, օգնում էին տնային պարզ գործերում: Ֆոկուս խմբին մասնակցած ծնողներից մեկը նշել էր, որ երեխան նաև գնումներ էր կատարում, իսկ մեկ մեկ այլ ծնող՝ երեխան տանը պարտականություններ չուներ: Մեծ մասամբ, երեխաներն ինքնուրույն էին միայն սնվելու, հագնվելու, լվացվելու հարցերում, մայրը միշտ վերահսկում էր երեխային, իսկ, օրինակ, լոգանքի, վարսերը հարդարելու պարագայում մայրը պարտադիր օգնում էր: *Սոցիալապես անապահով երեխայի ծնողի* հետ ունեցած հարցազրույցից պարզ էր դարձել, որ մայրը հիմնականում ինքնուրույնություն չէր տալիս, նույնիսկ սննդի և հագնվելու հարցերում:

Երեխայի խնամքի պատասխանատուները հիմնականում մայրերն էին, երբեմն օգնում էին նաև հայրերն ու տատիկները: Դաստիարակության հարցով երեխաների հետ ծնողները հավասարապես էին զբաղվում: Մայրերի բացակայության ժամանակ երեխային խնամում էին

հիմնականում տատիկները, մի դեպքում նաև հայրիկը, մեկ այլ դեպքում նաև տեզոր կինը, սակայն հիմնականում բացակայությունները հաճախակի բնույթ չէին կրում: Ծնողները տնից բացակայում էին հիմնականում հետևյալ պատճառներով՝ աշխատանք, ժողովներ, միջոցառումներ և այլն: Երեխայի առօրյան հիմնականում պլանավորում էին մայրերը՝ հնարավորության դեպքում հաշվի առնելով երեխայի ցանկությունները:

Ծնողները հիմնականում գտնում էին, որ ծնողի որոշումներն ու պահանջները պետք էր բացատրել երեխային: *Սոցիալապես անապահով երեխայի ծնողի* հետ ունեցած հարցազրույցից պարզ էր դարձել, որ մայրը հիմնականում աշխատում էր խոսքով բացատրել երեխային, սակայն եղել էին պահեր, որ նրա հոգեկան-հուզական վիճակը թույլ չի տվել ամեն ինչ բացատրելու: *Հատուկ կարիքներով երեխայի ծնողի* հետ ունեցած հարցազրույցից պարզ էր դարձել, որ քանի որ երեխան խոսքի ճիշտ կառուցման խնդիր ուներ, մայրն ամեն ինչ խոսքով անպայման բացատրում էր:

Երեխայի արարքներից պատժելի էին սուտը, համակարգչի առաջ երկար մնալը, փողոցից բառեր «տուն բերելը» և այլն: Հիմնականում պատժելու միջոցներն էին՝ երեխայի հետ զրուցել-բացատրելը, անկյուն կանգնեցնելը, սիրած զբաղմունքից զրկելը: Կային նաև ծնողներ, որոնք նաև պատժում էին երեխային ջղայնանալով, սպառնալով, օրինակ՝ նկարչության չտանել կամ «պապային կասեմ»-ով, մի դեպքում նաև տանը «լացի սենյակ» ունեին, ուր երեխան առանձնանում էր ու լաց լինում մինչև հանգստանալը:

Քննարկմանը մասնակցող ծնողների երեխաների մեծամասնությունը հաճախել էր մանկապարտեզ, պարզապես մանկապարտեզի 2 խմբերը խառը խմբեր էին եղել՝ 2.5-5 տարեկանների համար նախատեսված, ու դաստիարակները դժվարացել էին միասնական թեմա պարապել՝ տարբեր տարիքային խմբեր ունենալու պատճառով: Մանկապարտեզում երեխաները սովորել էին շփվել, երգել, արտասանել ոտանավորներ, պատմել հեքիաթներ, հարմարվել կարգուկանոնին, ձեռք բերել ինքնուրույնություն: Դա էր պատճառը, որ նախակրթարան էին ընդունվել հիմնականում համայնքի մանկապարտեզ հաճախած երեխաները (մանկապարտեզի դռանը նույնիսկ նախակրթարանի բացման մասին հայտարարություն էր փակցված եղել): *Սոցիալապես անապահով երեխայի ծնողի* հետ ունեցած հարցազրույցից պարզ էր դարձել, որ մայրը երեխային մանկապարտեզ այլևս չէր ուղարկել նախ վարձի, հետո էլ հեռավորության պատճառներով: *Հատուկ կարիքներով երեխայի ծնողի* հետ ունեցած հարցազրույցից պարզ էր դարձել, որ քանի որ մակապարտեզի խումբը խառը տարիքային խումբ էր և քանի որ իր երեխան խոսքի խնդիր ուներ, ավելի նպատակահարմար էր գտել երեխային տանել մեկ տարիքային խումբ ունեցող նախակրթարան, որ երեխան իր տարիքի երեխաների հետ շփվի ու խոսքը զարգացնի:

Ծնողները կարծում էին, որ երեխայի զարգացման վրա մեծ ազդեցություն ունեին ընտանիքն (ծնողների ազդեցությունը) ու սոցիալ-տնտեսական պայմանները:

Քննարկմանը մասնակցած ծնողները տաք սննդի կազմակերպման ցանկություն էին արտահայտել, որի դեպքում օրական երկու ծնող կկարողանային գալ նախակրթարան ու հետևել երեխաներին սնվելու հարցում: Ընդհանուր առմամբ, ծնողները շատ գոհ էին նախակրթարանի աշխատանքից ու այն հնարավորությունից, որ իրենց երեխան դպրոցին նախապատրաստված կլինի: *Սոցիալապես*

անապահով երեխայի ծնողը խորին հարցազրույցի ժամանակ սպորտային որևէ խմբակի ու գրականության (թե ինչպես զբաղվել ու շփվել 21-րդ դարի երեխայի հետ) առկայության ցանկություն էր արտահայտել:

Նախակրթարանի գործարկման համար ներդրում կատարել էր միայն համայնքը՝ դրամական: Սակայն *սոցիալապես անապահով ծնողը* խորին հարցազրույցի ժամանակ նշել էր՝ սկզբում մատիտ-ալբոմ էին ուղարկել նախակրթարան, սակայն դաստիարակն ասել էր, որ նախակրթարանը երեխաներին կապահովի նման պարագաներով և բերելու կարիք չկար:

Ֆոկուս-խմբային քննարկումից պարզ էր դարձել, որ երեխաներն իրենք էին ձգտում, որ ծնողներն իրենց նոր գիտելիքներ տային. սովորելու ձգտում ունեին:

Ծրագրի շարունակականության հետ կապված տնօրենը վտանգ չէր տեսնում, քանի որ պահանջարկ կար:

Տարվա վերջի այցելության նկարագրությունը ներկայացված է ստորև:

Շենքային պայմանները բարեկարգ են, սակայն դաստիարակը նշել է, որ խոնավության հետ կապված խնդիր ունեն, ինչը կբերի նրան, որ մոտ ժամանակներում վերանորոգման կարիք կունենան: Նկատվել է նաև, որ սանհանգույցում հիգիենիկ թղթերը երեխաների հասակից բարձր են տեղադրված (Տես՝ Նկար 17): Ծնողները նշել են, որ երբեմն ջրի խնդիր են ունենում, և քանի որ նույնիսկ բաժակների հատված էլ չունեն, երեխաներն իրենց հետ փոքրիկ շշերով ջրեր են բերում:

Աշխատանքային կենտրոններից տարվա սկզբից չի ստեղծվել խոհարարության անկյունը, պարագաներով չի համալրվել նաև բացօթյա խաղահրապարակը: Դաստիարակն ու տնօրենը նշել են, որ աշխատանքային կենտրոններում պարագաների համալրման կարիք ունեն: Խմբասենյակում ավելացել էին ձեռակերտ զարդարանքներ *(Տես՝ Նկար 18)*:

Տնօրենը նշել է, որ դաստիարակը օգնական ունենալու հարց է բարձրացրել (այս հարցին նաև անդրադարձել են ծնողները ֆոկուս խմբային քննարկման ժամանակ), քանի որ 32 երեխայի հետ դժվար է և՛ պարապել, և՛ հոգալ սանհանգույցի հարցերը: Սակայն հարցը չի լուծվել, քանի որ ծրագրով նախատեսված չի եղել: Այժմ աջակցություն են ակնկալում, որ 30 և ավելի երեխա ունեցող խմբերի համար գոնե դաստիարակ նախատեսվի: Բացի այդ, դաստիարակի աշխատավարձի հետ կապված խնդիր են ունեցել, քանի որ համայնքը չի օգնել: Օգնություն են ցուցաբերել ծնողները՝ իրենց նախաձեռնությամբ (ամսական վարձավճարը 3000 ՀՀ դրամ է, իսկ սննդի համար վճարում են ամեն շաբաթ՝ կախված նրանից, թե ինչ է ուտում երեխան), որի միջոցով նաև տարվա ընթացքում թարմացվել են գրենական պիտույքները: Սննդի մասով, տնօրենը նշել է, որ եկող տարի արդեն կանցնեն «Տաք սնունդ» ծրագրին, և երեխաներին տաք սննդով կապահովեն:

Տնօրենը նշել է, որ հարկ եղած դեպքում դաստիարակին փոխարինում է փոխարինող դաստիարակը (մեկ օր դաստիարակը հարգելի պատճառով բացակայել էր և նրան փոխարինել էր փոխարինող դաստիարակը): Ծնողները քննարկման ժամանակ նշել են, որ մայիս ամսին դաստիարակը թոքաբորբով հիվանդ է եղել, ջերմության մեջ մի կերպ ներկայացել է պարապմունքներին, փոխարինող չի ունեցել:

Դաստիարակը նշել է, որ երեխաները տարվա սկզբում բարձիթողի վիճակում էին, իսկ տարվա վերջում արդեն իրենց պահվածքն է կարգավորվել, գիտելիքների մակարդակն է բարձրացել՝ տառաճանաչ են, թվերը գիտեն, հիմնականում բոլորի մոտ աճ է նկատվել: Ծնողները նշել են, որ երեխաները ճանաչում են տառերը, գիտեն ձայնավոր-բաղաձայնը, թվերը, գումարում-հանում են անում, երբեմն էլ ծնողներին են ուղղում («ղըրգըմ եմ» չի, մամա, այլ ուղարկում եմ, «վառոտ» չի, այլ՝ դարպաս):

Հատուկ կարիքներով երեխայի ծնողը նշել է, որ նախակրթարանում երեխայի հատուկ կարիքների համար միջոցներ չեն կիրառվում (օրինակ, այլ դպրոցների նման լոգոպետը չի աշխատում խոսակցական խնդիր ունեցող երեխայի հետ), միայն դաստիարակն է զբաղվում: Ծնողը գոհ էր դաստիարակից՝ իր երեխայի նկատմամբ ունեցած վերաբերմունքի համար:

Սոցիալապես անապահով երեխայի ծնողը նշել է, որ իր մեծ երեխան, որ մանկապարտեզ էր հաճախել, այսքան գիտելիք չուներ. նախակրթարանն ապահովել է միջնեկ երեխայի զարգացվածության առավել աճ:

Եթե տարվա սկզբում դաստիարակը թեմատիկ ուսուցում էր իրականացնում, տարվա վերջին՝ հարցազրույցի ժամանակ, նշել է, որ կիրառում է երեխայակենտրոն ուսուցման սկզբունքը:

Նկար 17. ՏՎ, Ոսկեհատ, սանհանգույց

Նկար 18. ՏՎ, Ոսկեհատ, խմբասենյակ

Ծնողները ֆոկուս խմբային քննարկման ժամանակ նշել են, որ կան շատ հեռու ապրող ընտանիքներ (ոտքով կես ժամ է տևում): Փոքր-ինչ ձմռանն է դժվար լինում, սակայն հիմնականում մեքենա ունեցող ծնողների հետ պայմանավորվում են ու նրանց հետ գալիս նախակրթարան:

Ոսկեհատի նախակրթարանում պարապմունքների դիտարկման պատկերը նորից միջինից բարձր է, միայն համեմատական ցածր արտահայտվածություն ունի *Նպատակ* չափանիշը /50.00%/: Առավելագույնը *Հարցեր* չափանիշն է /100.00%/, ինչը բավականաչափ կարևոր գործոն է երեխայի տարբեր ոլորտների զարգացման համար: Չափանիշների ընդհանուր պատկերում համեմատական ցածր արտահայտվածություն ունեն *Ժամանակ* և *Նպատակ* չափանիշները /75.00%/: Մնացած չափանիշները գտնվում են 68.75%-92.86% միջակայքում:

Գծապատկեր 7. Ոսկեհատի նախակրթարանում պարապմունքի դիտարկման տվյալների վերլուծություն



Գծապատկեր 8. Ոսկեհատի երեխաների թեստավորման և վերաթեստավորման տվյալների վերլուծություն



Գծապատկեր 8–ում Ոսկեհատ համայնքի նախակրթարանի երեխաների թեստավորման ու վերաթեստավորման արդյունքները վերլուծելիս տեսնում ենք, որ առավելապես աճ է դրսևորվել *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (2) տարածական պատկերացումներ /0.00%→54.55%/, (6) մաթեմատիկական պատկերացումներ /45.45%→90.91%/ ցուցանիշների և *տրամաբանություն և մտածողություն* ենթաոլորտի (4) օրինաչափությունների կազմում /40.91%→77.27%/ ցուցանիշի մասով: Անփոփոխ են մնացել *բանավոր խոսքի ընկալում* ենթաոլորտի (7) բազմաբայլ հրահանգների հետևում /90.91%/ և *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (5) տարրական մաթեմատիկական պատկերացում /100.00%/ ցուցանիշները:

Ոսկեհատ համայնքի ստուգիչ խմբի երեխաների վերաթեստավորման արդյունքը առավելապես գերազանցում է թեստավորման արդյունքին *վաղ գրաճանաչություն* ենթաոլորտի (1) տպագիր տեքստ /45.45%→68.18%/ ցուցանիշի մասով: Թեստավորման արդյունքը զիջել է վերաթեստավորման արդյունքին *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (3) թվերի ճանաչում /18.18%/, *տրամաբանություն և մտածողություն* ենթաոլորտի (11) նմանության և տարբերության իմացություն /4.54%/ և *մանր/նուրբ շարժողական* ենթաոլորտի (13) զգայաշարժողական հմտություններ /6.82%/ ցուցանիշների մասով:

Նայելով Գծապատկեր 8-ին՝ կարող ենք տեսնել, որ Ոսկեհատ համայնքի նախակրթարան հաճախող երեխաների թեստավորման արդյունքները գերազանցում են ստուգիչ խմբի երեխաների թեստավորման արդյունքներին՝ բացառությամբ *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (2) տարածական պատկերացումներ /9.09%/ ցուցանիշի: Նախակրթարան հաճախող երեխաների թեստավորման արդյունքները առավելապես գերազանցում են նախակրթարան չհաճախող երեխաների նույն արդյունքներին *բանավոր խոսքի ընկալում* ենթաոլորտի (7) բազմաբայլ հրահանգների հետևում /36.36%/ և *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (5) տարրական մաթեմատիկական պատկերացում /27.27%/ ցուցանիշների մասով: Տարբերություն չի նկատվում *վաղ գրաճանաչություն* ենթաոլորտի (8) տառաճանաչություն ցուցանիշի մասով /0.00%/:

Համեմատելով թիրախային ու ստուգիչ խմբերի երեխաների վերաթեստավորման արդյունքները՝ տեսնում ենք, որ բոլոր ցուցանիշների մասով թիրախային խումբն ավելի բարձր արդյունք է ապահովել, քան ստուգիչ խումբը: Առավելապես տարբերվում են հետևյալ ցուցանիշները՝ *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (3) թվերի ճանաչում /45.46%/, *տրամաբանություն և մտածողություն* ենթաոլորտի (4) օրինաչափությունների կազմում /40.91%/ և *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (1) տարածական պատկերացումներ /36.37%/ և *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (6) մաթեմատիկական պատկերացումներ /36.36%/:

Գծապատկեր 9: Ոսկեհատի երեխաների տվյալների համեմատությունը ըստ ենթաոլորտների



Ոսկեհատ համայնքի նախակրթարանի երեխաների թեստավորման ու վերաթեստավորման արդյունքներին նայելիս (Գծապատկեր 9), տեսնում ենք, որ առավելապես աճ է դրսևորվել (2) *տրամաբանություն և մտածողություն* /54.55%→79.55%/ ենթաոլորտի մասով:

Ստուգիչ խմբի երեխաների թեստավորման ու վերաթեստավորման արդյունքներին նայելիս (Գծապատկեր 9), տեսնում ենք, որ նշանակալի աճ չի գրանցվել, բայց փոփոխությունն այնուամենայնիվ դրական է եղել՝ բացառությամբ (3) *բանավոր խոսքի ընկալում* ենթաոլորտի, որ մնացել է անփոփոխ /90.91%/:

Գծապատկեր 9-ում երևում է, որ թեստավորման մասով նախակրթարան հաճախող երեխաների արդյունքները՝ բոլոր ենթաոլորտների մասով, գերազանցում են նախակրթարան չհաճախող երեխաների արդյունքներին: Առավելապես գերազանցում է (3) *բանավոր խոսքի ընկալում* /36.36%/ ենթաոլորտը:

Համեմատելով նախակրթարան հաճախող ու չհաճախող երեխաների վերաթեստավորման արդյունքները՝ տեսնում ենք, որ նախակրթարան հաճախող երեխաներն ավելի բարձր արդյունք են ապահովել ստուգիչ խմբի երեխաներից: Առավելապես տարբերվում են հետևյալ ենթաոլորտները՝ (2) *տրամաբանություն և մտածողություն* /34.1%/, (3) *բանավոր խոսքի ընկալում* /27.27%/ և (1) *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* /25.00%/:

5.1.4. Ընդհանրացված վերլուծություն

Արմավիրի մարզի երեք նախակրթարաններն էլ, ընդհանուր առմամբ, բավականին հաջող էին իրականացնում ծրագիրը: Նախակրթարաններում իրականցված պարապմունքների վերլուծությունը թույլ է տալիս պարզել, որ բոլոր չափանիշներն ունեն 72.22%-ից բարձր արտահայտվածություն: Առավելագույնը *Հարցեր* չափանիշն է /100%/:

Գծապատկեր 10. Արմավիրի մարզի նախակրթարանների պարապմունքի դիտարկման չափանիշների ընդհանրացված վերլուծություն



Գծապատկեր 11: Արմավիրի մարզի երեխաների տվյալների համեմատությունը ըստ ենթաոլորտների



Արմավիրի մարզի նախակրթարանների երեխաների թեստավորման ու վերաթեստավորման արդյունքները վերլուծելիս (Գծապատկեր 11–ում), տեսնում ենք, որ բոլոր ցուցանիշների մասով թեստավորման արդյունքները գերազանցում են վերաթեստավորման արդյունքներին: Առավելապես աճ է դրսևորվել *տրամաբանություն և մտածողություն* ենթաոլորտի (4) օրինաչափությունների կազմում /39.09%→84.55%/ և *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (6) մաթեմատիկական պատկերացումներ /42.88%→80.00%/ ցուցանիշների մասով:

Նախակրթարան չհաճախող երեխաների թեստավորման արդյունքները մեծ մասամբ գերազանցում են վերաթեստավորման արդյունքներին՝ բացառությամբ *մանր/նուրբ շարժողական ոլորտի* (13) զգայաշարժողական հմտություններ ցուցանիշի /80.91%→75.45%/: Առավելապես աճել են հետևյալ ցուցանիշները՝ *վաղ գրաճանաչություն* ենթաոլորտի (1) տպագիր տեքստ /45.45%→66.97%/, *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (5) տարրական մաթեմատիկական պատկերացումներ /68.79%→87.58%/, և *տրամաբանություն և մտածողություն* ենթաոլորտի (11) նմանության և տարբերության իմացություն /35.45%→56.06%/:

Գծապատկեր 11-ին նայելով՝ կարող ենք տեսնել, որ Արմավիրի մարզում գրեթե բոլոր ցուցանիշների մասով նախակրթարան հաճախող երեխաների թեստավորման արդյունքները գերազանցում են նախակրթարան չհաճախող երեխաների թեստավորման արդյունքներին՝ բացառությամբ *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (2) տարածական պատկերացումներ /3.03%/ ցուցանիշների: *Վաղ գրաճանաչություն* ենթաոլորտի (8) տառաճանաչություն ցուցանիշի մասով տարբերություն չկա, քանի որ երկու դեպքում ել ցուցանիշը 0.00% է: Նախակրթարան հաճախող երեխաների թեստավորման արդյունքները հետևյալ ցուցանիշների մասով առավելապես են գերազանցում նախակրթարան չհաճախողների թեստավորման արդյունքներին՝ *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (5) տարրական մաթեմատիկական պատկերացումներ /29.69%/, (3) թվերի ճանաչում /28.79%/ և *տրամաբանություն և մտածողություն* ենթաոլորտի (11) նմանության և տարբերության իմացություն /30%/:

Համեմատելով մարզի նախակրթարան հաճախող ու չհաճախող երեխաների վերաթեստավորման արդյունքները՝ տեսնում ենք, որ նորից բոլոր ցուցանիշների մասով նախակրթարան հաճախող երեխաներն ավելի բարձր արդյունք են ապահովել, քան չհաճախողները: Առավելապես տարբերվում են հետևյալ ցուցանիշները՝ *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (3) թվերի ճանաչում /49.7%/, *տրամաբանություն և մտածողություն* ենթաոլորտի (4) օրինաչափությունների կազմում /42.28%/, *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (6) մաթեմատիկական պատկերացումներ /37.12%/, (10) ժամի ճանաչում /32.42%/ և *տրամաբանություն և մտածողություն* ենթաոլորտի (11) նմանության և տարբերության իմացություն /33.03%/:

Գծապատկեր 12. Արմավիրի թեստավորման տվյալների վերլուծությունը՝ ըստ ենթաոլորտների



Գծապատկեր 12-ից տեսնում ենք, որ Արմավիրի մարզում նախակրթարանի ծրագիրն արդյունավետ ընթացք է ունեցել՝ նկատվում է դրական դինամիկա ծրագրում ընդգրկված երեխաների զարգացման մակարդակում:

5.2. Տավուշի մարզ

Մարզում ընտրվել են երեք համայնքներ, որոնք բոլորն էլ ստեղծված են դպրոցի հիմքի վրա: Ընտրանքով նախատեսված Տավուշի մարզի երեք նախակրթարաններում՝ Դովեղ, Ոսկեպար և Ներքին Ծաղկավան, երեխաների քիչ լինելու հետևանքով մեթոդաբանությամբ նախատեսված ընտրանքային թիվը պահպանելու համար կատարվել են լրացուցիչ այցեր այդ նույն մարզի մնացած երեք նախակրթարաններ ևս (Դովեղի համար՝Ակնաղբյուր, Ոսկեպարի համար՝ Ենոքավան և Ներքին Ծաղկավանի համար՝Վազաշեն)՝ ապահովելու ընտրանքային պարամետրերի ներկայացուցչականությունը:

5.2.1. «ՀՀ Տավուշի մարզի Դովեղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Նախակրթարանը ստեղծված է դպրոցի հիմքի վրա, ունի երեխաների մեկ խումբ: Ըստ մեկ խմբի համար նախատեսված միկրոծրագրի բյուջեի մեծության՝ համայնքի նախակրթարանը մարզում դասակարգվում է «մեծ» միջոցներ (ընտրանքում ներառված մարզի համայնքների դասակարգման ֆինանսական չափանիշ) ունեցող նախակրթարանների շարքին:

Այցելությունների ընթացքում նախակրթարանը գործում էր հետևյալ *մոդելով*.

- ☐ շաբաթական 5 օր,
- ☐ աշխատանքային կարճօրյա ռեժիմ՝ 09:00-12:40,
- ☐ այցելությունների ժամանակ նախակրթարանում աշխատում էր մեկ դաստիարակ,
- ☐ դաստիարակը վերապատրաստված էր,
- ☐ նախակրթարանում ապահովվում էր մեկանգամյա սառը սնունդ,
- ☐ ջեռուցումը կատարվում էր էլեկտրական ջեռուցիչների միջոցով,
- ☐ նախակրթարանը չուներ քնելու հնարավորություն:

Նախակրթարանի ընդհանուր պայմանների նկարագրությունը հետևյալն է.

- ☐ Նախակրթարանին տրամադրված էր խմբասենյակ, հանդերձարան և սանհանգույց, որի զուգարանակոնքերը առանձին խցիկներում էին:
- ☐ Խմբասենյակը, հանդերձասենյակը և սանհանգույցը համապատասխանում էին սահմանված վերանորոգվածության, անվտանգության, երեխաների չափսերին համապատասխանության, հասանելիության և մաքրության պահանջներին (քանի որ Ծրագրի շրջանակներում նախակրթարանում դաստիարակի օգնական չի նախատեսվում, դաստիարակը պարապմունքների ընթացքում չէր հասցնում հետևել սանհանգույցից օգտվելուց հետո երեխաների հիգիենային) *(Տե՛ս Նկարներ 19 և 20):*
- ☐ Նախակրթարանն ապահովված էր սառը մշտական ջրով:
- ☐ Նախակրթարանը ջեռուցվում էր էլեկտրական ջեռուցիչներով ու այցելության պահին բավականին ցուրտ էր հանդերձասենյակում և սանհանգույցում, իսկ խմբասենյակում, վերջիններիս համեմատ, փոքր-ինչ տաք էր:

Նկար 19. SU, Դովեղ, սանհանգույց

Նկար 20. SU, Դովեղ, խմբասենյակ

Խմբասենյակի, խաղասենյակի և աշխատանքային կենտրոնների պայմանները բավարարում էին սահմանված նորմերին, իսկ հագեցվածության տեսանկյունից՝ այդքան էլ հարուստ չէին (*Տե՛ս Նկարներ 21 և 22*): Նախակրթարանն ուներ հանդերձապահարաններ, գորգ, սեղան-աթոռ, խաղալիքի պահարաններ, գրատախտակ, հեռուստացույց, DVD նվագարկիչ, փոշեկուլ, էլեկտրական ջեռուցիչներ և այլն: Խմբասենյակն ու հանդերձասենյակը բավականին լուսավոր էին: Նախակրթարանի երեխաներին տրվում էր մեկանգամյա սառը սնունդ:

Նկար 21. SU, Դովեղ, հանդերձապահարաններ

Նկար 22. SU, Դովեղ, պահարան

Ըստ *տնօրենի*՝ ծրագրի հիմնական ուղղվածությունն էր նախակրթարանային տարիքի երեխաներին ընդգրկելն ու դպրոցին նախապատրաստելը: *Նախակրթարանի ստեղծումը*, ըստ տնօրենի, երեխաներին շփվելու հնարավորություն կտար, քանի որ համայնքում մանկապարտեզ չկար, երեխաները սոցիալականացման կարիք ունեին:

Նախակրթարանի ուժեղ կողմ, ըստ տնօրենի, կարելի էր համարել դպրոցին պատրաստ երեխաները, համայնքի համար նախակրթարանի անհրաժեշտությունը, կրթական ծրագրի

ապահովվածությունը, դաստիարակների վերապատրաստվածությունը, իսկ *թույլ կողմ՝* պայմանների «սակավությունը»:

Նախակրթարանի *շենքային պայմանները* բարվոք էին, միայն ջեռուցման հարցն էր առանձնանում. էլեկտրականությամբ էին տաքացնում: Դաստիարակը խորին հարցազրույցի ժամանակ նշել էր, որ մի քիչ ցուրտ էր նախակրթարանում, և քանի որ դպրոցը գտնվում էր գյուղից բավականին հեռու, ծնողները դժվարանում էին երեխաներին բերելու հարցում: Ֆոկուս խմբային քննարկման ժամանակ ծնողները նշել էին, որ նախակրթարանի ընդհանուր պայմաններից շատ գոհ են, սակայն նախակրթարանում մի քիչ ցուրտ էր և խաղալիքներն էին քիչ: Ծնողները, տնօրենն ու դաստիարակը հարցազրույցներում նշել էին, որ հիմնական խնդիրը դպրոցի հեռավորությունն էր գյուղից և տրանսպորտի բացակայությունը:

Տնօրենը նշել էր, որ պետք էր լուծել սննդի հարցը, իրենք ճաշարանային տարածք ունեին, պետք էր բարելավել մի փոքր, և գույքը հարմարեցնել երեխաների չափսերին:

Խմբասենյակում դեռևս առանձնացված *աշխատանքային կենտրոններ չկային*, սակայն բոլոր կենտրոնների պարագաներից առկա էին: Նախակրթարանում հագեցած էին գրաճանաչության և արվեստի կենտրոնները: Մնացած կենտրոնների մասով *դիդակտիկ նյութերի* պակաս էր զգացվում, դաստիարակը խորին հարցազրույցի ժամանակ նշել էր, որ բոլոր կենտրոնների պարագաներն էլ կարելի էր համալրել:

Նախակրթարանում աշխատում էին *տնօրենը* և մեկ *դաստիարակ:* Դաստիարակը նախկինում աշխատել էր համայնքի մանկապարտեզում: Դաստիարակը վերապատրաստվել էր ու տիրապետում էր նախակրթարանի ուսումնական ծրագրի դրույթներին: Տնօրենը նախկինում աշխատել էր որպես դպրոցի ուսմասվար, այնուհետև՝ տնօրեն:

Վերապատրաստումն անցել էր շատ հետաքրքիր: Դաստիարակը նշել էր, որ դասընթացը լավ էր կազմակերպված, ստացել էր անհրաժեշտ գրականություն և նոր գիտելիքներ: Կուզենար, որ պրակտիկա լիներ և ձեռքի աշխատանքներն ավելի շատ լինեին:

Ըստ դաստիարակի՝ վերապատրաստման ժամանակ ստացած գիտելիքները մինիմալ մակարդակով էին կարողանում կիրառել, քանի որ գյուղում չկային համապատասխան պայմաններ:

Դաստիարակն ուներ *պարապմունքի պլան-կոնսպեկտ*, սակայն չէր հաշվառվում ժամանակի գործոնը: Պարապմունքների ընթացքում կիրառվում էին դիդակտիկ նյութեր, զննական պարագաներ, սակայն բացակայում էին խմբային աշխատանքները, համագործակցության միջոցով գիտելիքների ձեռքբերումը: Երեխաների նկատմամբ ցուցաբերվում էր անհատական մոտեցում: Դաստիարակը օգտագործում էր երեխայի զարգացման դինամիկայի դիտարկման և գնահատման թերթիկները: Գենդերային հարցերում երեխաների միջև տարբերություն չէր դնում:

Դաստիարակը կիրառում էր պարապմունքի անցկացման երեխայակենտրոն սկզբունքը, քանի որ ստեղծվում էր համագործակցային մթնոլորտ և երեխաների հետ տարվում էր անհատական աշխատանք: Պարապմունքներն անց էր կացնում խաղերի միջոցով: Դաստիարակը կենտրոնանում

էր ինքնասպասարկման, իմացական ու լեզվական ոլորտների վրա, իրականացնում էր անհատական գնահատում, դասընթացը պլանավորում էր ամսվա կտրվածքով:

Դաստիարակը նշում էր, որ ամենաուժեղ երեխան գիտեր թվերը, տարբերում էր գույները, երկրաչափական պատկերները, կարողանում էր հստակ արտահայտել միտքը: Թույլ երեխան դեռ գույները չգիտեր, աջն ու ձախը չէր տարբերում, միտքը չէր կարողանում արտահայտել, իսկ միջին ընդունակություններով երեխաները գիտեինն այդ ամենը: Ըստ դաստիարակի՝ երեխաների ընդունակությունները, սեռից կախված, չէին տարբերվում:

Ծնողները սննդի մատուցման ժամանակ գալիս և օգնում էին, իսկ ինչ վերաբերում էր ծնողի՝ երեխայի կրթությանը մասնակցելուն, այդքան էլ չէին մասնակցում, հաճախ գալիս էին նախակրթարան ու տեղեկանում էր երեխաների առաջընթացի, խնդիրների ու նախակրթարանի առօրյայի մասին:

Համայնքի բնակիչները հիմնականում գյուղատնտեսությամբ էին զբաղվում, սակայն հողակտորների մեծ մասը սահմանամերձ էին, ըստ այդմ համայնքի բնակիչները չէին կարողանում ամբողջությամբ մշակել, այլ աշխատանք չկար համայնքում: Դաստիարակը նշել էր, որ համայնքում երեխաների համար ընդհանրապես պայմաններ չկային, երեխաները սովորում էին տեսնելով, իսկ համայնքում տեսնելու ոչնիչ չկա:

Տնօրենի գնահատմամբ, համայնքի *ընտանիքների սոցիալ-տնտեսական վիճակը* հիմնականում քիչ բավարար էր: Ըստ դաստիարակի՝ համայնքում շատ կային մասնագիտական կրթություն չունեցող ծնողներ:

Տնօրենը գտնում էր, որ *համայնքի սոցիալ-տնտեսական վիճակն* այդքան էլ չէր ազդում երեխաների զարգացվածության վրա, քանի որ իրենք կրթական գործն ըստ ծրագրի առաջ էին տանում: Դաստիարակը նշել էր, որ սոցիալ-տնտեսական պայմաններն ուղղակի ազդեցություն ունեին երեխաների զարգացվածության վրա:

Ծնողների հետ անցկացված ֆոկուս խմբային քննարկման ժամանակ ներկաների ընտանիքները բաղկացած էին 5-9 հոգուց: 6 ընտանիքներից 3-ը նպաստառու ընտանիքներ էին: Աշխատող անձ ունեցող ընտանքիներում հիմնականում հայրերն աշխատում էին, մայրերը տնային տնտեսուհիներ էին: Մեկ ընտանիքում աշխատում էր միայն շահառու երեխայի հորեղբոր կինը: Չորս ընտանիքներ զբաղվում էին գյուղատնտեսությամբ՝ ունեին ընտանի կենդանիներ, զբաղվում էին հողագործությամբ: Այս աշխատանքներում հիմնականում բոլորի երեխաները յուրովսանն օգնում էին: Երեխաների՝ նախակրթարան հաճախելու հիմնական նպատակը կրթված լինելն էր: Ծնողները նախակրթարան էին ուղարկել երեխաներին՝ հաշվի առնելով նախակրթարանի պայմանները՝ դասատիարակի վերաբերմունք, ջեռուցում, մաքրություն, շենքային պայմաններ: Ծնողները գոհ էին դաստիարակից՝ երեխայի կարգապահության, կրթության, անվտանգության և այլ հարցերում:

Տվյալ ընտանիքների երեխաները տանը հիմնականում ներգրավված էին տնային պարզ գործերում՝ հավերին կուտ տալ (սոցիալապես անապահով երեխա), հավաքել իրենց ետևից: Մեծ մասամբ

երեխաներն ինքնուրույն էին միայն սնվելու, հագնվելու, լվացվելու հարցերում, իսկ, օրինակ, լոգանքի, սանհանգույցից օգտվելու պարագայում մայրը պարտադիր օգնում էր:

Երեխայի խնամքի պատասխանատուները հիմնականում մայրերն էին, երբեմն օգնում էին նաև հայրերն ու տատիկները: Մոր բացակայության ժամանակ երեխային խնամում էին հիմնականում տատիկները, հայրիկը, մեծ քույր կամ եղբայրը, սակայն հիմնականում բացակայությունները հաճախակի բնույթ չէին կրում՝ դպրոց կամ խանութ գնալ, հող փորել (*սոցիալապես անապահով ընտանիքի ծնողի* հետ խորին հարցազրույցից): Երեխայի առօրյան հիմնականում պլանավորում էին մայրերը՝ հնարավորության դեպքում հաշվի առնելով երեխայի ցանկությունները:

Ծնողները հիմնականում գտնում էին, որ ծնողի որոշումներն ու պահանջները պետք էր բացատրել երեխային: Երեխայի արարքներից պատժելի էին սուտը, համակարգչի առաջ երկար մնալը, մեծերին չլսելը և այլն: Հիմնականում պատժելու միջոցն էր սիրած զբաղմունքից զրկելը, սակայն հիմնականում բացատրում էին երեխային սխալի մասին: Կային նաև ծնողներ, որոնք նաև պատժում էին երեխային՝ սպառնալով «պապային կասեմ»-ով, քանի որ երեխան վախենում էր հայրիկից:

Քննարկմանը մասնակցած ծնողների երեխաների մեծամասնությունը չէր հաճախել մանկապարտեզ, քանի որ համայնքում չէր եղել մանկապարտեզ:

Ծնողները կարծում էին, որ երեխայի զարգացման վրա մեծ ազդեցություն ունեին այլ ծնողների և երեխաների ազդեցությունը, ուսուցման պայմանները: Քննարկմանը մասնակցած ծնողները ցանկություն էին հայտնել, որ երեխաները լինեին տառաճանաչ, սննդի հարցը լուծվեր՝ դառնար օրական երկու անգամ, օրվա ռեժիմը երկարեր:

Ընդհանուր առմամբ, ծնողները շատ գոհ էին նախակրթարանի աշխատանքից ու այն հնարավորությունից, որ իրենց երեխան դպրոցին նախապատրաստված կլինի:

Ֆոկուս-խմբային քննարկումից պարզ էր դարձել, որ երեխաներին որևէ բան սովորեցնելիս ծնողները դիմում էին խաղերի, երգերի օգնությանը: Երկու դեպքում էլ երեխաներն իրենք էին ձգտում, որ ծնողներն իրենց նոր գիտելիքներ տային:

Այս նախակրթարանի գործարկման համար ծնողական և համայնքային ներդրում չէր կատարվել: Ծնողները մեկանգամյա սառը սննդի համար օրական հավաքում էին 80 դրամ:

Ըստ տնօրենի, ծրագրի շարունակականության հարց կար՝ կապված 5-6 տարեկան երեխաների քանակության հետ: Ուստի, նա ցանկություն ուներ նաև ընդգրկել փոքր տարիքային խմբի երեխաների և նախակրթարանում երկրորդ խումբ բացել:

Տարվա վերջի այցելության նկարագրությունը ներկայացված է ստորև:

Շենքային պայմանները տարվա վերջում նույնպես բարեկարգ են ու գեղեցիկ: Ծնողները ֆոկուս խմբային քննարկման ժամանակ նշել էին, որ կցանկանային նախակրթարանի բակը բարեկարգվեր, ճոճանակներ տեղադրվեին:

Աշխատանքային կենտրոններում ավելացել էին ձեռակերտ զարդարանքները, պաստառները *(Տես՝ Նկար 23)*: Տնօրենը և դաստիարակը նշել են, որ պարագաների ու նյութերի համալրման կարիք կա: Սոցիալապես անապահով ծնողն էլ այս մասով նշել է, որ փոքր-ինչ խաղալիքների պակաս է նկատվում, քանի որ երեխաները շատ են կոտրում:

Պարապմունքների մասով ծնողները ցանկություն են հայտնել, որ խմբակներ լինեն՝ պար, երգ:

Նկար 23. ՏՎ, Դովեղ, խմբասենյակ, ձեռակերտ պարագաներ

Սոցիալապես անապահով ծնողը հարցազրույցի ժամանակ նշել է, որ իր երեխան նախակրթարանում ազատ շփվում է իր հասակակիցների հետ ու պատրաստ է դպրոց հաճախելու: Մյուս ծնողները նշել են նաև, որ իրենց երեխաներն ավելի ինքնուրույն են դարձել, լավ են տրամաբանում: Դաստիարակը նշել է, որ տարվա սկզբում երեխաներ կային, որ գույները չեն ճանաչել, մինչև տասը չեն կարողացել հաշվելը, իսկ տարվա վերջում արդեն ճանաչում են գույները, մինչև տասը հետհաշվարակ են կատարում, հանդեսների ժամանակ մտնում են դերի մեջ, սովորել են նիստ ու կաց: Սեռից կախված առավել ակտիվ են աղջիկները, այս հարցում մեծ նշանակություն ունի ընտանիքի դերը:

Տնօրենն իր հետ անցկացված հարցազրույցի ժամանակ նշել է, որ շինարարական աշխատանքների մասով կցանկանար, որ մի կազմակերպություն լիներ, որն ամբողջ աշխատանքներն ու մրցույթները կկազմակերպեր և պատասխանատու կլիներ ԾԻԳ-ին, քանի որ ինքը շինարարարության մանրուքներին այդքան էլ լավ չի տիրապետում ու դժվար է եղել համակարգել այդ աշխատանքները: Նա նաև ցանկություն է հայտնել ավելի փոքր տարիքի երեխաներին ընդգրկելու մասին, քանի որ այդպիսով կթեթևանա գյուղի մայրերի հոգսը, նրանք կկարողանան զբաղվել գյուղատնտեսությամբ:

Տնօրենը նշել է, որ նախակրթարանը սոցիալականացման հարց է լուծում, երեխաները կրթվում են, ծնողներն էլ ազատ ժամանակ են ունենում:

Համայնքի սոցիալ-տնտեսական վիճակը լավ չէ. ըստ դաստիարակի՝ համայնքում երեխաների համար զբաղվելու, խաղալու այլ վայր, նախակրթարանից բացի, չկա, ոչ մի միջոցառում չի

անցկացվում, ինչն էլ իր ազդեցությունն է ունենում երեխաների զարգացվածության վրա: Համայնքում նաև արդիական է նախակրթարանի հեռավորության հարցը՝ ոտքով 40 րոպե է տևում, իսկ ձմռանն ավելի վատ է լինում դրությունը:

Գծապատկեր 13-ում ներկայացված տվյալները վկայում են այն մասին, որ Դովեղի նախակրթարանում բավական հաջող է իրականացվում ծրագիրը: Առավելագույն արտահայտվածություն ունեն *Նպատակ և Հարցեր* չափանիշները /100.00%/, այնուհետև՝ *Մեթոդներ* չափանիշը /96.43%/, որոնք էլ սահմանում են պարապմունքի ճիշտ ուղղվածությունը, նպատակային մեթոդների ընտրությունն ու հարցերով ամրապնդումը: Մնացած չափանիշները գտնվում են միջինից բարձր միջակայքում են /81.25% - 96.43%/:

Գծապատկեր 13. Դովեղի նախակրթարանում պարապմունքի դիտարկման տվյալների վերլուծություն



Գծապատկեր 14. Դռվեղի երեխաների թեստավորման տվյալների վերլուծություն



Դովեղի համայնքի նախակրթարանի երեխաների թեստավորման ու վերաթեստավորման արդյունքները վերլուծելիս (Գծապատկեր 14–ում), տեսնում ենք, որ առավելապես աճ է դրսևորվել *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (3) թվերի ճանաչում /25.00%→66.67%/, (6) մաթեմատիկական պատկերացումներ /22.92%→56.25%/, *բանավոր խոսքի ընկալում* ենթաոլորտի (7) բազմաբայլ հրահանգների հետևում /75.00%→100.00%/ և *վաղ գրաճանաչություն* ենթաոլորտի (8) տառաճանաչություն /0.00%→25.00%/ ցուցանիշների մասով:

Նախակրթարան չհաճախող երեխաների թեստավորման ու վերաթեստավորման արդյունքները վերլուծելիս տեսնում ենք նրանց մի մասի համար տարբերություն չի գրանցվել, օրինակ՝ *տրամաբանություն և մտածողություն* ենթաոլորտի (4) օրինաչափությունների կազմում /25.00%/, *վաղ գրաճանաչություն* ենթաոլորտի (8) տառաճանաչություն /0.00%/, *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (9) աջի և ձախի իմացություն /83.33%/, *մանր/նուրբ շարժողական* ենթաոլորտի (12) գրելու տարրական հմտություններ /0.00%/ և (13) զգայաշարժողական հմտություններ /75.00%/ ցուցանիշների մասով: Նվազել են *վաղ գրաճանաչություն* ենթաոլորտի (1) տպագիր տեքստ /41.67%→37.50%/ և *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (5) տարրական մաթեմատիկական պատկերացումներ /79.17%→70.83%/ ցուցանիշները:

Նայելով Գծապատկեր 14-ին՝ կարող ենք տեսնել, որ նախակրթարան հաճախող երեխաների թեստավորման արդյունքները մեծամասամբ գերազանցում են նախակրթարան չհաճախող երեխաների թեստավորման արդյունքներին: Հակառակ արդյունք գրանցվել է միայն *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (6) մաթեմատիկական պատկերացումներ /22.92%→29.17%/ ցուցանիշի մասով, իսկ հավասար արդյունքներ՝ *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (3) թվերի ճանաչում /25.00%/ և *վաղ գրաճանաչություն* ենթաոլորտի (8) տառաճանաչություն /0.00%/ ցուցանիշների մասով:

Համեմատելով նախակրթարան հաճախող ու չհաճախող երեխաների վերաթեստավորման արդյունքները՝ տեսնում ենք, որ բոլոր ցուցանիշների մասով նախակրթարան հաճախող երեխաներն ավելի բարձր արդյունք են ապահովել տարվա վերջում, քան չհաճախողները: Առավելապես տարբերվում են հետևյալ ցուցանիշները՝ *վաղ գրաճանաչություն* ենթաոլորտի (1) տպագիր տեքստ /37.5%/, *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (3) թվերի ճանաչում /26.66%/, (5) տարրական մաթեմատիկական պատկերացումներ /29.17%/, *տրամաբանություն և մտածողություն* ենթաոլորտի (4) օրինաչափությունների կազմում /25.00%/, *բանավոր խոսքի ընկալում* ենթաոլորտի (7) բազմաբայլ հրահանգների հետևում /33.33%/ և *վաղ գրաճանաչություն* ենթաոլորտի (8) տառաճանաչություն /25.00%/:

Գծապատկեր 15: Դովեղի երեխաների տվյալների համեմատությունը ըստ ենթաոլորտների



Գծապատկեր 15-ից տեսնում ենք, որ Դովեղ համայնքի նախակրթարանի երեխաների թեստավորման ու վերաթեստավորման արդյունքներն առավելապես աճել է (3) *բանավոր խոսքի ընկալում* /75.00%→100.00%/ ենթաոլորտի մասով:

Դովեղ համայնքի նախակրթարան չհաճախող երեխաների թեստավորման ու վերաթեստավորման արդյունքներին նայելիս (Գծապատկեր 15), տեսնում ենք, որ գրանցված աճը նշանակալի չի եղել, իսկ նվազել է միայն (4) *վաղ գրաճանաչություն* /20.83%→18.75%/ ենթաոլորտը:

Նայելով Գծապատկեր 15-ին՝ կարող ենք տեսնել, որ նախակրթարան հաճախող երեխաների թեստավորման արդյունքները՝ բոլոր ենթաոլորտների մասով, գերազանցում են նախակրթարան չհաճախող երեխաների թեստավորման արդյունքներին: Թիրախային խմբի արդյունքները առավելապես գերազանցել են ստուգիչ խմբի արդյունքներին (3) *բանավոր խոսքի ընկալում* /16.67%/ ենթաոլորտի մասով:

Համեմատելով նախակրթարան հաճախող ու չհաճախող երեխաների վերաթեստավորման արդյունքները՝ տեսնում ենք, որ նախակրթարան հաճախող երեխաներն ավելի բարձր արդյունք են ապահովել, քան չհաճախողները: Առավելապես տարբերվում է (3) *բանավոր խոսքի ընկալում* /33.33%/ ենթաոլորտը:

5.2.2. «ՀՀ Տավուշի մարզի Ոսկեպարի Հ.Բարսեղյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Նախակրթարանը ստեղծված է դպրոցի հիմքի վրա, ունի երեխաների մեկ խումբ: Ըստ մեկ խմբի համար նախատեսված միկրոծրագրի բյուջեի մեծության՝ համայնքի նախակրթարանը մարզում դասակարգվում է «մեծ» միջոցներ (ընտրանքում ներառված մարզի համայնքների դասակարգման ֆինանսական չափանիշ) ունեցող նախակրթարանների շարքին:

Այցելությունների ընթացքում նախակրթարանը գործում էր հետևյալ *մոդելով*.

- ☐ շաբաթական 5 օր,
- ☐ աշխատանքային կարճօրյա ռեժիմ՝ 09:00-14:00,
- ☐ այցելությունների ժամանակ նախակրթարանում աշխատում էր մեկ դաստիարակ,
- ☐ դաստիարակը վերապատրաստված էր,
- ☐ նախակրթարանում ապահովվում էր երկուանգամյա տաք և սառը սնունդ,
- ☐ ջեռուցումը կատարվում էր էլեկտրական ջեռուցիչների միջոցով,
- ☐ նախակրթարանը չուներ քնելու հնարավորություն:

Նախակրթարանի ընդհանուր պայմանների նկարագրությունը հետևյալն է.

- ☐ Նախակրթարանին տրամադրված էր խմբասենյակ, հանդերձարան-խաղասենյակ և սանհանգույց (զուգարանակոնքերն առանձին խցիկներում չէին՝ անջատված էին միայն միջնորմով), խոհանոց-ճաշարան:
- ☐ Խմբասենյակը, հանդերձարան-խաղասենյակը և սանհանգույցը համապատասխանում էին սահմանված վերանորոգվածության, անվտանգության, երեխաների չափսերին համապատասխանության, հասանելիության և մաքրության պահանջներին (քանի որ Ծրագրի շրջանակներում նախակրթարանում դաստիարակի օգնական չի նախատեսվում, դաստիարակը պարապմունքների ընթացքում չէր հասցնում հետևել սանհանգույցից օգտվելուց հետո երեխաների հիգիենային) (*Տե՛ս Նկարներ 24 և 25)*:
- ☐ Նախակրթարանն ապահովված էր սառը մշտական ջրով:
- ☐ Նախակրթարանը ջեռուցվում էր էլեկտրական ջեռուցիչներով ու այցելության պահին բավականին ցուրտ էր: Խոհանոցում փայտի վառարան կար:

Նկար 24. SU, Ոսկեպար, սանհանգույց

Նկար 25. SU, Ոսկեպար խմբասենյակ

Խմբասենյակի, խաղասենյակի, և աշխատանքային կենտրոնների պայմանները բավարարում էին սահմանված նորմերին, իսկ հագեցվածության տեսանկյունից՝ այդքան էլ հարուստ չէին (*Տե՛ս Նկարներ 26 և 27*): Նախակրթարանն ուներ հանդերձապահարաններ, գորգ, սեղան-աթոռ, խաղալիքի պահարաններ, գրատախտակ, հեռուստացույց, DVD նվագարկիչ, փոշեկուլ, էլեկտրական ջեռուցիչներ և այլն: Խմբասենյակն ու հանդերձասենյակը բավականին լուսավոր էին: Նախակրթարանի երեխաներին տրվում էր երկուանգամյա տաք սնունդ: Նախակրթարանն ուներ նաև խոհանոց և օգտագործում էր դպրոցի բացօթյա խաղահրապարակը:

Նկար 26. SU, Ոսկեպար, հանդերձարան-խաղասենյակ

Նկար 27. SU, Ոսկեպար, պահարան

Տնօրենը գտնում էր, որ ծրագրի հիմնական ուղղվածությունը երեխաներին դպրոցին նախապատրաստելն էր: *Նախակրթարանի ստեղծումը*, ըստ տնօրենի, երեխաներին շփվելու ու զարգանալու հնարավորություն կտար:

Նախակրթարանի ուժեղ կողմը, ըստ տնօրենի, պատրաստված դաստիարակ ունենալն էր, իսկ *թույլ կողմ*՝ չէր տեսնում:

Նախակրթարանի *շենքային պայմանները* բարվոք էին, միայն ջեռուցման հարցն էր առանձնանում. էլեկտրականությամբ էին տաքացնում: Դաստիարակը խորին հարցազրույցի ժամանակ նշել էր, որ մի քիչ ցուրտ էր նախակրթարանում, սակայն մնացած պայմանները լավ վիճակում էին: Ֆոկուս խմբային քննարկման ժամանակ շենքային պայմանների հետ կապված ծնողները նշել էին, որ նախակրթարանի ընդհանուր պայմաններից շատ գոհ էին:

Խմբասենյակում դեռևս առանձնացված *աշխատանքային կենտրոններ չկային:* Նախակրթարանը հագեցած չէր ուսումնական նյութերով, դիդակտիկ պարագաներով ու խաղալիքներով: Նախակրթարանում քիչ թե շատ առկա էին սպորտի, արվեստի և մաթեմատիկայի կենտրոնների պարագաներից: Մնացած կենտրոնների մասով *դիդակտիկ նյութերի* պակաս էր զգացվում, դաստիարակը խորին հարցազրույցի ժամանակ նշել էր, որ բոլոր կենտրոնների պարագաներն էլ կարելի էր համալրել: Ֆոկուս խմբային հարցման ժամանակ ծնողները նշել էին, որ խաղալիքներն էին քիչ:

Նախակրթարանում աշխատում էին *տնօրենը* և մեկ *դաստիարակ:* Դաստիարակը նախկինում չէր աշխատել, վերապատրաստվել էր ու տիրապետում էր նախակրթարանի ուսումնական ծրագրի դրույթներին: Տնօրենը նախկինում աշխատել էր որպես դպրոցի ուսուցիչ, այնուհետև՝ տնօրեն:

Վերապատրաստումն անցել էր շատ հետաքրքիր: Դաստիարակը նշել էր, որ դասընթացը լավ էր կազմակերպված, նա նոր գիտելիքներ էր ստացել՝ աշխատանքային կենտրոնների մասին, մանկավարժական տարբեր հնարքների ու խաղերի մասին: Կուզենար, որ դասընթացն ավելի երկար լիներ:

Դաստիարակը չուներ *պարապմունքի պլան-կոնսպեկտ*, չէր հաշվառվում ժամանակի գործոնը, հմուտ չէր կիրառում պարապմունքի անցկացման մեթոդները, հարցերը երեխաների մակարդակին համապատասխան չէին ձևակերպվում: Պարապմունքների ընթացքում չէին կիրառվում դիդակտիկ նյութեր, զննական պարագաներ, քանի որ, կարելի է ասել, նախակրթարանում պարագաներ քիչ կային, բացակայում էին խմբային աշխատանքները, համագործակցության միջոցով գիտելիքների ձեռքբերումը: Երեխաների նկատմամբ ցուցաբերվում էր անհատական մոտեցում: Դաստիարակը աջակցում էր երեխաներին, խմբասենյակում պարապմունքի ընթացքում դրսևորում էր շարժունակություն, չէր օգտագործում երեխայի զարգացման դինամիկայի դիտարկման և գնահատման թերթիկները: Գենդերային հարցերում երեխաների միջև տարբերություն չէր դնում:

Դաստիարակը հարցազրույցի ժամանակ նշել էր, որ կիրառում էր պարապմունքի անցկացման ինտեգրված սկզբունքը, քանի որ տարվում էր անհատական աշխատանք: Պարապմունքներն անց

էր կացնում խաղերի միջոցով: Դաստիարակը կենտրոնանում էր լեզվական ոլորտի վրա, իրականացնում էր անհատական գնահատում, դասընթացը չէր պլանավորում (պլան չէր գրվում):

Դաստիարակը նշում էր, որ ամենաուժեղ երեխան շատ դյուրին էր ընկալում, չուներ արտասանության խնդիրներ: Թույլ երեխան միտքը չէր կարողանում արտահայտել, իսկ միջին ընդունակություններով երեխանները գիտելիքներ ունեին, սակայն շատ շուտ շփոթվում էին: Ըստ դաստիարակի՝ երեխաների ընդունակությունները, սեռից կախված, չէին տարբերվում:

Ծնողներն այդքան էլ չէին մասնակցում նախակրթարանի կյանքին, սակայն ամեն օր տեղեկանում էին երեխաների առաջընթացի, խնդիրների ու նախակրթարանի առօրյայի մասին:

Համայնքի բնակիչները հիմնականում գյուղատնտեսությամբ էին զբաղվում, սակայն հողակտորների մեծ մասը սահմանամերձ էին, ըստ այդմ չէին կարողանում ամբողջությամբ մշակել: Դաստիարակը նշել էր, որ համայնքում երեխաների համար ընդհանրապես պայմաններ չկային, աշխատանք չկար:

Տնօրենի գնահատմամբ, համայնքի *ընտանիքների սոցիալ-տնտեսական վիճակը* միատեսակ չէր, իսկ ըստ դաստիարակի՝ համայնքում հիմնականում բոլոր ընտանիքները անապահով էին:

Տնօրենը գտնում էր, որ *համայնքի սոցիալ-տնտեսական վիճակն* ուղղակիորեն էր ազդում երեխաների զարգացվածության վրա. ծնողներն ի վիճակի չէին երեխաների համար բավարար պայմաններ ստեղծել և կրթությանը բավականաչափ ուշադրություն դարձնել: Դաստիարակը հնարավոր էր համարում սոցիալ-տնտեսական պայմանների ազդեցությունը երեխաների զարգացվածության վրա, սակայն նաև նշում էր, որ ծնողները երեխաներին հնարավորինս խնդիրներից հեռու էին պահում:

Ծնողների հետ անցկացված ֆոկուս խմբային քննարկման ժամանակ ներկաների ընտանիքները բաղկացած էին 4-6 հոգուց, 3 ընտանիքներից 2-ը նպաստառու ընտանիքներ էին: Երեք ընտանիքներից միայն մեկում աշխատող անձ կար: Բոլոր ընտանիքներն էլ զբաղվում էին գյուղատնտեսությամբ՝ ունեին ընտանի կենդանիներ, զբաղվում էին հողագործությամբ: Այս աշխատանքներում հիմնականում բոլորի երեխաները ուժերի ներածի չափով օգնում էին: Երեխաների՝ նախակրթարան հաճախելու հիմնական նպատակը դպրոցին պատրաստ լինելն էր: Ծնողները նախակրթարան էին ուղարկել երեխաներին՝ այլ երեխաների հետ շփվելու, կրթվելու, խելոքանալու: Ծնողները գոհ էին դաստիարակից:

Տվյալ ընտանիքների երեխաները տանը հիմնականում ներգրավված էին տնային պարզ գործերում՝ գնումներ կատարել, հավաքել իրենց ետևից, փայտ կոտրատել, *սոցիալապես անապահով ընտանիքի ծնողն* էլ նշել էր, որ իր երեխան տանը պարտականություններ չունի, դեռ փոքր էր: Մեծ մասամբ, երեխաներն ինքնուրույն էին միայն սնվելու, հագնվելու, լվացվելու հարցերում, իսկ լոգանքի, սանհանգույցից օգտվելու պարագայում մայրը պարտադիր օգնում էր:

Երեխայի խնամքի պատասխանատուները հիմնականում մայրերն էին, երբեմն օգնում էին նաև հայրերն ու տատիկները: Մայրերի բացակայության ժամանակ երեխային խնամում էին հիմնականում հայրիկը, տատիկները, պապիկները, սակայն հիմնականում բացակայությունները

հաճախակի բնույթ չէին կրում՝ դպրոց կամ խանութ գնալ, հիվանդանոց գնալ: Երեխայի դաստիարակության պատասխանատուները հիմնականում մայրերն էին ու հայրերը: Երեխայի առօրյան հիմնականում պլանավորում էին մայրերը՝ հնարավորության դեպքում հաշվի առնելով երեխայի ցանկությունները:

Ծնողները հիմնականում գտնում էին, որ ծնողի որոշումներն ու պահանջները պետք էր բացատրել երեխային: Երեխայի արարքներից պատժելի էին սուտը, քույր-եղբայրների հետ վիճելը, չարություն անելը և այլն: Հիմնականում պատժելու միջոցներն էին սիրած զբաղմունքից զրկելը, անկյուն կանգնեցնելը և այլն: Կային նաև ծնողներ, որոնք նաև պատժում էին երեխային ծեծելով:

Նախակրթարանի երեխաների մեծամասնությունը չէին հաճախել մանկապարտեզ, քանի որ համայնքում մանկապարտեզ չէր եղել:

Ծնողները կարծում էին, որ երեխայի զարգացման վրա մեծ ազդեցություն ունեին սոցիալ-տնտեսական պայմանները, երեխաների, ծնողների ազդեցությունն ու ուսուցման պայմանները:

Ընդհանուր առմամբ, ծնողները շատ գոհ էին նախակրթարանի աշխատանքից ու այն հնարավորությունից, որ իրենց երեխան դպրոցին նախապատրաստված կլիներ:

Երեխաներին որևէ բան սովորեցնելիս ծնողները դիմում էին խաղերի, երգերի օգնությանը, երկու դեպքում էլ երեխաներն իրենք էին ձգտում, որ ծնողներն իրենց նոր գիտելիքներ տային:

Այս նախակրթարանի գործարկման համար ծնողական և համայնքային ներդրում չէր կատարվել: Ծնողները, ըստ տնօրենի, սննդի համար վճարում էին ամսական 2000 դրամ:

Տնօրենը որպես ծրագրի շարունակականության հիմնական խնդիր էր տեսնում սահմանային լարվածությունը:

Տարվա վերջի այցելության նկարագրությունը ներկայացված է ստորև:

Դաստիարակը տարվա վերջին այցելության ժամանակ նշել է, որ *շենքային պայմանների մասով* ֆիզկուլտուրայի անկյուն չունեն, ինքը բարձրաձայնել է, սակայն տնօրենն ասել է, որ բավականաչափ ֆինանսներ չունեն:

Տարվա վերջում ևս *աշխատանքային կենտրոնների* մասով խնդիրը կա *(Տե՛ս Նկարներ 28 և 29)*: Դաստիարակը նշել է, որ կենտրոններով չի աշխատում, քանի որ համապատասխան նյութեր չունեն աշխատանքային կենտրոններում: Տնօրենի պնդմամբ, ծրագրի շրջանակներում այդքանը նախատեսել հնարավոր չէր: Ինչ հնարավոր եղել է, իրենք արել են: *Սոցիալապես անապահով ծնողը* խորին հարցազրույցի ժամանակ նշել է, որ նախակրթրանում փոքր-ինչ խաղալիքներն են քիչ: Ֆոկուս խմբային քննարկման ժամանակ ծնողները նշել են, որ իրենք էլ տեսնում են, որ խաղալիքները, նյութերը քիչ են, բայց ըստ ծնողներից մեկի՝ <<չեղած տեղից սա էլ է բան>>, ու մյուսները համաձայնվել են՝ պնդելով, որ իրենց դաստիարակը էներգիայով շատ լի է և ամեն ինչ անում է, որպեսզի այդ պակասը չզգացվի: Ծնողները նշել են, որ կցանկանային, որ որոշակի խմբակներ լինեին:

Փոքր երեխաների հետ դժվար է աշխատելը (20 երեխա, որոնցից 4-ն են 5-6 տարեկան), դաստիարակը հարցազրույցի ժամանակ նշում է, - «Չկան համապատասխան նյութեր, դրա համար ես աշխատում եմ առանց կենտրոնների, այդ օրը ոնց հարմարվում է ու հետո շատ են ինձ խանգարում փոքրերը, իրենց բացարձակ հետաքրքիր չէ՝ ինչ մեծերի հետ անում ենք ու խանգարում են: Փոքրերի հետ իրենց ձևով եմ աշխատում, ավելի պարզեցված, թեկուզ երբ ապլիակցիա եմ անում, իրենցը պատրաստի կտրտում եմ, բայց էլի ինքնուրույն չեն կարողանում կպցնել: Հետո խանգարում են. ուզում են մեծերին օգնել, լրիվ ճղում-պատռում են»:

Դաստիարակը տարբեր ուսումնական պլաններ է կազմում՝ հաշվի առնելով երեխաների նախասիրությունները:

Նկար 28. ՏՎ, Ոսկեպար, խմբասենյակ, ձեռակերտ պարագաներ

Նկար 29. ՏՎ, Ոսկեպար, խմբասենյակ, տեխնիկական կենտրոն

Դաստիարակը նշել է, որ տարեսկզբում տարրական բաներ կային, որ երեխաները չէին տիրապետում, իսկ տարվա վերջում արդեն որոշ չափով առաջադիմել են: Կային երեխաներ, որ շատ <<փակ>> էին, բայց ամեն կերպ նա շահադրդել է: Երեխաները կարող են արտասանել, լավ պարում են, տարբերում են երկրաչափական մարմինները, հաշվում են, գումարում-հանում: Ծնողները ֆոկուս խմբային քննարկման ժամանակ նշել են, որ իրենց երեխաները շատ բաներ են սովորել, հիանալի տերեվերջյան հանդես են կազմակերպել:

Ծնողները պնդել են, որ իրենց մեծ երեխաները այս նույն տարիքում ավելի դժվար են դպրոց եկել, իսկ այս երեխաները շատ են կապվել դպրոցի հետ, գիտեն նիստուկացը: *Սոցիալապես անապահով երեխայի ծնողը* նշել է, որ իր երեխային նախակրթրան բերելով նա ավելի շատ ժամանակ է կարողանում տրամադրել իր մյուս երեխաներին:

Ըստ տնօրենի ծնողների համար դժվարություն է միայն տրանսպորտի հարցը, սակայն գյուղացիներն օգնում են իրար ու ով մեքենա ունի, մի քանի հոգու բերում է դպրոց:

Գծապատկեր 16-ում ներկայացված են Ոսկեպարի նախակրթարանում կատարված պարապմունքների դիտարկման տվյալները: Այստեղ առավելագույն արտահայտվածություն ունի *Հարցեր* չափանիշը /100.00%/, իսկ ցածր արտահայտվածություն ունի *Նպատակ* չափանիշը

/50.00%/: Դա նշանակում է որ հստակ չի սահմանվում յուրաքանչյուր պարապմունքի նպատակն ու ընդհանուր պատկերի մեջ յուրաքանչյուրի պարապմունքի կարևորությունը: Այնուամենայնիվ, ընդհանուր պատկերը միջինից բարձր է:

Գծապատկեր 16. Ոսկեպարի նախակրթարանի պարապմունքի դիտարկման տվյալների վերլուծություն



Գծապատկեր 17. Ոսկեպարի երեխաների թեստավորման տվյալների վերլուծություն



Գծապատկեր 17–ում Ոսկեպար համայնքի նախակրթարանի երեխաների թեստավորման ու վերաթեստավորման արդյունքները վերլուծելիս տեսնում ենք, որ առավելապես աճ է դրսևորվել *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (6) մաթեմատիկական պատկերացումներ /41.67%→77.78%/ և *տրամաբանություն և մտածողություն* ենթաոլորտի (11) նմանությունների և տարբերությունների իմացություն /61.11%→94.44%/ ցուցանիշների մասով: Անփոփոխ են մնացել *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (2) տարածական պատկերացումներ /11.11%/, *տրամաբանություն և մտածողություն* ենթաոլորտի (4) օրինաչափությունների կազմում /50.00%/, *բանավոր խոսքի ընկալում* ենթաոլորտի (4) բազմաբայլ հրահանգների հետևում /88.89%/, և *մանր/նուրբ շարժողական* ենթաոլորտի (13) զգայաշարժողական հմտություններ /94.44%/ ցուցանիշները:

Ստուգիչ խմբի երեխաների թեստավորման ու վերաթեստավորման արդյունքներին նայելիս տեսնում ենք, որ փոփոխությունների չեն ենթարկվել *տրամաբանություն և մտածողություն* ենթաոլորտի (4) օրինաչափությունների կազմում /33.33%/ և *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (5) տարրական մաթեմատիկական պատկերացումներ /72.22%/ ցուցանիշները: Նվազել են՝ *վաղ գրաճանաչություն* ենթաոլորտի (1) տպագիր տեքստ /72.22%→55.56%/ և *տրամաբանություն և մտածողություն* ենթաոլորտի (11) նմանությունների և տարբերությունների իմացություն /44.44%→33.33%/ ցուցանիշները: Առավելապես աճել է *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (3) թվերի ճանաչում /22.22%→44.44%/ ցուցանիշը:

Նայելով Գծապատկեր 17-ին՝ կարող ենք տեսնել, որ Ոսկեպար համայնքի նախակրթարան հաճախող երեխաների թեստավորման արդյունքները՝ բոլոր ցուցանիշների մասով, հիմնականում գերազանցում են ստուգիչ խմբի երեխաների թեստավորման արդյունքներին՝ բացառությամբ *վաղ գրաճանաչություն* ենթաոլորտի (1) տպագիր տեքստ /11.11%/ ցուցանիշի: Տարբերություն չի գրանցվել հետևյալ ցուցանիշների մասով՝ *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (6) մաթեմատիկական պատկերացումներ /41.67%/, (10) ժամի ճանաչում /11.11%/, *վաղ գրաճանաչություն* ենթաոլորտի (8) տառաճանաչություն /0.00%/ և *մանր/նուրբ շարժողական* ենթաոլորտի (12) գրելու տարրական հմտություններ /0.00%/: Առավելագույն աճը գրանցվել է *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (3) թվերի ճանաչում /33.34%/ և *մանր/նուրբ շարժողական* ենթաոլորտի (13) զգայաշարժողական հմտություններ /33.33%/ ցուցանիշների մասով:

Համեմատելով նախակրթարան հաճախող ու չհաճախող երեխաների վերաթեստավորման արդյունքները՝ տեսնում ենք, որ նախակրթարան հաճախող երեխաներն ավելի բարձր արդյունք են ապահովել, քան չհաճախողները: Առավելապես տարբերվում է *տրամաբանություն և մտածողություն* ենթաոլորտի (11) նմանությունների և տարբերությունների իմացություն /61.11%/ ցուցանիշը:

Գծապատկեր 18: Ոսկեպարի երեխաների տվյալների համեմատությունը ըստ ենթաոլորտների



Ոսկեպար համայնքի նախակրթարանի երեխաների թեստավորման ու վերաթեստավորման արդյունքներին նայելիս (Գծապատկեր 18), տեսնում ենք, որ առավելապես աճ է դրսևորվել (4) *վաղ գրաճանաչություն* /22.22%/ ենթաոլորտի մասով:

Գծապատկեր 18-ից տեսնում ենք, որ ստուգիչ խմբի երեխաների թեստավորման ու վերաթեստավորման արդյունքները նվազել են՝ (2) *տրամաբանություն և մտածողություն* /5.56%/ և (4) *վաղ գրաճանաչություն* ենթաոլորտների /2.78%/ մասով:

Նայելով Գծապատկեր 18-ին՝ կարող ենք տեսնել, որ նախակրթարան հաճախող երեխաների թեստավորման արդյունքները՝ բոլոր ենթաոլորտների մասով գերազանցում են նախակրթարան չհաճախող երեխաների վերաթեստավորման արդյունքներին՝ բացառությամբ (4) *վաղ գրաճանաչություն* /5.55%/ ենթաոլորտի: Դրական տարբերությունը մեծ է (3) *բանավոր խոսքի ընկալում* /22.22%/ ենթաոլորտի մասով:

Համեմատելով նախակրթարան հաճախող ու չհաճախող երեխաների վերաթեստավորման արդյունքները՝ տեսնում ենք, որ նախակրթարան հաճախող երեխաներն ավելի բարձր արդյունք են ապահովել ստուգիչ խմբի երեխաներից: Առավելապես տարբերվում է (2) *տրամաբանություն և մտածողություն* /38.89%/ ենթաոլորտը:

5.2.3. «ՀՀ Տավուշի մարզի Ներքին Ծաղկավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Նախակրթարանը ստեղծված է դպրոցի հիմքի վրա, ունի երեխաների մեկ խումբ: Ըստ մեկ խմբի համար նախատեսված միկրոծրագրի բյուջեի մեծության՝ համայնքի նախակրթարանը մարզում դասակարգվում է «փոքր» միջոցներ (ընտրանքում ներառված մարզի համայնքների դասակարգման ֆինանսական չափանիշ) ունեցող նախակրթարանների շարքին:

Այցելությունների ընթացքում նախակրթարանը գործում էր հետևյալ *մոդելով*.

- ☐ շաբաթական 5 օր,
- ☐ աշխատանքային կարճօրյա ռեժիմ՝ 09:30-13:30,
- ☐ այցելությունների ժամանակ նախակրթարանում աշխատում էր մեկ դաստիարակ,
- ☐ դաստիարակը վերապատրաստված էր,
- ☐ նախակրթարանում ապահովվում էր մեկանգամյա տաք և սառը սնունդ,
- ☐ ջեռուցումը կատարվում էր դպրոցի կենտրոնական կաթսայատնից,
- ☐ նախակրթարանը չուներ քնելու հնարավորություն:

Նախակրթարանի ընդհանուր պայմանների նկարագրությունը հետևյալն է.

- ☐ Նախակրթարանին տրամադրված էր խմբասենյակ, հանդերձարան-խաղասենյակ և սանհանգույց (զուգարանակոնքերի միջև միջնորմ չկար):
- ☐ Խմբասենյակը, հանդերձարան-խաղասենյակը և սանհանգույցը համապատասխանում էին սահմանված վերանորոգվածության, անվտանգության, երեխաների չափսերին համապատասխանության, հասանելիության և մաքրության պահանջներին (քանի որ Ծրագրի շրջանակներում նախակրթարանում դաստիարակի օգնական չի նախատեսվում, դաստիարակը պարապմունքների ընթացքում չէր հասցնում հետևել սանհանգույցից օգտվելուց հետո երեխաների հիգիենային) (*Տե՛ս Նկարներ 30 և 31*):
- ☐ Նախակրթարանն ապահովված էր սառը ջրով (այն էլ ոչ ամեն օր՝ օրը մեջ):
- ☐ Նախակրթարանը ջեռուցվում էր կենտրոնացված ջեռուցման համակարգով, սակայն այցելության պահին բավականին ցուրտ էր:



Նկար 30. SU, Ն.. Ծաղկավան, սանհանգույց

Նկար 31. SU, Ն.Ծաղկավան, խմբասենյակ

Խմբասենյակի, խաղասենյակի, և աշխատանքային կենտրոնների պայմանները բավարարում էին սահմանված նորմերին, իսկ հագեցվածության տեսանկյունից՝ այդքան էլ հարուստ չէին (*Տե՛ս Նկարներ 32 և 33*): Նախակրթարանն ուներ հանդերձապահարաններ, գորգ, սեղան-աթոռ, պահարաններ, գրատախտակ, հեռուստացույց, բազմոց և այլն: Խմբասենյակն ու հանդերձասենյակը բավականին լուսավոր էին: Նախակրթարանի երեխաներին տրվում էր մեկանգամյա տաք և սառը սնունդ: Նախակրթարանն օգտագործում էր դպրոցի ճաշարանը:

Նկար 32. SU, Ն. Ծաղկավան, հանդերձարան-խաղասենյակ

Նկար 33. SU, Ն. Ծաղկավան, պահարան

Ըստ *տնօրենի*՝ ծրագրի հիմնական ուղղվածությունը երեխաներին դպրոցին նախապատրաստումն էր: Ավելին, *նախակրթարանի ստեղծումը* շատ կարևոր էր համայնքի համար, քանի որ համայնքում մանկապարտեզ չկար:

Նախակրթարանի ուժեղ կողմը, ըստ տնօրենի, լավ պատրաստված դաստիարակ և լավ պայմաններ ունենալն էր: Թույլ կողմն այն է, որ կարող է անցնել պետական ֆինանսավորման, ինչի հետևանքով կարող էին ֆինանսական խնդիրներ առաջանալ:

Նախակրթարանի *շենքային պայմանները* բարվոք էին, միայն ջրամատակարարումն էր օրը մեջ կատարվում: Դաստիարակը խորին հարցազրույցի ժամանակ նշել էր, որ մի քիչ ցուրտ էր նախակրթարանում, իսկ մնացած պայմաններից գոհ էր: Ֆոկուս խմբային քննարկման ժամանակ շենքային պայմանների հետ կապված ծնողները նշել էին, որ նախակրթարանի ընդհանուր պայմաններից շատ գոհ էին, սակայն նախակրթարարանում մի քիչ ցուրտ էր և խաղալիքներն էին քիչ:

Տնօրենը նշել էր, որ կապված գյուղից մարդկանց արտահոսքի հետ՝ բավականաչափ երեխաներ չունեին, ինչի հետևանքով էլ ֆինանսավորման հետ խնդիրներ էին առաջանում:

Խմբասենյակում դեռևս առանձնացված *աշխատանքային կենտրոններ չկային*: Նախակրթարանում առկա էին շատ քիչ ուսումնական նյութեր, դիդակտիկ պարագաներ ու խաղալիքներ: Նախակրթարանում քիչ թե շատ հագեցած էին սպորտի և արվեստի կենտրոնները: Մնացած կենտրոնների մասով *դիդակտիկ նյութերի* պակաս էր զգացվում, դաստիարակը խորին հարցազրույցի ժամանակ նշել էր, որ բոլոր կենտրոնների պարագաներն էլ կարելի է համալրել: Տնօրենը և դաստիարակը խորին հարցազրույցի ժամանակ նշել էին, որ ուսումնական պարագաները դեռ համալրման փուլում էին:

Նախակրթարանում աշխատում էին *տնօրենը* և մեկ *դաստիարակ:* Դաստիարակը նախկինում չէր աշխատել, վերապատրաստվել էր ու տիրապետում էր նախակրթարանի ուսումնական ծրագրի դրույթներին: Տնօրենը նախկինում աշխատել էր որպես դպրոցի ուսուցիչ, այնուհետև՝ տնօրեն:

Վերապատրաստումն անցել էր շատ հետաքրքիր: Դաստիարակը նշել էր, որ դասընթացը լավ էր կազմակերպված, նա ստացել էր անհրաժեշտ գիտելիքներ: Սակայն նա նշել էր, որ իրենց համայնքում չկային համապատասխան պայմաններ տրված գիտելիքներն ամբողջովին կիրառելու համար. ծրագիրը բարդ էր իրենց նախակրթարանի երեխաների համար: Կուզենար, որ դասընթացն ավելի երկար լիներ:

Դաստիարակը չուներ *պարապմունքի պլան-կոնսպեկտ*, չէր հաշվառում ժամանակի գործոնը, այնքան էլ հաջող չէր զուգակցում պարապմունքի անցկացման մեթոդները, պարապմունքների ժամանակ չէր կատարում խմբային աշխատանք, հետազոտություն, գիտելիքի ձեռքբերում համագործակցության միջոցով: Երեխաների նկատմամբ ցուցաբերում էր անհատական մոտեցում. բոլոր երեխաներն ընդգրկված էին պարապմունքին: Դաստիարակը պարապմունքի ընթացքում դրսևորում էր շարժունակություն, միմյանց օգնելու դեպքում խրախուսում էր, գովաբանում, հաջող էր գործարկում ուսումնական գործողությունները, օգտագործում էր երեխայի զարգացման դինամիկայի դիտարկման և գնահատման թերթիկները: Գենդերային հարցերում երեխաների միջև տարբերություն չէր դնում:

Դաստիարակը հարցազրույցի ժամանակ նշել էր, որ կիրառում էր պարապմունքի անցկացման երեխայակենտրոն ուսուցման սկզբունքը, քանի որ տարվում էր անհատական աշխատանք: Պարապմունքներն անց էր կացնում նկարչության և երգերի միջոցով: Դաստիարակը կենտրոնանում էր լեզվական և շարժողական ոլորտի վրա, իրականացնում էր անհատական

գնահատում, պլանավորում էր դասընթացը ամսական: Պլանանավորման մասով դաստիարակը նշել էր, որ ցանկալի կլիներ ունենալ ուսուցման հստակ ծրագիր:

Դաստիարակը նշում էր, որ ամենաուժեղ երեխան շատ ընդունակ էր, շատ արագ էր սովորում: Թույլ երեխան սոցիալապես անապահով ընտանիքից էր և բավականին պասիվ էր: Ըստ դաստիարակի՝ երեխաների ընդունակությունները, սեռից կախված, չէին տարբերվում:

Ծնողները այդքան էլ չէին մասնակցում նախակրթարանի կյանքին, սակայն ամեն օր տեղեկանում էին երեխաների առաջընթացի մասին:

Համայնքի բնակիչները հիմնականում գյուղատնտեսությամբ էին զբաղվում, սակայն հողակտորների մեծ մասը սահմանամերձ էին, ըստ այդմ չէին կարողանում ամբողջությամբ մշակել: Դաստիարակի գնահատմամբ, համայնքի *ընտանիքների սոցիալ-տնտեսական վիճակը* միջին էր:

Տնօրենը գտնում էր, որ *համայնքի սոցիալ-տնտեսական վիճակն* ուղղակիորեն էր ազդում երեխաների զարգացվածության վրա. ծնողներն ի վիճակի չէին երեխաների համար բավարար պայմաններ ապահովել: Դաստիարակը գտնում էր, որ սոցիալ-տնտեսական պայմանների ազդեցությունը երեխաների զարգացվածության վրա նկատելի էր. երեխաներն ընկճված էին:

Ծնողների հետ անցկացված ֆոկուս խմբային քննարկման ժամանակ ներկաների ընտանիքները բաղկացած էին 6-10 հոգուց, 9 ընտանիքներից 6-ը նպաստառու ընտանիքներ էին: Ինը ընտանիքներից յոթում աշխատող անձ կար: Ընտանիքները զբաղվում էին գյուղատնտեսությամբ՝ ունեին ընտանի կենդանիներ, զբաղվում էին հողագործությամբ: Այս աշխատանքներում միայն մեկ ընտանիքի դեպքում էր, որ երեխան յուրովսանն օգնում էր: Երեխաների՝ նախակրթարան հաճախելու հիմնական նպատակը դպրոցին պատրաստ լինելն էր, այլ երեխաների հետ շփվելը: Ծնողները գոհ էին դաստիարակից, քանի որ ըստ ծնողների, ջերմ էր, քնքույշ էր և համբերատար:

Տվյալ ընտանիքների երեխաները տանը հիմնականում ներգրավված էին տնային պարզ գործերում՝ գնումներ կատարել, իրենց ետևից հավաքել: Իսկ ահա *սոցիալապես անապահով ընտանիքի* երեխան նաև փայտ էր կոտրատում, վարուցան անում: Մեծ մասամբ, երեխաներն ինքնուրույն էին միայն սնվելու, հագնվելու, լվացվելու հարցերում, իսկ լոգանքի, սանհանգույցից օգտվելու պարագայում մայրերը պարտադիր օգնում էին:

Երեխայի խնամքի պատասխանատուները հիմնականում մայրերն էին, երբեմն օգնում էին նաև հայրերն ու տատիկները: Մոր բացակայության ժամանակ երեխային խնամում էին հիմնականում հայրիկն ու տատիկները, սակայն հիմնականում բացակայությունները հաճախակի բնույթ չէին կրում՝ դպրոց կամ խանութ գնալ, հիվանդանոց գնալ, որոշ դեպքերում նաև աշխատանքի գնալ: Երեխայի դաստիարակության պատասխանատուները հիմնականում մայրերն ու հայրերն էին: Երեխայի առօրյան հիմնականում պլանավորում էին մայրերը՝ հնարավորության դեպքում հաշվի առնելով երեխայի ցանկությունները:

Ծնողները հիմնականում գտնում էին, որ ծնողի որոշումներն ու պահանջները պետք էր բացատրել երեխային: Երեխայի արարքներից պատժելի էին սուտը, քույր-եղբայրների հետ վիճելը:

Հիմնականում պատժելու միջոցն էր սիրած զբաղմունքից զրկելը: *Սոցիալապես անապահով ընտանիքի* ծնողը երեխային պատժում էր ծեծելով:

Նախակրթարանի երեխաների մեծամասնությունը չէր հաճախել մանկապարտեզ, քանի որ համայնքում մանկապարտեզ չէր եղել:

Ծնողները կարծում էին, որ երեխայի զարգացման վրա մեծ ազդեցություն ունեին այլ երեխաների, ծնողների ազդեցությունն ու ուսուցման պայմանները:

Ընդհանուր առմամբ, ծնողները շատ գոհ էին նախակրթարանի աշխատանքից, դաստիարակի մոտեցումից ու այն հնարավորությունից, որ իրենց երեխան դպրոցին նախապատրաստված կլիներ:

Երեխաներին որևէ բան սովորեցնելիս ծնողները դիմում էին խաղերի, երգերի օգնությանը, ներգրավում էին քույր-եղբայրներին:

Այս նախակրթարանի գործարկման համար ծնողական և համայնքային ներդրում չէր կատարվել: Ծնողները սննդի համար վճարում էին ամսական 500 դրամ:

Տնօրենը ծրագրի շարունակականությունը պատրաստվում էր ապահովել համայնքի, ծնողների ու բարերարների օգնությամբ:

Տարվա վերջի այցելության նկարագրությունը ներկայացված է ստորև:

Շենքային պայմանները բարեկարգ են, սակայն ըստ տնօրենի իրենք ձգտում են բարելավել նաև բացօթյա խաղահրապարակն ու մարզադահլիճը:

Տնօրենը նշել է, որ դպրոցն ունի ֆինանսավորման խնդիր, քանի որ աշակերտները քիչ են: Սակայն նա կարծում է, որ նախակրթարանի ստեղծումը կլուծի դպրոցի ֆինանսավորման խնդիրը, քանի որ նախակրթարանի հեղինակությունը բարձր է և հարևան գյուղերից էլ աշակերտներ կունենան: Օրինակ, 2017 թ. սեպտեմբերի համար իրենց համայնքից հերթագրվել է յոթ երեխա, հարևան գյուղերից՝ չորսը:

Աշխատանքային կենտրոններում տարվա սկզբի համեմատ ավելացել էին որոշակի ձեռակերտ պարագաներ, խմբասենյակը զարդարված էր երեխաների նկարած նկարներով: Դաստիարակը նշել է, որ ցանկալի կլիներ որոշ խաղալիքներ ունենալ *(Տե՛ս Նկար 34)*: Այս մասով ցանկություն են հայտնել նաև ծնողները՝ նշելով հատկապես տրամաբանությունը խթանող խաղերի կարիքը:

Ըստ տնօրենի դաստիարակը տարվա սկզբում սթրեսային վիճակում էր, ինքն էլ երեխաների նման անփորձ էր: Սակայն տարվա վերջում բավականին փորձառու է դարձել:

Տնօրենը հարցազրույցի ժամանակ նշել է, որ նախակրթարանը համայնքի երեխաներին հնարավորություն է տալիս պատրաստված մուտք գործել դպրոց: Քանի որ համայնքում հիմնականում սոցիալապես անապահով ընտանիքներ են (ըստ տնօրենի՝ 90%-ը) ապրում, նախակրթարանի ստեղծումը հնարավորություն է տվել երեխաներին օրվա մեջ գոնե մի քանի ժամ

գեղեցիկ կահավորված միջավայրում անցկացնել, որակյալ սնունդ ընդունել: Ըստ տնօրենի՝ երեխաները տարրական շատ հմտություններ չունեին, օրինակ՝ սանհանգույցից օգտվել չգիտեին:

Նկար 34. ՏՎ, Ներքին Ծաղկավանի, խմբասենյակ

Ըստ դաստիարակի՝ երեխաները շատ ակտիվ են դարձել, սովորել են որոշ տառեր, թվերը, նիստ ու կաց են սովորել: Նա նաև պնդում է, որ ըստ սեռի երեխաների ընդունակությունների տարբերությունները դիտարկելիս ակնհայտ է, որ աղջիկներն ավելի <<ուժեղ>> են, քանի որ աշխատասեր են: Ծնողների հետ ունեցած ֆոկուս խմբային քննարկումից պարզ դարձավ, որ երեխաները նախակրթարանում նկարել են սովորել, ծեփամածիկով են աշխատում, տանը ծնողները շատ ժամանակ չեն կարողանում անցկացնել իրենց երեխաների հետ: Ծնողներից մեկը նույնիսկ նշել է, որ երբեմն դաստիարակի թույլտվությամբ դասալսումներ է իրականացնում: *Սոցիալապես անապահով ծնողը* հարցազրույցի ժամանակ նշել է, որ իր երեխայի մոտ բավականին մեծ առաջընթաց է նկատել:

Ըստ տնօրենի՝ նախակրթարանի ծնողներն ունեցել են սոցիալականացման խնդիր և ինչքան դաստիարակն է աշխատել երեխաները հետ, այնքան ինքն է աշխատելը ծնողների հետ: Դաստիարակը հարցազրույցի ժամանակ նշել է, որ ծնողները ժամանակ առ ժամանակ իր խնդրանքով գրենական պիտույքներ են տրամադրում նախակրթարանին: Այս առումով ծնողները նշել են, որ ամսական 200 դրամ հավաքում են գրենական պիտույքների համար (ծնողկոմիտեն է հավաքում) և 500 դրամ սննդի համար:

Ծնողները ֆոկուս խմբային քննարկման ժամանակ նշել են, որն կցանկանային, որ երեխաները խմբակների մասնակցեին: Կան ընտանիքներ, որ շատ հեռու են ապրում (կան երեխաներ, որ հարևան համայնքից են գալիս) ու գալ-գնալու առումով դժվարություններ են առաջանում, այնուամենայնիվ, մեծ սիրով իրենց երեխային բերում են նախակրթարան:

Ներքին Ծաղկավանի նախակրթարանում դիտարկված պարապմունքների տվյալները բավական բարձր են (Գծապատկեր 19): Առավելագույն արտահայտվածություն ունեն *Նպատակ,*

Ուսումնական գործողություններ և Հարցեր չափանիշները /100.00%/, չնայած մյուս չափանիշներն էլ գտնվում են 78.13% - 87.77% միջակայքում:

Գծապատկեր 19. Ներքին Ծաղկավանի նախակրթարանի պարապմունքի դիտարկման տվյալների վերլուծություն



Գծապատկեր 20. Ն. Ծաղկավանի երեխաների թեստավորման տվյալների վերլուծություն



Գծապատկեր 20–ում Ն. Ծաղկավան համայնքի նախակրթարանի երեխաների թեստավորման ու վերաթեստավորման արդյունքներին նայելիս տեսնում ենք, որ առավելապես աճ է դրսևորվել *տրամաբանություն և մտածողություն* ենթաոլորտի (11) նմանությունների և տարբերությունների իմացություն /50.00%→87.50%/ ցուցանիշի մասով: Անփոփոխ են մնացել՝ *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (5) տարրական մաթեմատիկական պատկերացում /93.75%/ և *մանր/նուրբ շարժողական* ենթաոլորտի (13) զգայաշարժողական հմտություններ /100.00%/ ցուցանիշները:

Ն. Ծաղկավան համայնքի ստուգիչ խմբի երեխաների վերաթեստավորման արդյունքը առավելապես գերազանցում է թեստավորման արդյունքին՝ *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (3) թվերի ճանաչում /25.00%/ և (9) աջի և ձախի իմացություն /25.00%/ ցուցանիշների մասով: Վերաթեստավորման արդյունքը զիջել է թեստավորման արդյունքին *բանավոր խոսքի ընկալում* ենթաոլորտի (7) բազմաբայլ հրահանգենրի հետևում /37.50%/ ցուցանիշի մասով: Փոփոխություն չի գրանցվել՝ *վաղ գրաճանաչություն* ենթաոլորտի (1) տպագիր տեքստ /43.75%/, (8) տառաճանաչություն /0.00%/, *տրամաբանություն և մտածողություն* ենթաոլորտի (4) օրինաչափությունների կազմում /31.25%/ և *մանր/նուրբ շարժողական* ենթաոլորտի (12) գրելու տարրական հմտություններ /0.00%/ ցուցանիշների մասով:

Նայելով Գծապատկեր 20-ին՝ կարող ենք տեսնել, որ Ն. Ծաղկավան համայնքի նախակրթարան հաճախող երեխաների թեստավորման արդյունքները բոլոր ցուցանիշների մասով գերազանցում են ստուգիչ խմբի երեխաների թեստավորման արդյունքներին՝ բացառությամբ *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (2) տարածական պատկերացումներ ցուցանիշի, որի դեպքում արդյունքները հավասար են՝ 0.00%: Թիրախային խմբի արդյունքների գերազանցելիությունը ստուգիչ խմբի արդյունքների նկատմամբ առավելապես արտահայտված է *վաղ գրաճանաչություն* ենթաոլորտի (1) տպագիր տեքստ /37.5%/ ցուցանիշի մասով:

Համեմատելով թիրախային ու ստուգիչ խմբերի երեխաների վերաթեստավորման արդյունքները՝ տեսնում ենք, որ թիրախային խումբն ավելի բարձր արդյունք է ապահովել, քան ստուգիչ խումբը: Առավելագույն տարբերություն է գրանցվել *բանավոր խոսքի ընկալում* ենթաոլորտի (7) բազմաբայլ հրահանգների հետևում /62.5%/ ցուցանիշի մասով:

Գծապատկեր 21: Ն. Ծաղկավանի երեխաների տվյալների համեմատությունը ըստ ենթաոլորտների



Ն. Ծաղկավան համայնքի նախակրթարանի երեխաների թեստավորման ու վերաթեստավորման արդյունքներին նայելիս (Գծապատկեր 21), տեսնում ենք, որ առավելապես աճ է դրսևորվել (2) *տրամաբանություն և մտածողություն* /50.00%→75.00%/ ենթաոլորտի մասով:

Ստուգիչ խմբի երեխաների թեստավորման ու վերաթեստավորման արդյունքներին նայելիս (Գծապատկեր 21), տեսնում ենք, որ առավելապես աճ է գրանցվել (1) *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* /35.42%→47.92%/ ենթաոլորտի մասով, իսկ (3) *բանավոր խոսքի ընկալում* ենթաոլորտը նվազել է 37.5%-ով: Անփոփոխ է մնացել (4) *վաղ գրաճանաչություն* ենթաոլորտը /21.88%/:

Գծապատկեր 21-ում երևում է, որ թեստավորման մասով նախակրթարան հաճախող երեխաների արդյունքները գերազանցում են նախակրթարան չհաճախող երեխաների արդյունքներին: Առավելապես գերազանցում է (4) *վաղ գրաճանաչություն* /31.25%/ ենթաոլորտը:

Համեմատելով նախակրթարան հաճախող ու չհաճախող երեխաների վերաթեստավորման արդյունքները՝ տեսնում ենք, որ նորից նախակրթարան հաճախող երեխաներն ավելի բարձր արդյունք են ապահովել ստուգիչ խմբի երեխաներից: Առավելապես տարբերվում է (3) *բանավոր խոսքի ընկալում* /62.5%/ ենթաոլորտը:

5.2.4. Ընդհանրացված վերլուծություն

Տավուշի մարզի երեք նախակրթարաններից միայն Ոսկեպարում է գրանցվել պարապմունքների դիտարկման միջին գնահատական, այն էլ *Նպատակ* չափանիշի համար: Իսկ Դովեղում և Ներքին Ծաղկավանում բավականին հաջող էին իրականացնում ծրագիրը և չափանիշները հիմնականում գտնվում էին 80% և ավելի միջակայքում: Մարզային կտրվածքով իրականցված պարապմունքների վերլուծությունը թույլ է տալիս պարզել, որ առավելագույն արտահայտվածություն ունի *Հարցեր* չափանիշը /100%/: Մյուս չափանիշներն էլ գտնվում են 77% և ավելի միջակայքում:

Գծապատկեր 22. Տավուշի մարզի նախակրթարանների պարապմունքի դիտարկման չափանիշների ընդհանրացված վերլուծություն



Գծապատկեր 23: Տավուշի մարզի երեխաների տվյալների համեմատությունը ըստ ենթաոլորտների



Տավուշի մարզի նախակրթարաններ հաճախող երեխաների թեստավորման ու վերաթեստավորման արդյունքներին նայելիս (Գծապատկեր 23–ում), տեսնում ենք, որ առավելապես աճ է դրսևորվել *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (6) մաթեմատիկական պատկերացումներ /38.19%→68.63%/, (3) թվերի ճանաչում /43.52%→73.15%/ և *տրամաբանություն և մտածողություն* ենթաոլորտի (11) նմանության և տարբերության իմացություն /55.09%→78.70%/ ցուցանիշների մասով:

Նախակրթարան չհաճախող երեխաների թեստավորման արդյունքները մեծ մասամբ գերազանցում են վերաթեստավորման արդյունքներին: Ուսումնական տարվա վերջում առավելապես նվազել են *վաղ գրաճանաչություն* ենթաոլորտի (1) տպագիր տեքստ /52.55%→45.60%/ ցուցանիշը, իսկ աճել՝ *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (3) թվերի ճանաչում /28.24%→46.76%/ ցուցանիշը: Անփոփոխ են մնացել՝ *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (2) տարածական պատկերացումներ /0.00%/ և *տրամաբանություն և մտածողություն* ենթաոլորտի (4) օրինաչափությունների կազմում /29.86%/ ցուցանիշները:

Գծապատկեր 23-ին նայելով կարող ենք տեսնել, որ Տավուշի մարզում նախակրթարան հաճախող երեխաների թեստավորման արդյունքները գերազանցում են նախակրթարան չհաճախող երեխաների թեստավորման արդյունքներին: Մարզի նախակրթարան հաճախող ու չհաճախող երեխաների վերաթեստավորման արդյունքները ևս նույնն են: Առավելապես տարբերվում են՝ *վաղ գրաճանաչություն* ենթաոլորտի (1) տպագիր տեքստ /40.05%/ և *տրամաբանություն և մտածողություն* ենթաոլորտի (11) նմանության և տարբերության իմացություն /39.12%/ ցուցանիշները:

Գծապատկեր 24. Տավուշի թեստավորման տվյալների վերլուծությունը՝ ըստ ենթաոլորտների



Գծապատկեր 24-ից տեսնում ենք, որ Տավուշի մարզում նախակրթարանի ծրագիրն արդյունավետ ընթացք է ունեցել՝ նկատվում է դրական դինամիկա ծրագրում ընդգրկված երեխաների զարգացման մակարդակում:

5.3. Լոռու մարզ

Մարզում ընտրվել են երեք քաղաքային համայնքներ, որոնց նախակրթարանները ստեղծվել էին դպրոցի հիմքով: Այս մարզում ընտրված համայնքներն են՝ Ստեփանավանը, Սպիտակը, Վանաձորը:

5.3.1. «Ստեփանավանի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Նախակրթարանը ստեղծված է դպրոցի հիմքի վրա, ունի երեխաների մեկ խումբ: Ըստ մեկ խմբի համար նախատեսված միկրոծրագրի բյուջեի մեծության՝ համայնքի նախակրթարանը մարզում դասակարգվում է «փոքր» միջոցներ (ընտրանքում ներառված մարզի համայնքների դասակարգման ֆինանսական չափանիշ) ունեցող նախակրթարանների շարքին:

Այցելությունների ընթացքում նախակրթարանը գործում էր հետևյալ *մոդելով*.

- ☐ շաբաթական 5 օր,
- ☐ աշխատանքային կարճօրյա ռեժիմ՝ 09:00-13:00,
- ☐ այցելությունների ժամանակ նախակրթարանում աշխատում էր մեկ դաստիարակ,
- ☐ դաստիարակը վերապատրաստված էր,
- ☐ նախակրթարանում ապահովվում էր մեկանգամյա տաք և սառը սնունդ,
- ☐ ջեռուցումը կատարվում էր դպրոցի կենտրոնական կաթսայատնից,
- ☐ նախակրթարանը չուներ քնելու հնարավորություն:

Նախակրթարանի ընդհանուր պայմանների նկարագրությունը հետևյալն է.

- ☐ Նախակրթարանին տրամադրված էր խմբասենյակ, խաղասենյակ և սանհանգույց:
- ☐ Խմբասենյակը, խաղասենյակը և սանհանգույցը համապատասխանում էին սահմանված վերանորոգվածության, անվտանգության, երեխաների չափսերին համապատասխանության, հասանելիության և մաքրության պահանջներին (քանի որ Ծրագրի շրջանակներում նախակրթարանում դաստիարակի օգնական չի նախատեսվում, դաստիարակը պարապմունքների ընթացքում չէր հասցնում հետևել սանհանգույցից օգտվելուց հետո երեխաների հիգիենային) (*Տե՛ս Նկար 35 և 36*):
- ☐ Նախակրթարանն ապահովված էր սառը ջրով (այն էլ ոչ ամեն օր՝ օրը մեջ):
- ☐ Նախակրթարանը ջեռուցվում էր կենտրոնացված ջեռուցման համակարգով:

Նկար 35. SU, Ստեփանավան, սանհանգույց

Նկար 36. SU, Ստեփանավան, խմբասենյակ

Խմբասենյակի, խաղասենյակի, և աշխատանքային կենտրոնների պայմանները բավարարում էին սահմանված նորմերին, իսկ հագեցվածության տեսանկյունից՝ այդքան էլ հարուստ չէին (*Տե՛ս Նկարներ 37 և 38*): Նախակրթարանն ուներ հանդերձապահարաններ (տեղակայված էին միջանցքում), սեղան-աթոռ, պահարաններ, գրատախտակ, հեռուստացույց և այլն: Խմբասենյակն ու խաղասենյակը բավականին լուսավոր էին: Նախակրթարանի երեխաներին տրվում էր մեկանգամյա տաք և սառը սնունդ: Նախակրթարանն օգտագործում էր դպրոցի ճաշարանը:

Նկար 37. SU, Ստեփանավան, հանդերձապահարաններ

Նկար 38. SU, Ստեփանավան, պահարան

Ըստ *տնօրենի*՝ ծրագրի հիմնական ուղղվածությունն էր ներգրավել այն երեխաներին, ովքեր դուրս էին մնացել մանկապարտեզից՝ վարձի, հեռավորության և այլ պատճառներով:

Նախակրթարանի ուժեղ կողմը, ըստ տնօրենի, այն էր, որ երեխաները նախապատրաստվում էին դպրոցին, խումբ էր ձևավորվում, որ հետագայում միասին գնային առաջին դասարան, նախապատրաստվում էին հոգեբանորեն: Թույլ կողմն այն էր, որ ծնողները օրվա ռեժիմը երկարեցնելու ցանկություն էին հայտնել, սակայն քնելու հնարավորություններ չունենալու պատճառով այն հնարավոր չէր իրականացնել:

Նախակրթարանի *շենքային պայմանները* բարվոք էին: Ֆոկուս խմբային քննարկման ժամանակ շենքային պայմանների հետ կապված ծնողները նշել էին, որ նախակրթարանի ընդհանուր պայմաններից շատ գոհ էին, սենյակում բավական տաք էր:

Աշխատանքային կենտրոնները խմբասենյակում առանձնացված էին, սակայն քիչ էին ուսումնական նյութերը, դիդակտիկ պարագաներն ու խաղալիքները: Նախակրթարանում հագեցած էին մաթեմատիկայի, արվեստի, շինարարության կենտրոնները: Մնացած կենտրոնների մասով *դիդակտիկ նյութերի* պակաս էր զգացվում: Դաստիարակը և տնօրենը խորին հարցազրույցների ժամանակ նշել էին, որ խաղալիքները մի քիչ քիչ էին, և որքան գումարը բավարարել էր, այնքան էին գնել:

Նախակրթարանում աշխատում էին *տնօրենը* և մեկ *դաստիարակ:* Դաստիարակը նախկինում չէր աշխատել, վերապատրաստվել էր ու տիրապետում էր նախակրթարանի ուսումնական ծրագրի դրույթներին: Տնօրենը նախկինում աշխատել էր որպես դպրոցի կենսաբանության ուսուցիչ, այնուհետև 5 տարի առաջ դարձել էր տնօրեն:

Վերապատրաստումն անցել էր շատ նյութառատ ու հետաքրքիր: Դաստիարակը նշել էր, որ դասընթացը լավ էր կազմակերպված, նա ստացել էր նոր գիտելիքներ, և որ իրենց համայնքում ստացած նոր գիտելիքներն ամբողջովին կիրառելի էին: Կուզենար, որ դասընթացն ավելի երկար լիներ:

Դաստիարակն ուներ *պարապմունքի պլան-կոնսպեկտ*, սակայն չէր հաշառում միայն ժամանակի գործոնը: Նա հաջող զուգակցում էր պարապմունքի անցկացման մեթոդները, պարապմունքների ժամանակ կատարում էր խմբային աշխատանք, հետազոտություն, երեխաները գիտելիքը ձեռք էին բերում համագործակցության միջոցով: Երեխաների նկատմամբ դաստիարակը ցուցաբերում էր անհատական մոտեցում, բոլոր երեխաներն ընդգրկված էին պարապմունքին: Դաստիարակը պարապմունքի ընթացքում դրսևորում էր շարժունակություն, միմյանց օգնելու դեպքում խրախուսում էր, գովաբանում, հաջող էր գործարկում ուսումնական գործողությունները, օգտագործում էր երեխայի զարգացման դինամիկայի դիտարկման և գնահատման թերթիկները: Գենդերային հարցերում երեխաների միջև տարբերություն չէր դնում:

Դաստիարակը հարցազրույցի ժամանակ նշել էր, որ կիրառում էր պարապմունքի անցկացման երեխայակենտրոն ուսուցման սկզբունքը, քանի որ այն թույլ էր տալիս, որ երեխաներն ինքնուրույն աշխատեն: Պարապմունքներն անց էր կացնում հիմնականում խաղերի միջոցով: Դաստիարակը նշել էր, որ բոլոր ոլորտներին էլ հավասարաչափ ուշադրություն ու ժամանակ էր տրամադրել, իրականացնում էր խմբային գնահատում, որի բացասական կողմն այն էր, որ ժամանակատար էր և դժվար: Դաստիարակը պլանավորում էր դասընթացը օրական: Պլանանավորման մասով դաստիարակը նշել էր, որ ցանկալի կլիներ ուսուցման հստակ ծրագիր ունենալը, ինչը միանշանակ կհեշտացներ իրենց աշխատանքը:

Դաստիարակը նշում էր, որ ամենաուժեղ երեխան անմիջապես ընկալում էր նյութն ու արագ պատասխաններ տալիս: Թույլ երեխան նյութը միայն մի քանի անգամ անցնելուց հետո էր

յուրացնում, իսկ միջին ընդունակություններով երեխաները բավականին ակտիվ էին, պետք էր պարզապես, որ կենտրոնանային: Ըստ դաստիարակի՝ երեխաների ընդունակությունները, սեռից կախված, տարբերվում էին. տղաներն ավելի ընդունակ էին:

Ծնողների մի մասը շատ ակտիվ էր. սնվելու ժամանակ գալիս էր ու օգնում դաստիարակին: Վերջինս նշել էր, որ ծնողների հետ միասին էին ստեղծել բնագիտության անկյունը: Երեխաների առաջընթացի մասին ծնողները տեղեկանում էին ժողովների ժամանակ ու անհատապես:

Տնօրենը գտնում էր, որ *համայնքի սոցիալ-տնտեսական վիճակը* ինչպես ամեն տեղ, բազմաշերտ էր, բայց կային ընտանիքներ, որ ծայրահեղ վատ պայմաններում էին ապրում: Դաստիարակը գտնում էր, որ համայնքի ընտանիքների սոցիալ-տնտեսական վիճակը վատ էր և ուղղակիորեն էր ազդում երեխաների զարգացվածության վրա, քանի որ նրանք ուրիշ մտածմունքներ ունեին և չէին կենտրոնանում սովորելու վրա: *Սոցիալապես անապահով ծնողը* նշել էր, որ իրենք ապրում էին Կարմիր խաչի գերմանական տնակներում ու պայմաններն այդքան էլ հաջող չէին, ընտանիքի հայրը միայն մեկ-մեկ արտագնա աշխատանքի էր գնում:

Ծնողների հետ անցկացված ֆոկուս խմբային քննարկման ժամանակ ներկաների ընտանիքները բաղկացած էին 3-9 հոգուց, ոչ մի ընտանիքում աշխատող անձ չկար: Հիմնականում ընտանիքները նպաստառու էին: Երկու ընտանիք զբաղվում էր գյուղատնտեսությամբ՝ ունեին ընտանի կենդանիներ, զբաղվում էր հողագործությամբ: Այս ընտանիքներից մեկը *սոցիալապես անապահով ընտանիքն* էր: Այս ընտանիքում երեխաները առավելապես ընդգրկված էին գյուղատնտեսական աշխատանքներում, մասնավորապես՝ կենդանիներին քշում էին, կանգնում նրանց մոտ, որ չփախչեն, հողը փոցխում էին, կարտոֆիլ հավաքում: Երեխաների՝ նախակրթարան հաճախելու հիմնական նպատակը դպրոցին պատրաստ լինելն էր, այլ երեխաների հետ շփվելը: Ծնողները գոհ էին դաստիարակից, երեխաների նկատմամբ նրա վերաբերմունքից:

Տվյալ ընտանիքների երեխաները տանը հիմնականում ներգրավված էին տնային պարզ գործերում, հավաքում էին իրենց ետևից, մոտիկ խանութ էին գնում՝ հաց գնելու: Մեծ մասամբ, երեխաներն ինքնուրույն էին միայն սնվելու, հագնվելու, լվացվելու հարցերում, իսկ, օրինակ, լոգանքի, սանհանգույցից օգտվելու պարագայում մայրը պարտադիր օգնում էր:

Երեխայի խնամքի պատասխանատուները հիմնականում մայրերն էին, երբեմն օգնում էին նաև հայրերն ու տատիկները: Մայրերի բացակայության ժամանակ երեխային խնամում էին հիմնականում հայրերը, տատիկները, սակայն բացակայությունները հաճախակի բնույթ չէին կրում: Երեխայի դաստիարակության պատասխանատուները հիմնականում մայրերն ու հայրերն էին: Երեխայի առօրյան հիմնականում պլանավորում էին մայրերը՝ հնարավորության դեպքում հաշվի առնելով երեխայի ցանկությունները:

Ծնողները հիմնականում գտնում էին, որ ծնողի որոշումներն ու պահանջները պետք էր բացատրել երեխային: Երեխայի արարքներից պատժելի էին սուտը, մեծերին չլսելը, երկար համակարգչի առաջ մնալը: Հիմնականում պատժելու միջոցներն էին սիրած զբաղմունքից զրկելը,

սիրած իրը չգնելը: *Սոցիալապես անապահով ընտանիքի* ծնողը երեխային չէր պատժում, այլ խոսքով բացատրում էր:

Նախակրթարանի երեխաների մեծամասնությունը հաճախել էին մանկապարտեզ, հիմնականում երեխաները ինքնուրույնություն ու նոր գիտելիքներ էին ստացել, ավելի շփվող էին դարձել:

Ծնողները կարծում էին, որ երեխայի զարգացման վրա մեծ ազդեցություն ունեին ուսուցման պայմանները, երեխաների և ծնողների ազդեցությունը:

Երեխաներին որևէ բան սովորեցնելիս ծնողները համոզում էին, ոգևորում:

Այս նախակրթարանի գործարկման համար համայնքային ներդրում էր կատարվել: Իսկ ծնողները միայն սննդի համար էին վճարում, քանի որ ծրագրով սնունդ նախատեսված չէր:

Տնօրենը միկրոծրագրի շարունակականության վտանգ չէր տեսնում:

Տարվա վերջի այցելության նկարագրությունը ներկայացված է ստորև:

Շենքային պայմանները բարեկարգ են, տեղ-տեղ վերանորոգել են (*Տե՛ս Նկար 39*), սակայն ըստ տնօրենի՝ իրենց շենքը կապիտալ վերանորոգման կարիք ունի: Ինչ վերաբերում է ծրագրի շարունակականությանը, ապա տնօրենը գտնում է, որ եթե պետական ֆինանսավորում չլինի, ծրագիրը չի աշխատի: Դաստիարակն իր հետ անցկացված հարցազրույցում նշել էր կցանկանար, որ բացօթյա խաղահրապարակում խաղային պարագաներ լինեին, խմբասենյակի աշխատանքային կենտրոններում ավելի որակյալ ու քանակով շատ խաղալիքներ լինեին:

Նկար 39. ՏՎ, Ստեփանավան, սանհանգույց

Նկար 40. ՏՎ, Ստեփանավան, խմբասենյակ

Աշխատանքային կենտրոններում տարվա սկզբի համեմատ ավելացել էին որոշակի ձեռակերտ պարագաներ *(Տե՛ս Նկար 40)*, խմբասենյակը զարդարված էր նկարներով, գունավոր թղթե թիթեռներով և այլն: Տնօրենը նշել է, որ դպրոցի ուսուցիչներից գալիս են և անհատույց նախակրթարանի երեխաներին սովորեցնում ռուսերենի ու անգլերենի տարրական հմտություններ:

Ըստ դաստիարակի՝ երեխաները տարվա վերջում շատ ակտիվ են դարձել, սովորել են որոշ տառեր, մինչև 10 թվերը գումարում-հանում են կատարում, գույները գիտեն և այլն: Նա նաև պնդում է, որ ըստ սեռի երեխաների ընդունակությունների տարբերությունները դիտարկելիս ակնհայտ է, որ տղաներն ավելի <<ուժեղ>> են: Տնօրենը հարցազրույցի ժամանակ նշել է, որ նախակրթարանը համայնքի երեխաներին հնարավորություն է տալիս պատրաստված մուտք գործել դպրոց: Ֆոկուս խմբային քննարկման ժամանակ ծնողները նշել են, որ երեխաներին նախակրթարանը սովորեցրել է գրական խոսել: *Սոցիալապես անապահով ծնողը* հարցազրույցի ժամանակ նշել է, որ իր երեխայի մոտ բավականին մեծ առաջընթաց է նկատել:

Գծապատկեր 25-ից երևում է, որ Ստեփանավանում պարապմունքները շատ արդյունավետ են անցկացվում: Բոլոր ցուցանիշներն ունեն 80.00%-ից բարձր արտահայտվածություն: Ավելին, 100.00% արտահայտվածություն ունեն *Նպատակ*, *Ուսումնական գործողություններ*, *Հարցեր* և *Երեխաների ակտիվություն* չափանիշները: Չափանիշների ընդհանուր պատկերում համեմատական ցածր արտահայտվածություն ունի *Ժամանակ* չափանիշը /80.00%/:

Գծապատկեր 25. Ստեփանավանի նախակրթարանում պարապմունքի դիտարկման տվյալների վերլուծություն



Գծապատկեր 26. Ստեփանավանի երեխաների թեստավորման տվյալների վերլուծություն



Ստեփանավան համայնքի նախակրթարանի երեխաների թեստավորման ու վերաթեստավորման արդյունքներին նայելիս (Գծապատկեր 26–ում), տեսնում ենք, որ բոլոր ցուցանիշների մասով աճ է դրսևորվել՝ բացառությամբ *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (2) տարածական պատկերացումներ ցուցանիշի, որ մնացել է նույն սանդղակում՝0.00%: Առավելապես աճել են հետևյալ ցուցանիշները՝ *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (6) մաթեմատիկական պատկերացումներ /27.5%→80.00%/, (3) թվերի ճանաչում /50.00%→90.00%/, (10) ժամի ճանաչում /10.00%→50.00%/ և *տրամաբանություն և մտածողություն* ենթաոլորտի (4) օրինաչափությունների կազմում /20.00%→70.00%/:

Նախակրթարան չհաճախող երեխաների թեստավորման ու վերաթեստավորման արդյունքներին նայելիս տեսնում ենք, որ առավելապես աճ է գրանցվել *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (3) թվերի ճանաչում /40.00%→70.00%/, *տրամաբանություն և մտածողություն* ենթաոլորտի (4) օրինաչափությունների կազմում /25.00%→55.00%/ և (11) նմանության և տարբերության իմացություն /40.00%→70.00%/ ցուցանիշների մասով: Անփոփոխ են մնացել *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (2) տարածական պատկերացումներ /0.00%/ և *վաղ գրաճանաչություն* ենթաոլորտի (8) տառաճանաչություն /10.00%/ ցուցանիշները:

Նայելով Գծապատկեր 26-ին՝ կարող ենք տեսնել, որ Ստեփանավան համայնքի նախակրթարան հաճախող երեխաների թեստավորման արդյունքների մի մասը զիջել է նախակրթարան չհաճախող երեխաների թեստավորման արդյունքներին, առավելապես՝ *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (6) մաթեմատիկական պատկերացումներ /25.00%/ և (10) ժամի ճանաչում /20.00%/ ցուցանիշների մասով: Նորից տարբերություն չի նկատվում *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (2) տարածական պատկերացումներ ցուցանիշի մասով /0.00%/:

Համեմատելով նախակրթարան հաճախող ու չհաճախող երեխաների վերաթեստավորման արդյունքները՝ տեսնում ենք, որ նախակրթարան հաճախող երեխաները բոլոր ցուցանիշների մասով ավելի բարձր արդյունք են ապահովել, քան չհաճախողները՝ նորից բացառությամբ *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (2) տարածական պատկերացումներ ցուցանիշի /0.00%/:

Գծապատկեր 27: Ստեփանավանի երեխաների տվյալների համեմատությունը ըստ ենթաոլորտների



Գծապատկեր 27-ից տեսնում ենք, որ Ստեփանավան համայնքի նախակրթարանի երեխաների թեստավորման ու վերաթեստավորման արդյունքներն առավելապես աճել է (2) *տրամաբանություն և մտածողություն* /40.00%→77.50%/ ենթաոլորտի մասով:

Նախակրթարան չհաճախող երեխաների թեստավորման ու վերաթեստավորման արդյունքներին նայելիս (Գծապատկեր 27), տեսնում ենք, որ առավելապես աճ է գրանցվել նորից (2) *տրամաբանություն և մտածողություն* /32.50%→62.50%/ ենթաոլորտի մասով:

Նայելով Գծապատկեր 27-ին՝ կարող ենք տեսնել, որ Ստեփանավան համայնքի նախակրթարան հաճախող երեխաների թեստավորման արդյունքները գերազանցում են նախակրթարան չհաճախող երեխաների թեստավորման արդյունքներին (2) *տրամաբանություն և մտածողություն* /7.50%/ և (5) *մանր/նուրբ շարժողական* /6.25%/ ենթաոլորտների մասով:

Համեմատելով նախակրթարան հաճախող ու չհաճախող երեխաների վերաթեստավորման արդյունքները՝ տեսնում ենք, որ նախակրթարան հաճախող երեխաներն ավելի բարձր արդյունք են ապահովել, քան չհաճախողները՝ գրեթե հավասար տարբերություններով:

5.3.2. «Սպիտակի թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Նախակրթարանը ստեղծված է դպրոցի հիմքի վրա, ունի երեխաների մեկ խումբ: Ըստ մեկ խմբի համար նախատեսված միկրոծրագրի բյուջեի մեծության՝ համայնքի նախակրթարանը մարզում դասակարգվում է «միջին» միջոցներ (ընտրանքում ներառված մարզի համայնքների դասակարգման ֆինանսական չափանիշ) ունեցող նախակրթարանների շարքին:

Այցելությունների ընթացքում նախակրթարանը գործում էր հետևյալ *մոդելով*.

- ☐ շաբաթական 5 օր,
- ☐ աշխատանքային կարճօրյա ռեժիմ՝ 09:00-14:00,
- ☐ այցելությունների ժամանակ նախակրթարանում աշխատում էր մեկ դաստիարակ,
- ☐ դաստիարակը վերապատրաստված էր,
- ☐ նախակրթարանում ապահովվում էր մեկանգամյա տաք և սառը սնունդ,
- ☐ ջեռուցումը կատարվում էր դպրոցի կենտրոնական կաթսայատնից,
- ☐ նախակրթարանը չուներ քնելու հնարավորություն:

Նախակրթարանի ընդհանուր պայմանների նկարագրությունը հետևյալն է.

- ☐ Նախակրթարանին տրամադրված էր խմբասենյակ, հանդերձարան և սանհանգույց:
- ☐ Խմբասենյակը, հանդերձասենյակը և սանհանգույցը համապատասխանում էին սահմանված վերանորոգվածության, անվտանգության, երեխաների չափսերին համապատասխանության, հասանելիության և մաքրության պահանջներին (քանի որ Ծրագրի շրջանակներում նախակրթարանում դաստիարակի օգնական չի նախատեսվում, դաստիարակը պարապմունքների ընթացքում չէր հասցնում հետևել սանհանգույցից օգտվելուց հետո երեխաների հիգիենային) (*Տե՛ս Նկարներ 41 և 42*):
- ☐ Նախակրթարանն ապահովված էր սառը ջրով (մինչև ժամը 12:00):
- ☐ Նախակրթարանը ջեռուցվում էր կենտրոնացված ջեռուցման համակարգով:

Նկար 41. SU, Սպիտակ, սանհանգույց

Նկար 42. SU, Սպիտակ, խմբասենյակ

Խմբասենյակի, և աշխատանքային կենտրոնների պայմանները բավարարում էին սահմանված նորմերին, իսկ հագեցվածության տեսանկյունից՝ բոլոր կենտրոններն էլ հագեցած էին (*Տե՛ս Նկար 44*): Նախակրթարանն ուներ հանդերձապահարաններ (*Տե՛ս Նկար 43*), սեղան-աթոռ, պահարաններ, գրատախտակ, հեռուստացույց, բազմոց և այլն: Խմբասենյակն ու հանդերձասենյակը բավականին լուսավոր էին: Նախակրթարանի երեխաներին տրվում էր մեկանգամյա տաք և սառը սնունդ: Նախակրթարանն օգտագործում էր դպրոցի ճաշարանը (վճարելով ամսական 1000 ՀՀ դրամ):

Նկար 43. SU, Սպիտակ, հանդերձապահարաններ

Նկար 44. SU, Սպիտակ, պահարան

Ըստ *տնօրենի*, քանի որ դպրոցը գտնվում էր քաղաքի առանձնատներով բնակեցված թաղամասում և այնտեղից քաղաքի մանկապարտեզները բավականին հեռու էին, միկրոծրագրի նպատակն այն էր, որ այդ թաղամասի երեխաները դուրս չմնային նախադպրոցական կրթությունից: Ծրագիրը փոխշահավետ էր և՛ դպրոցի, և՛ ծնողների համար:

Նախակրթարանը, ըստ տնօրենի, *թույլ կողմ* չուներ, իսկ այն հանգամանքը, որ այն գործում էր իրենց թաղամասում, արդեն *ուժեղ կողմ* էր:

Նախակրթարանի *շենքային պայմանները* բարվոք էին: Տնօրենը և դաստիարակը հարցազրույցի ժամանակ նշել էին, որ դպրոցի շենքի նախակրթարանի հատվածը բարվոք վիճակում էր, վերանորոգված էր, միայն ջրամատակարարման հարցն էր, որ միացումը ժամով էր ու անկանխատեսելի: Ֆոկուս խմբային քննարկման ժամանակ շենքային պայմանների հետ կապված ծնողները նշել էին, որ նախակրթարանի ընդհանուր պայմաններից շատ գոհ էին:

Աշխատանքային կենտրոնները խմբասենյակում առանձնացված էին: Նախակրթարանում հագեցած էին արվեստի, շինարարության, դերային խաղի, խոհարարության կենտրոնները: Մնացած կենտրոնների մասով *դիդակտիկ նյութերի* պակաս էր զգացվում: Դաստիարակը և

տնօրենը խորին հարցազրույցների ժամանակ նշել էին, որ պարագաները տվյալ պահին բավարարում էին, սակայն հետագայում կհամալրեին:

Նախակրթարանում աշխատում էին *տնօրենը* և մեկ *դաստիարակ:* Դաստիարակը նախկինում աշխատել էր, որպես երաժշտության ու նկարչության ուսուցչուհի, դպրոցի կազմակերպիչ: Նա վերապատրաստվել էր ու տիրապետում էր նախակրթարանի ուսումնական ծրագրի դրույթներին: Տնօրենը նախկինում աշխատել էր որպես ուսումնական մասով դպրոցի տնօրենի տեղակալ, այնուհետև՝ տնօրեն:

Վերապատրաստումն անցել էր շատ հետաքրքիր: Դաստիարակը նշել էր, որ անհրաժեշտ նյութեր շատ կային, դասախոսները շատ խստապահանջ էին, ինքը ձեռք էր բերել որոշ մանկավարժական հնարքներ և ամեն ինչ կիրառելի էր իրենց համայնքում:

Դաստիարակն ուներ *պարապմունքի պլան-կոնսպեկտ*, չէր հաշվառում միայն ժամանակի գործոնը: Հաջող զուգակցում էր պարապմունքի անցկացման մեթոդները, պարապմունքների ժամանակ կատարում էր խմբային աշխատանք, հետազոտություն, գիտելիքի ձեռքբերում համագործակցության միջոցով, կիրառում էր խաղային մեթոդներ: Երեխաների նկատմամբ դաստիարակը ցուցաբերում էր անհատական մոտեցում, բոլոր երեխաներն ընդգրկված էին պարապմունքին: Դաստիարակը պարապմունքի ընթացքում դրսևորում էր շարժունակություն, միմյանց օգնելու դեպքում խրախուսում էր, գովաբանում, հաջող էր գործարկում ուսումնական գործողությունները, օգտագործում էր երեխայի զարգացման դինամիկայի դիտարկման և գնահատման թերթիկները: Գենդերային հարցերում երեխաների միջև տարբերություն չէր դնում:

Դաստիարակը հարցազրույցի ժամանակ նշել էր, որ կիրառում էր պարապմունքի անցկացման ինտեգրված սկզբունքը, քանի որ իրար հետ կապելով երեխան լավ է յուրացնում: Նա նաև նշել էր, որ նախկինում էլ էր կիրառում ինտեգրված սկզբունքը, սակայն վերապատրաստումից հետո արդեն ճանաչեց գիտականորեն: Պարապմունքներն անց էր կացնում հիմնականում խաղերի միջոցով: Դաստիարակը նշել էր, որ բոլոր ոլորտներին էլ հավասարաչափ ուշադրություն ու ժամանակ էր տրամադրել, սակայն ինքնասպասարկում և անվտանգություն ոլորտներին ամբողջ ընթացքում էր ուշադրություն դարձնում: Իրականացնում էր փաստաթղթային գնահատում, բայց դրանից զատ երեխաներն իրենց նոթատետրերն ունեին, որոնց մեջ դաստիարակը ժպիտներ էր փակցնում, գրում էր՝ ինչի համար էր դա: Դաստիարակը նշել էր, որ փորձում էր բացասականն էլ դրական ուղղությամբ տանել այնպես, որ երեխան չընկճվի: Դասընթացի պլանավորումն իրականացվում էր շաբաթական: Հիմնականում դաստիարակն օգտվում էր մեթոդական ձեռնարկի դասացուցակից, շատ արդյունավետ ու հարմար էր համարում:

Դաստիարակը նշում էր, որ ամենաուժեղ երեխան անմիջապես ընկալում էր նյութը, անմիջապես պատասխանում էր: Թույլ երեխան դանդաղ էր մտածում, գույները չէր ճանաչում, իսկ միջին ընդունակություններով երեխաները հաշվում էին: Ըստ դաստիարակի՝ երեխաների ընդունակությունները, սեռից կախված, տարբերվում էին նրանով, որ աղջիկներն ավելի ակտիվ էին:

Ծնողների մի մասը շատ ակտիվ էր: Սնվելու ժամանակ գալիս էին ու օգնում դաստիարակին, մասնակցել էին բնագիտության անկյան ստեղծմանը: Երեխաների առաջընթացի մասին ծնողները տեղեկանում էին գրեթե ամեն օր: Խնդիրն այն էր, որ, ըստ դաստիարակի, ծնողները տանն այնքան էլ չէին զբաղվում երեխաների հետ:

Համայնքի բնակիչները, ըստ դաստիարակի, հիմնականում անապահով էին և քաղաքապետը հոգացել էր, որ երեխաները հնարավորինս դուրս չմնային նախադպրոցական կրթությունից: Տնօրենը գտնում էր, որ համայնքում հիմնականում անապահով ընտանիքներ էին ապրում ու *համայնքի (ընտանիքի) սոցիալ-տնտեսական վիճակն* էապես ազդում էր երեխայի զարգացվածության վրա, քանի որ երբ ծնողը զբաղված էր լինում սոցիալական խնդիրներով, օրինակ՝ փորձում էր լուծել երեխայի սննդի, հագուստի հարցը, ուսումը աչքաթող էր արվում:

Ծնողների հետ անցկացված ֆոկուս խմբային քննարկման ժամանակ ներկաների ընտանիքները բաղկացած էին 3-10 հոգուց, ընտանիքների մեծամասնության դեպքում ընտանքիում աշխատող անձ կար: Բոլոր ընտանիքները նպաստառու էին: Երեք ընտանիք զբաղվում էր գյուղատնտեսությամբ (երկուսը հողագործությամբ, որից մեկը *սոցիալապես անապահով ընտանիքն* էր): Ֆոկուս խմբային քննարկման ընտանիքներից (որ զբաղվում էր հողագործությամբ) մեկի երեխաները օգնում էին կարտոֆիլ հավաքելիս: Երեխաների՝ նախակրթարան հաճախելու հիմնական նպատակը դպրոցին պատրաստ լինելն էր, այլ երեխաների հետ շփվելը: Ծնողները գոհ էին նախակրթարանից, դաստիարակի վերաբերմունքից:

Ընտանիքների երեխաները տանը հիմնականում հավաքում էին իրենց հետևից, *սոցիալապես անապահով ծնողը* երեխային պարտականություններով չէր զբաղեցնում: Մեծ մասամբ, երեխաներն ինքնուրույն էին միայն սնվելու, հագնվելու, լվացվելու հարցերում, իսկ, օրինակ, լոգանքի, սանհանգույցից օգտվելու պարագայում մայրը պարտադիր օգնում էր:

Երեխայի խնամքի պատասխանատուները հիմնականում մայրերն էին, երբեմն օգնում էին նաև հայրերն ու տատիկները: Մայրերի բացակայության ժամանակ երեխային խնամում էին հիմնականում հայրիկը, տատիկները: Բացակայում էին դպրոց գնալու, գնումներ կատարելու, հիվանդանոց գնալու դեպքում: Երեխայի դաստիարակության պատասխանատուները հիմնականում մայրերն ու հայրերն էին: Երեխայի առօրյան հիմնականում պլանավորում էին մայրերը՝ հնարավորության դեպքում հաշվի առնելով երեխայի ցանկությունները:

Ծնողները տարակարծիք էին իրենց որոշումները երեխաներին բացատրելու հարցում: Ծնողների կեսը գտնում էին, որ իրենց որոշումները պետք չէր բացատրել երեխային: Երեխայի արարքներից պատժելի էին սուտը, մեծերին չլսելը, քույր-եղբայրների հետ վիճելը: Հիմնականում պատժելու միջոցն էր սիրած զբաղմունքից զրկելը: *Սոցիալապես անապահով ծնողը* երեխային չէր պատժում, այլ սիրելով ու համբուրելով բացատրում էր:

Նախակրթարանի երեխաների մեծամասնությունը հաճախել էին մանկապարտեզ, հիմնականում երեխաները նոր գիտելիքներ էին ստացել: Սակայն ծնողները երեխաներին նախակրթարան էին

տեղափոխել, քանի որ իրենց տներից հեռու էր մանկապարտեզը: *Սոցիալապես անապահով ծնողը* երեխային մանկապերտեզ չէր տարել, քանի որ վճարովի էր եղել:

Ծնողները կարծում էին, որ երեխայի զարգացման վրա մեծ ազդեցություն ունեին ուսուցման պայմանները: Երեխաներին որևէ բան սովորեցնելիս նրանք համոզում էին, ոգևորում, ներգրավում էին քույր-եղբայրներին:

Այս նախակրթարանի գործարկման համար ներդրում էր կատարվել և՛ ծնողների կողմից (դրամային), և համայնքի (դրամային): Իսկ ծնողները միայն ամսական 1000 դրամ էին վճարում սննդի համար, քանի որ ծրագրով սնունդ նախատեսված չէր: Ծնողները ցանկություն էին հայտնել, որ օրվա ռեժիմը երկարեր, սնունդն էլ դառնար օրական երկու անգամ:

Տնօրենը միկրոծրագրի շարունակականության վտանգ չէր տեսնում, քանի որ պահանջարկը մեծ էր:

Համայնքում *նախակրթարան չհաճախող երեխաների ծնողների* հետ ունենցած հարցազրույցների վերլուծությունը ցույց է տվել, որ հիմնականում այս ծնողների դեպքում տեղեկատվության պակասն ու թյուր տեղեկատվությունն է եղել պատճառը, որ իրենց երեխային չեն տարել նախակրթարան: Մեկ ծնող նշել էր, որ իրեն հարևաններն ասել էին, որ 5000 դրամ է վարձը ամսական, այդ պատճառով էլ նույնիսկ չէր հետաքրքրվել վարձավճարի և համապատասխան հագուստի պատճառով: Մյուս ծնողն իր երեխային նախակրթարան չէր տարել առողջական խնդիրներից ելնելով, իսկ մյուս երկու դեպքերում երեխաները կամակոր էին եղել ու չար: Ուշագրավն այն էր, որ դեռևս կային կարծիքներ, որ իրենց երեխաներին նախակրթարան էին տանում այն ծնողները, ովքեր զբաղված էին և ունակ չէին դաստիարակել իրենց երեխաներին:

Տարվա վերջի այցելության նկարագրությունը ներկայացված է ստորև:

Շենքային պայմանները բարեկարգ էին: *Աշխատանքային կենտրոններում* տարվա սկզբի համեմատ ավելացել էին որոշակի ձեռակերտ պարագաներ, խմբասենյակը զարդարված էր թղթե գունավոր ծաղիկներով (*Տե՛ս Նկարներ* 45 և 46): *Սոցիալապես անապահով ծնողը* նշել է, որ ցանկալի է, որ բեմ ունենան, որ <<ընկեր Սահակյանի>> կազմակերպած հետաքրքիր հանդեսների ժամանակ բեմի վրա լինեն երեխաները (դպրոցն էլ չունի բեմահարթակ): Տնօրենն աշխատանքային կենտրոնների պարագաների մասով նշել է, որ ֆինանսավորման մասով աջակցում են դպրոցն ու համայնքապետը:

Տարվա սկզբում երեխաները տաք ու սառը սնունդ էին ընդունում, սակայն տարվա վերջում սննդի ծրագրի դադարեցման պատճառով, ծնողների որոշմամբ երեխաները նախակրթարանում չեն սնվում:

Ըստ դաստիարակի՝ երեխաների ձեռքերի մոտորիկան է զարգացել, երեխաները նախկինում մատիտ չէին կարողանում բռնել, խոսքն է զարգացել: Հիմնականում սոցիալապես անապահով ընտանիքներ են (70%-ը անապահով են), դաստիարակը տնայցեր է կատարել, ու վստահ է, որ տանը երեխաներն այս գեղեցիկ ու զարգացնող միջավայրը չունեն: Ըստ տնօրենի՝ առաջին դասարանի բոլոր դասվարները ձգտում են իրենց դասարան ընդգրկել նախակրթարան հաճախած

երեխաների, քանի որ նրանք պատրաստ են առաջին դասարանին և իրենց հետ ավելի հեշտ է աշխատել:

Սոցիալապես անապահով ծնողն իր հետ անցկացված հարցազրույցում, մնացած ծնողներն էլ ֆոկուս խմբային քննարկման ժամանակ նշել են, որ մեծ է եղել դաստիարակի ներդրումը, շատ հոգատար է, երեխաները շատ գիտելիքներ են ձեռք բերել, շատ են սիրում իրենց դաստիարակին: Շատ գեղեցիկ միջոցառումներ է կազմակերպել դաստիարակը: Բոլոր ծնողները հայտնել են իրենց գոհունակությունը նաև նախակրթարանի տնօրենից: Ծնողները ցանկություն են հայտնել, որպեսզի երեխաները խմբակների մասնակցեն՝ երգ, նկարչություն:



Նկար 45. ՏՎ, Սպիտակ, խմբասենյակ, պահարան

Նկար 46. ՏՎ, Սպիտակ, խմբասենյակ

Տարվա վերջում նախակրթարան *չհաճախող երեխաների ծնողների* կարծիքները չէին փոխվել: Հիմնականում նշել են, որ ովքեր հնարավորություն չունեն, չեն տանում իրենց երեխային նախակրթարան: Սակայն պատահել է նաև մեկ այլ տեսակետ, որի դեպքում ծնողը գտնում է, որ լավ է երեխան իր կողքին լինի, քան նախակրթարանի <<հույսին>>: Ընդհանուր առմամբ, տարվա վերջին ևս տեղեկատվության պակասի ու թյուրըմբռնման խնդիր է դիտարկվել:

Սպիտակի նախակրթարանում դիտարկված պարապմունքները ցույց են տվել դաստիարակների և ուսումնական միջավայրի բարձր արդյունավետությունը գրեթե բոլոր չափորոշիչներով: Բոլոր չափանիշներն ունեն 100.00% արտահայտվածություն՝ բացառությամբ *Դաստիարակի հմտություններ* չափորոշչի, չնայած որ վերջինս համար ևս վատ ցուցանիշ չի արձանագրվել /83.33%/:

Գծապատկեր 28. Սպիտակի նախակրթարանում պարապմունքի դիտարկման տվյալների վերլուծություն



Գծապատկեր 29. Սպիտակի երեխաների թեստավորման տվյալների վերլուծություն



Գծապատկեր 29–ում Սպիտակ համայնքի նախակրթարանի երեխաների թեստավորման ու վերաթեստավորման արդյունքներին նայելիս տեսնում ենք, որ գրեթե բոլոր ցուցանիշների մասով նշանակալի աճ է դրսևորվել: Առավելապես աճել են *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (9) աջի և ձախի իմացություն /50.00%→100.00%/ և *տրամաբանություն և մտածողություն* ենթաոլորտի (11) նմանությունների և տարբերությունների իմացություն /50.00%→100.00%/ ցուցանիշների մասով:

Ստուգիչ խմբի երեխաների թեստավորման ու վերաթեստավորման արդյունքներին նայելիս տեսնում ենք, որ նվազել է միայն *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (10) ժամի ճանաչում /30.00%→20.00%/ ցուցանիշը և անփոփոխ են մնացել՝ *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (2) տարածական պատկերացումներ /0.00%→0.00%/, (9) աջի և ձախի իմացություն /80.00%→80.00%/, *վաղ գրաճանաչություն* ենթաոլորտի (8) տառաճանաչություն /0.00%→0.00%/ և *մանր շարժողական* ենթաոլորտի (12) գրելու տարրական հմտություններ /0.00%→0.00%/ ցուցանիշները:

Նայելով Գծապատկեր 29-ին՝ կարող ենք տեսնել, որ Սպիտակ համայնքի նախակրթարան հաճախող երեխաների թեստավորման արդյունքները զիջել են նախակրթարան չհաճախող երեխաների արդյունքներին՝ *տրամաբանություն և մտածողություն* ենթաոլորտի (4) օրինաչափությունների կազմում /5.00%/, *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (6) մաթեմատիկական պատկերացումներ /3.00%/ և (9) աջի և ձախի իմացություն /30.00%/ ցուցանիշների մասով: Նորից տարբերություն չի նկատվել՝ *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (2) տարածական պատկերացումներ /0.00%→0.00%/, *վաղ գրաճանաչություն* ենթաոլորտի (8) տառաճանաչություն /0.00%→0.00%/ և *մանր շարժողական* ենթաոլորտի (12) գրելու տարրական հմտություններ /0.00%→0.00%/ ցուցանիշների մասով:

Համեմատելով նախակրթարան հաճախող ու չհաճախող երեխաների վերաթեստավորման արդյունքները՝ տեսնում ենք, որ նախակրթարան հաճախող երեխաները բոլոր ցուցանիշների մասով նշանակալիորեն բարձր արդյունք են ապահովել, քան չհաճախողները: Առավելապես տարբերվում է *տրամաբանություն և մտածողություն* ենթաոլորտի (11) նմանությունների և տարբերությունների իմացություն /60.00%/ ցուցանիշը:

Գծապատկեր 30: Սպիտակի երեխաների տվյալների համեմատությունը ըստ ենթաոլորտների



Սպիտակ համայնքի նախակրթարանի երեխաների թեստավորման ու վերաթեստավորման արդյունքներին նայելիս (Գծապատկեր 30), տեսնում ենք, որ բոլոր ենթաոլորտների մասով աճ է դրսևորվել, իսկ առավելապես՝ (2) *տրամաբանություն և մտածողություն* /40.00%%→85.00%/ և (4) *վաղ գրաճանաչություն* /27.00%→70.00%/ ենթաոլորտների:

Սպիտակ համայնքի ստուգիչ խմբի երեխաների թեստավորման ու վերաթեստավորման արդյունքներին նայելիս (Գծապատկեր 30), տեսնում ենք, որ նորից բոլոր ենթաոլորտների մասով աճ է դրսևորվել, իսկ առավելապես՝ (3) *բանավոր խոսքի ընկալում* ենթաոլորտի /60.00%→80.00%/:

Նայելով Գծապատկեր 30-ին՝ կարող ենք տեսնել, որ նախակրթարան հաճախող երեխաների թեստավորման արդյունքները զիջել է նախակրթարան չհաճախող երեխաների թեստավորման արդյունքներին միայն (1) *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* /1.25%/ ենթաոլորտի մասով: Տարբերություն չի նկատվել (5) *մանր/նուրբ շարժողական* ենթաոլորտի /46.25%/ մասով:

Համեմատելով նախակրթարան հաճախող ու չհաճախող երեխաների վերաթեստավորման արդյունքները՝ տեսնում ենք, որ նախակրթարան հաճախող երեխաները բոլոր ենթաոլորտների մասով ավելի բարձր արդյունք են ապահովել ստուգիչ խմբի երեխաներից:

5.3.3. «Վանաձորի Ս.Շահումյանի անվան թիվ 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Նախակրթարանը ստեղծված է դպրոցի հիմքի վրա, միկրոծրագրի շրջանակներում ունի երեխաների երկու խումբ, որից մեկը՝ ավագ: Ըստ մեկ խմբի համար նախատեսված միկրոծրագրի բյուջեի մեծության՝ համայնքի նախակրթարանը մարզում դասակարգվում է «մեծ» միջոցներ (ընտրանքում ներառված մարզի համայնքների դասակարգման ֆինանսական չափանիշ) ունեցող նախակրթարանների շարքին:

Այցելությունների ընթացքում նախակրթարանը գործում էր հետևյալ *մոդելով*.

- ☐ շաբաթական 5 օր,
- ☐ աշխատանքային կարճօրյա ռեժիմ՝ 09:00-13:00,
- ☐ այցելությունների ժամանակ նախակրթարանում աշխատում էր երեք դաստիարակ[23],
- ☐ դաստիարակները վերապատրաստված էին,
- ☐ նախակրթարանում ապահովվում էր երկանգամյա տաք և սառը սնունդ,
- ☐ ջեռուցումը կատարվում էր կենտրանացված ջեռուցման համակարգով,
- ☐ նախակրթարանը չուներ քնելու հնարավորություն:

Նախակրթարանի ընդհանուր պայմանների (ավագ խմբի համար նախատեսված) նկարագրությունը հետևյալն է.

- ☐ Նախակրթարանին տրամադրված էր խմբասենյակ, հանդերձարան և սանհանգույց (զուգարանակոնքերն առանձին խցիկներում էին):
- ☐ Խմբասենյակը, հանդերձասենյակը և սանհանգույցը համապատասխանում էին սահմանված վերանորոգվածության, անվտանգության, երեխաների չափսերին համապատասխանության, հասանելիության և մաքրության պահանջներին (քանի որ Ծրագրի շրջանակներում նախակրթարանում դաստիարակի օգնական չի նախատեսվում, դաստիարակը պարապմունքների ընթացքում չէր հասցնում հետևել սանհանգույցից օգտվելուց հետո երեխաների հիգիենային) (*Տե՛ս Նկարներ 47 և 48*):
- ☐ Նախակրթարանն ապահովված էր սառը մշտական ջրով:
- ☐ Նախակրթարանը ջեռուցվում էր ջեռուցման կենտրոնացված համակարգով, սակայն անհրաժեշտության դեպքում, միացնում էին նաև էլէկտրական ջեռուցիչ:
- ☐ Նախակրթարանը գործում էր նաև երկարօրյա ռեժիմով՝ մինչև 16:00 (եթե ծնողները ցանկանում էին), սակայն քանի որ նախակրթարանը քնելու հնարավորություն չուներ, երեխաները չէին քնում:

[23] Նախակրթրանն ուներ երկու խումբ՝ ավագ և փոքրերի: Սակայն քանի որ ավագ խմբում մոտ 40 երեխա կար, խումբը կիսել էին երկու մասի, որից մեկում պարապում էր նախակրթարանի վճարվող դաստիարակը, մյուսում՝ անհատույց աշխատողը:

Նկար 47. SU, Վանաձոր, սանհանգույց **Նկար 48. SU, Վանաձոր, խմբասենյակ**

Խմբասենյակի, խաղասենյակի և աշխատանքային կենտրոնների պայմանները բավարարում էին սահմանված նորմերին, իսկ հագեցվածության տեսանկյունից՝ այդքան էլ հարուստ չէին (*Տե՛ս Նկարներ 49 և 50*): Նախակրթարանն ուներ հանդերձապահարաններ, գորգ, սեղան-աթոռ, խաղալիքի պահարաններ, գրատախտակ, հեռուստացույց, փոշեկուլ, էլեկտրական ջեռուցիչներ և այլն: Խմբասենյակն ու հանդերձասենյակը բավականին լուսավոր էին: Նախակրթարանում ապահովում էին երկանգամյա սնունդ, իսկ երկարօրյայի դեպքում տրվում էր օրական երեք անգամ՝ ծնողների լրացուցիչ վճարների արդյունքում:

Նկար 49. SU, Վանաձոր, հանդերձապահարաններ **Նկար 50. SU, Վանաձոր, պահարան**

Ըստ *տնօրենի*՝ միկրոծրագրի նպատակը 5-6 տարեկան երեխաներին նախապատրաստելն էր դպրոցական ծրագրերին: *Նախակրթարանի ստեղծումը* համայնքի երեխային կոնկրետ զբաղվածություն, ուսուցում էր ապահովել, ծնողներն էլ ավելի ապահով էին զգում, իսկ դպրոցին հնարավորություն էր տվել մոտավոր հաշվարկով իմանալ, թե որքան առաջին դասարանցի կունենային:

Ըստ տնօրենի՝ *նախակրթարանի թույլ կողմն այն էր*, որ մնալու ժամը շատ քիչ էր, երկար մնալու և սնունդ կազմակերպելու անհրաժեշտություն կար:

Նախակրթարանի *շենքային պայմանները* բարվոք էին, նոր էր վերանորոգվել: Դաստիարակը հարցազրույցի ժամանակ նշել էր, որ հեռավորության ու փոխադրամիջոցի հետ կապված դժվարություն կար:

Խմբասենյակում դեռևս առանձնացված *աշխատանքային կենտրոններ չկային*, սակայն բոլոր կենտրոնների պարագաներից առկա էին: Նախակրթարանում հագեցած էին արվեստի և խոհարարության կենտրոնները: Մնացած կենտրոնների մասով *դիդակտիկ նյութերի* պակաս էր զգացվում, սակայն դաստիարակը խորին հարցազրույցի ժամանակ նշել էր, որ ուսումնական նյութերը բավարարում էին:

Նախակրթարանում աշխատում էին *տնօրենը* և երեք *դաստիարակ*[24]*:* Ավագ խմբի դաստիարակը նախկինում աշխատել էր հիմնադրամում, մասնագիտությամբ հոգեբան էր, վերապատրաստվել էր ու տիրապետում էր նախակրթարանի ուսումնական ծրագրի դրույթներին: Տնօրենը նախկինում աշխատել էր որպես դասախոս (Կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ) և տվյալ պահին էլ նա համատեղում էր տնօրենի աշխատանքի հետ: Երկու ծնող անհատույց հիմունքներով խմբակներ էին անցկացնում: Ավագ խմբի երեխաների մի մասի հետ էլ պարապմունքներ էր անցկացնում անհատույց հիմունքներով աշխատող դաստիարակը:

Վերապատրաստումն անցել էր շատ բովանդակալից ու նյութառատ: Դաստիարակը նշել էր, որ դասընթացը լավ էր կազմակերպված, ստացել էր անհրաժեշտ գրականություն և նոր գիտելիքներ: Սակայն ցանկություն էր հայտնել, որ նորից լինեին վերապատրաստումները կամ վերապատրաստողներն իրենց այցի գային ու դասալսում իրականացնեին, մեթոդական գրքերից էլ երկուական տրամադրվեր: Ստացած գիտելիքները հաջողությամբ էին կիրառվում համայնքում:

Դաստիարակն ուներ *պարապմունքի պլան-կոնսպեկտ*, սակայն չէր հաշվառվում ժամանակի գործոնը: Պարապմունքների ընթացքում կիրառվում էին դիդակտիկ նյութեր, զննական պարագաներ, սակայն չէին ապահովվում երեխաների՝ միմյանց հետ հաղորդակցվելու պայմանները: Երեխաների նկատմամբ ցուցաբերվում էր անհատական մոտեցում: Դաստիարակը օգտագործում էր երեխայի զարգացման դինամիկայի դիտարկման և գնահատման թերթիկները: Գենդերային հարցերում երեխաների միջև տարբերություն չէր դնում:

Դաստիարակին հոգեհարազատ էր երեխայակենտրոն ուսուցումը, սակայն առավել հաճախ կիրառում էր ինտեգրված սկզբունքը: Պարապմունքներն անց էր կացնում խաղ-վարժությունների միջոցով: Դաստիարակը՝ լինելով հոգեբան, բոլոր ոլորտների մասով հավասարապես էր աշխատում, իրականացնում էր և՛ անհատական, և՛ խմբային գնահատում, դասընթացը պլանավորում էր շաբաթվա կտրվածքով: Իսկ ինչ վերաբերում էր պատրաստի ուսումնական

[24] Նախակրթարանն ուներ երկու խումբ՝ ավագ և փոքրերի: Սակայն քանի որ ավագ խմբում մոտ 40 երեխա կար, խումբը կիսել էին երկու մասի, որից մեկում պարապում էր նախակրթարանի վճարվող դաստիարակը, մյուսում՝ անհատույց աշխատողը:

ծրագիր ունենալուն, դաստիարակը հարցազրույցի ժամանակ պատասխանել էր, որ այդպես ստեղծագործական մոտեցում չէր ապահովվի:

Դաստիարակը նշում էր, որ ամենաուժեղ երեխան եռանիշ թվեր էր գումարում, իսկ թույլ երեխան հաշվում էր, խոսքը զարգացած էր, սակայն ածականներ չէր օգտագործում: Միջին ընդունակություններով երեխաների խոսքը զարգացած էր, գիտեին հաշվել: Ըստ դաստիարակի՝ երեխաների ընդունակությունները, սեռից կախված, չէին տարբերվում:

Նախակրթարան-ընտանիք կապն ու համագործակցությունը դաստիարակն ապահովում էր նոթատետրերի միջոցով, որտեղ աշխատում էր և՛ դաստիարակը, և՛ ծնողը: Պարապմունքների ընթացքում սովորած նյութերը ծնողների ցանկությամբ դաստիարակը տրամադրում էր, ու ծնողները տանը զբաղվում էին երեխայի ուսուցմամբ: Տարվա սկզբում ծնողները երեխայի մասին թերթեր էին լրացրել, որ վերապատրաստման ժամանակ էին տրամադրել դաստիարակին, որպեսզի ծանոթ լինեին երեխային: Դաստիարակը երեխաների հետ աշխատում էր նաև որպես հոգեբան:

Համայնքի բնակիչները գյուղատնտեսությամբ չէին զբաղվում, հարցված ծնողների շրջանում նպաստառու ընտանիքներ չկային: Դաստիարակը նշել էր, նախակրթարանի ծնողների շրջանում աշխատող անձինք քիչ կային, ի լրումն դաստիարակի՝ տնօրենը նաև նշել էր, որ մեծ մասամբ նախակրթարանի երեխաները սոցիալապես անապահով ընտանիքներից էին:

Տնօրենի գնահատմամբ, համայնքի *ընտանիքների սոցիալ-տնտեսական վիճակն* անպայման ազդեցություն ուներ երեխայի զարգացման վրա, օրինակ, երբ ծնողը զբաղված էր սոցիալական խնդիրներով՝ փորձում էր լուծել երեխայի սննդի, հագուստի հարցը, ուսումը աչքաթող էր անում:

Ծնողների հետ անցկացված ֆոկուս խմբային քննարկման ժամանակ ներկաների ընտանիքները բաղկացած էին 4-6 հոգուց, 6 ընտանիքներից 3-ը նպաստառու ընտանիքներ էին: Ընտանիքներում աշխատող անձ հիմնականում հայրերն էին, մայրերը տնային տնտեսուհիներ էին: Ընտանիքները գյուղատնտեսությամբ չէին զբաղվում: Երեխաների՝ նախակրթարան հաճախելու հիմնական նպատակը կրթված լինելն էր, սակայն ծնողներին նաև գրավել էին շենքային պայմանները, ջեռուցումը: Ծնողները գոհ էին դաստիարակից: *Սոցիալապես անապահով ծնողը* նշել էր, որ դաստիարակները սիրալիր էին երեխաների նկատմամբ, ինչպես նաև կամավոր սկզբունքով աշխատող ծնող-դաստիարակը (կամավոր, չվերապատրաստված դաստիարակը) միակ դաստիարակն էր, որ երեխաները տեսնելիս համբուրում էին, իսկ նա կուզենար, որ դաստիարակները ծնողների հետ էլ սիրալիր լինեին:

Տվյալ ընտանիքների երեխաները տանը հիմնականում ներգրավված էին տնային պարզ գործերում՝ հավաքում էին իրենց ետևից: Մեծ մասամբ, երեխաներն ինքնուրույն էին սնվելու, հագնվելու, լվացվելու, սանհանգույցից օգտվելու հարցերում, իսկ մեկ ընտանիքի դեպքում երեխան նաև միայնակ լոգանք էր ընդունում:

Երեխայի խնամքի պատասխանատուները հիմնականում մայրերն էին, երբեմն օգնում էին նաև հայրերն ու տատիկները: Մայրերի բացակայության ժամանակ երեխային խնամում էին

հիմնականում տատիկները կամ հայրիկը, մի դեպքում հայրը մեկ ու կես տարի արտագնա աշխատանքի էր: *Սոցիալապես անապահով ծնողը* միայնակ մայր էր: Նա խորին հարցազրույցի ժամանակ նշել էր, որ երեխային տատիկի աշխատանքի վայր էր տանում (ծնողն էլ էր աշխատում), քանի որ իրենք ի վիճակի չէին երկարօրյայի համար նախատեսված վճարը տալ (մի կերպ վճարում էին կարճօրյայի սննդի համար նախատեսված 4000 դրամը): Երեխայի առօրյան հիմնականում պլանավորում էին մայրերը՝ հնարավորության դեպքում հաշվի առնելով երեխայի ցանկությունները:

Ծնողները հիմնականում գտնում էին, որ իրենց վերաբերող հարցերում ծնողի որոշումներն ու պահանջները պետք էր բացատրել երեխային: Երեխայի արարքներից պատժելի էին սուտը, հաց չուտելը, քույր-եղբայրների հետ վիճելը և այլն: Հիմնականում պատժելու միջոցն էր սիրած զբաղմունքից զրկելը, սակայն հիմնականում բացատրում էին երեխային սխալի մասին:

Քննարկմանը մասնակցող ծնողների երեխաների մեծամասնությունը հաճախել էր մանկապարտեզ, սակայն հեռավորության պատճառով տեղափոխվել էին նախակրթարան:

Ծնողները կարծում էին, որ երեխայի զարգացման վրա մեծ ազդեցություն ունեին ծնողների, այլ երեխաների ազդեցությունն ու ուսուցման պայմանները:

Տնօրենը հարցազրույցի ժամանակ նշել էր, որ սոցիալապես անապահով ընտանիքների համար մեխանիզմ ունեին մշակած, որ նրանցից սննդի գումար չէր վերցնում և գրենական պիտույքներն էլ անվճար էին տրամադրում (*սոցիալապես անապահով ծնողը* նշել էր, որ եթե հարկ էր լինում, գրենական պիտույքներ էլ էին տանում նախակրթարան):

Ընդհանուր առմամբ, ծնողները շատ գոհ էին նախակրթարանի պայմաններից, տնօրենից՝ ուշադրության համար, դաստիարակներից՝ երեխաների նկատմամբ ուշադրության համար:

Ֆոկուս-խմբային քննարկումից պարզ էր դարձել, որ երեխաներին որևէ բան սովորեցնելիս ծնողները ներգրավում էին քույր-եղբայրներին, երբեմն էլ առանձնացնում էին երեխային, որ նա կենտրոնանար:

Այս նախակրթարանի գործարկման համար ոչ դրամային ներդրումներ էին կատարվել ծնողների կողմից, իսկ դրամային ներդրումներ՝ բարերարների կողմից: Նախակրթարանի գործունեության ժամանակ ծնողների տրամադրված դրամական աջակցության մասով հարցազրույցներից ստացած տեղեկատվությունը տարբեր էր: Քննարկմանը մասնակցած *սոցիալապես անապահով ծնողը* նշել էր, որ կարճօրյա ռեժիմի սննդի համար ամսական 4000 դրամ էին հավաքում, իսկ այդ նույն մասով դաստիարակը հարցազրույցի ժամանակ նշել էր, որ կամավորության սկզբունքով ծնողները վճարում էին 3500 դրամ, տնօրենը՝ 2000-3000 դրամ, իսկ ֆոկուս խմբային քննարկման ժամանակ ծնողերը նշել էին, որ ոչ մի վճարում չէին կատարում (սննդի համար բացարձակապես վճար չէին հավաքում): *Սոցիալապես անապահով ծնողը* սննդի մասով նշել էր, որ սկզբում առավոտյան նախաճաշին բուլկի էին տալիս երեխաներին, հետո ծնողները բողոքել էին, որ հաց ու պանիր տային, իսկ իր երեխան էլ պանիր չէր ուտում և եթե ճաշին էլ սիրած բանը չէր լինում, երեխան մինչև ժամը 14:00 սոված էր մնում: Ծնողը խնդրում էր, որ իր՝ սննդի համար վճարած 4000 դրամը

պակասեցվեր կամ հանվեր (այդ դեպքում ծնողը երեխայի սնունդը տնից կբերեր), քանի որ իր երեխան հիմնականում սոված էր մնում:

Տնօրենը խորին հարցազրույցի ժամանակ նշել է. - «Դաստիարակների աշխատավարձը քանի որ մեզ վրա է, դժվարությամբ ենք տալիս: Հովանավոր ենք փնտրում:», «Եթե աշխատավարձերի մասով մեր հովանավորը հանկարծ չուղարկի գումարը, համայնքապետարանը խոստացել է օգնել:», «Մեզ աշխատավարձների մասով Ֆրանսիայից են ֆինանսավորել, սակայն նրանց հետ կապ հաստատելը դժվար է. ամեն ամիս են նրանք ուղարկում: Եթե հանկարծ խնդիր առաջանա Կրթության վարչության պետն անձամբ է խոստացել, որ աջակցություն կցուցաբերի:»:

Նախակրթարան չհաճախող երեխաների ծնողները տարվա սկզբում նշել էին, որ նախակրթարան չտանելու հիմնական պատճառներն են եղել նախակրթարանի հեռավորությունը, երեխայի լացկան լինելը, ծնողների մշտապես տանը լինելը: Այն հարցին, թե ովքեր են հիմնականում իրենց երեխաներին նախակրթարան տանում, բոլոր ծնողները պատասխանել էին, որ ֆինանսական միջոցներ չունեցողները չեն տանում իրենց երեխային նախակրթարան: Այսինքն, տեսնում ենք, որ տեղեկատվության պակասի խնդիր կա այս համայնքում:

Տարվա վերջի այցելության նկարագրությունը ներկայացված է ստորև:

Շենքային պայմանները շատ լավն են: Դաստիարակներից մեկը նշել էր, որ լավ կլիներ, որ դպրոցի ճաշարանից առանձին ճաշարան ունենան: Ծնողները ֆոկուս խմբային քննարկման ժամանակ նշել են, որ փոքր-ինչ անհարմարություն էր առաջանում ճաշարան գնալիս, քանի որ երեխաները բարձրանում էին երկրորդ հարկ և անցնում էին ցուրտ սենյակի միջով: Փոքր-ինչ անհարմար էր նաև խմբասենյակի դիրքը, քանի որ այն միջանցիկ էր:

Աշխատանքային կենտրոններում տարվա սկզբի համեմատ ավելացել էին որոշակի ձեռակերտ պարագաներ (Տե՛ս Նկարներ 51 և 52), խմբասենյակը զարդարված էր գունավոր պաստառներով:

Նկար 51. ՏՎ, Վանաձոր, խմբասենյակ, ձեռակերտ պարագաներ

Նկար 52. ՏՎ, Վանաձոր, խմբասենյակ, պաստառներ

Տարվա սկզբում նշվել էր, որ ավագ խմբի երկրորդ դաստիարակն անհատույց է աշխատում: Սակայն տարվա վերջում տնօրենի հետ ունեցած հարցազրույցի ընթացքում հարցազրույցավարի մի քանի խաչվող հարցերին տնօրենը տվել էր իրարամերժ պատասխաններ.

- ✓ դաստիարական աշխատում է անհատույց,
- ✓ հաստիքով աշխատող չէ, բայց վճարվում է,
- ✓ համատեղում է այլ աշխատանքի հետ՝ օրվա երկրորդ կեսից հետո գնում է այլ մանկապարտեզ, այդ պատճառով էլ նրան հաստիք չի հատկացվել,
- ✓ աշխատում է կես դրույք, բայց վճարվում է մյուս դաստիարակներին հավասար՝ 67.000 դրամ,
- ✓ քաղիրավական պայամանգիր ունի (որն այդպես էլ չներկայացվեց հարցազրույցավարին):

Ըստ տնօերնի սոցիալապես անապահով ընտանիքները դիմում են իրեն և ազատվում են վճարումներից, եղել են դեպքեր, որ մի ծնող սոցիալապես անապահով իր հարևանի փոխարեն է վճարել:

Ուսումնական գործընթացին ներգրավվում է նաև դպրոցը, ըստ տնօրենի շատ են լինում դեպքեր, երբ նախակրթարանի երեխաները ռուսերեն դասալման են գնում հանդեսներ են նայում, համակարգչային սրահում մուլտֆիլմ դիտելու են գնում: Վերջին զանգի արարողությանը ներգրավվել էին նաև նախակրթարանի երեխաները՝ ավարտող աշակերտները գրքեր նվիրեցին:

Տնօրենը հարցազրույցի ժամանակ որոշակի առաջարկներ է ներկայացրել, որոնք բերված են ստորև:

- ✓ Ցանկալի է, որ նախակրթարանը դառնա երկարօրյա, երեխաները քնեն նախակրթարանում, քանի որ շատ մայրեր կան, որ աշխատում են:
- ✓ Անհրաժեշտ է, որ շարունակական վերապատրաստումներ լինեն, դաստիարակները նորություններին ծանոթանան հենց վերապատրաստողներից, որպեսզի դաստիարակները այլ մանկապարտեզների դաստիարակներից չստանան անհրաժեշտ տեղեկությունները:
- ✓ Անհրաժեշտություն կա, որ նախակրթարանում լինի մեթոդիստ, որ դասալսումներ կիրականացնի, կհամակարգի գործընթացը, քանի որ տնօրենն անձամբ չի հասցնում դասալսումներ կատարել:
- ✓ Ծնողական ներդրման միջոցով (ամսական 500 դրամ) բարձրագույն ավարտած դաստիարակներ են գալիս ու շաբաթվա մեջ 2-3 անգամ օրական 20 րոպե օտար լեզվի, երգի դասաժամ են անցկացնում: Ցանկություն կա, որ դպրոցի նման այդ դասաժամերը լինեն սահմանված դասաժամեր:

Ըստ <<անհատույց աշխատող>> դաստիարակի՝ երեխաները գրաճանաչ են դարձել, գումարում-հանում են անում, զարգացումը մեծ է: Նա հաճախ բաց դասեր է կազմակերպում, որպեսզի ծնողները տեղյակ լինեն, թե իրենց երեխաները ինչ են սովորել: Մի երեխա ունեին, որ շատ կաշկանդված ու վախեցած էր, ըստ դաստիարակի, երբ նա մոտենում էր երեխային, երեխան վախենում էր ու գլուխը բռնում էր՝ մտածելով, թե հարվածելու է իրեն: Դաստիարակից շատ ջանքեր են պահանջվել, որպեսզի երեխան նախակրթարանում վախ չզգա (երեխայի հայրը զինվորական է և շատ խիստ է): Դաստիարակը հոգեբանական թեստեր է անցկացնում երեխաների հետ ու ծնողներին խորհուրդներ տալիս: Նա նկատել է, որ ծնողները երեխաների համար հեքիաթներ չեն կարդում:

Մյուս դաստիարակը նշել է, որ իր խմբի երեխաները գիտեն տառերը, թվերը, կազմում են նախադասություններ, խոսքի զարգացում է նկատվել: Տարվա կեսից երեխաները մկրատով են աշխատել, սոսնձի հետ աշխատել գիտեն:

Ծնողները ֆոկուս խմբային քննարկման ժամանակ նշել էին, որ շատ գոհ էին դաստիարակներից: Իրենց երեխաները շատ գիտելիքներն են ձեռք բերել: Մի ծնող նաև նշել է, որ իր երեխան արտասանական խնդիր ուներ, դաստիարակը պարապել է երեխայի հետ, վարժություններ են կատարել ու խնդիրը գրեթե լուծվել է:

Նախակրթարան չհաճախող երեխաների ծնողների ունեցած հարցազրույցներից պարզ է դառնում, որ տեղեկատվության պակասի կամ սխալ լինելու խնդիրը արդիական է նաև տարվա վերջում: Բոլոր ծնողները նշել են, ովքեր հնարավորություն չունեն, չեն տանում իրենց երեխաներին նախակրթարան: Այս ծնողներից միայն մեկն է, որ երեխային նախակրթարան չտանելու համար նաև այլ պատճառ է նշել, այն է՝ իր երեխան նախակրթարանի կարիք չունի:

Գծապատկեր 31-ում ներկայացված պարապմունքի դիտարկման տվյալները վկայում են, որ Վանաձորի նախակրթարանում բոլոր չափանիշների համար գրանցվել են միջինից բարձր ցուցանիշներ: Առավելագույն արտահայտվածություն ունեն *Ուսումնական գործողություններ և Հարցեր* չափանիշները /100.00%/: Մնացած չափանիշները գտնվում են 80.00%-ից բարձր միջակայքում:

Գծապատկեր 31. Վանաձորի նախակրթարանում պարապմունքի դիտարկման տվյալների վերլուծություն



Գծապատկեր 32. Վանաձորի երեխաների թեստավորման տվյալների վերլուծություն



Գծապատկեր 32–ում Վանաձոր համայնքի նախակրթարանի երեխաների թեստավորման ու վերաթեստավորման արդյունքներին նայելիս տեսնում ենք, որ առավելապես աճ է դրսևորվել *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (3) թվերի ճանաչում /28.57%→100.00%/, *բանավոր խոսքի ընկալում* ենթաոլորտի (7) բազմաբայլ հրահանգների հետևում /42.86%→100.00%/ և *տրամաբանություն և մտածողություն* ենթաոլորտի (4) օրինաչափությունների կազմում /21.43%→78.57%/ ցուցանիշների մասով:

Վանաձոր համայնքի ստուգիչ խմբի երեխաների վերաթեստավորման արդյունքները կամ գերազանցում են թեստավորման արդյունքներին կամ փոփոխություն չեն գրանցել: Առավելապես աճ են դրսևորել՝ *բանավոր խոսքի ընկալում* ենթաոլորտի (7) բազմաբայլ հրահանգների հետևում /14.29%→71.43%/ և *վաղ գրաճանաչություն* ենթաոլորտի (8) տառաճանաչություն /0.00%→28.57%/ ցուցանիշները:

Նայելով Գծապատկեր 32-ին՝ կարող ենք տեսնել, որ Վանաձոր համայնքի նախակրթարան հաճախող երեխաների թեստավորման արդյունքները՝ ցուցանիշների մասով, գերազանցում են ստուգիչ խմբի երեխաների թեստավորման արդյունքներին՝ բացառությամբ *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (3) թվերի ճանաչում /28.57%/ և *տրամաբանություն և մտածողություն* ենթաոլորտի (4) օրինաչափությունների կազմում /7.14%/ ցուցանիշների: Առավելապես դրական տարբերություն է նկատվում *բանավոր խոսքի ընկալում* ենթաոլորտի (7) բազմաբայլ հրահանգների հետևում /28.57%/ և *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (9) աջի և ձախի իմացություն ցուցանիշների մասով /28.57%/:

Համեմատելով թիրախային ու ստուգիչ խմբերի երեխաների վերաթեստավորման արդյունքները՝ տեսնում ենք, որ թիրախային խումբն ավելի բարձր արդյունք է ապահովել, քան ստուգիչ խումբը: Առավելապես տարբերվում են հետևյալ ցուցանիշները՝ *տրամաբանություն և մտածողություն* ենթաոլորտի (4) օրինաչափությունների կազմում /28.57%/, *բանավոր խոսքի ընկալում* ենթաոլորտի (7) բազմաբայլ հրահանգների հետևում /28.57%/ և *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (10) ժամի ճանաչում /42.85%/:

Գծապատկեր 33: Վանաձորի երեխաների տվյալների համեմատությունը ըստ ենթաոլորտների



Վանաձոր համայնքի նախակրթարանի երեխաների թեստավորման ու վերաթեստավորման արդյունքներին նայելիս (Գծապատկեր 33), տեսնում ենք, որ առավելապես աճ է դրսևորվել (2) *տրամաբանություն և մտածողություն* /35.71%→82.14%/ և (3) *բանավոր խոսքի ընկալում* /42.86%→100.00%/ ենթաոլորտների մասով:

Վանաձոր համայնքի ստուգիչ խմբի երեխաների թեստավորման ու վերաթեստավորման արդյունքներին նայելիս (Գծապատկեր 33), տեսնում ենք, որ առավելապես աճ է գրանցվել (2) *տրամաբանություն և մտածողություն* /28.57%→60.71%/ և (3) *բանավոր խոսքի ընկալում* /14.29%→71.43%/ ենթաոլորտների մասով:

Նայելով Գծապատկեր 33-ին՝ կարող ենք տեսնել, որ թեստավորման մասով նախակրթարան հաճախող երեխաների արդյունքները բոլոր ենթաոլորտների մասով գերազանցում են նախակրթարան չհաճախող երեխաների արդյունքների նույն ենթաոլորտներին, առավելապես (3) *բանավոր խոսքի ընկալում* /28.57%/ ենթաոլորտի մասով:

Համեմատելով նախակրթարան հաճախող ու չհաճախող երեխաների վերաթեստավորման արդյունքները՝ տեսնում ենք, որ նորից նախակրթարան հաճախող երեխաներն ավելի բարձր արդյունք են ապահովել քան ստուգիչ խմբի երեխաները:

5.3.4. Ընդհանրացված վերլուծություն

Լոռու մարզի, երեք նախակրթարաններն էլ, ընդհանուր առմամբ, բավականին հաջող էին իրականացնում ծրագիրը: Նախակրթարաններում իրականցված պարապմունքների վերլուծությունը թույլ է տալիս պարզել, որ բոլոր ցուցանիշներն ունեն բարձր արտահայտվածություն /83.33%-ից բարձր/: Առավելագույն արտահայտվածություն ունեն *Ուսումնական գործողություններ և Հարցեր* չափանիշները /100%/:

Գծապատկեր 34. Լոռու մարզի նախակրթարանների պարապմունքի դիտարկման չափանիշների ընդհանրացված վերլուծություն



Գծապատկեր 35: Լոռու մարզի երեխաների տվյալների համեմատությունը ըստ ենթաոլորտների



Լոռու մարզի նախակրթարանների երեխաների թեստավորման ու վերաթեստավորման արդյունքներին նայելիս (Գծապատկեր 35–ում), տեսնում ենք, որ բոլոր ցուցանիշները աճ են ունեցել: Առավելապես աճ է դրսևորվել *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (3) թվերի ճանաչում /42.86%→93.33%/, *տրամաբանություն և մտածողություն* ենթաոլորտի (4) օրինաչափությունների կազմում /23.81%→72.86%/ և (11) նմանությունների և տարբերությունների իմացություն /53.33%→90.24%/ ցուցանիշների մասով:

Լոռու մարզի նախակրթարան չհաճախող երեխաների վերաթեստավորման արդյունքները ևս գերազանցել են թեստավորման արդյունքներին: Առավելապես աճ է գրանցվել *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (3) թվերի ճանաչում /49.05%→75.24%/, *բանավոր խոսքի ընկալում* ենթաոլորտի (7) բազմաբայլ հրահանգների հետևում /51.43%→80.48%/ և *տրամաբանություն և մտածողություն* ենթաոլորտի (11) նմանությունների և տարբերությունների իմացություն /32.86%→60.48%/ ցուցանիշների մասով: Փոփոխության չի ենթարկվել *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (2) տարածական պատկերացումներ /0.00%/ և (10) ժամի ճանաչում /24.76%/ ցուցանիշները:

Գծապատկեր 35-ին նայելով՝ կարող ենք տեսնել, որ նախակրթարան հաճախող երեխաների թեստավորման արդյունքները՝ ցուցանիշների մեծ մասով գերազանցում են նախակրթարան չհաճախող երեխաների թեստավորման արդյունքներին: Զիջում են հետևյալ ցուցանիշները՝ *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (3) թվերի ճանաչում /6.2%/, (6) մաթեմատիկական պատկերացումներ /5.6%/, *տրամաբանություն և մտածողություն* ենթաոլորտի (4) օրինաչափությունների կազմում /5.71%/ և *մանր/նուրբ շարժողական ենթաոլորտի* (12) գրելու տարրական հմտություններ /1.67%/:

Համեմատելով Լոռու մարզի նախակրթարան հաճախող ու չհաճախող երեխաների վերաթեստավորման արդյունքները՝ տեսնում ենք, որ բոլոր ցուցանիշների մասով նախակրթարան հաճախող երեխաներն ավելի բարձր արդյունք են ապահովել, քան չհաճախողները: Առավելապես տարբերվում են հետևյալ ցուցանիշները՝ *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (10) ժամի ճանաչում /34.29%/ և *տրամաբանություն և մտածողություն* ենթաոլորտի (11) նմանությունների և տարբերությունների իմացություն /29.76%/:

Գծապատկեր 36. Լոռու թեստավորման տվյալների վերլուծությունը՝ ըստ ենթաոլորտների



Գծապատկեր 36-ից տեսնում ենք, որ Լոռու մարզում նախակրթարանի ծրագիրն արդյունավետ ընթացք է ունենում: Ավելին, զգալիորեն նկատվել է դրական դինամիկա ծրագրում ընդգրկված երեխաների զարգացման մակարդակում:

6. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ՝ ԸՍՏ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ

Սույն ենթաբաժինը կներայացնի քանակական հետազոտության առավել մանրամասն վերլուծությունը՝ ներկայացված երեխաների թեստավորման և պարապմունքների դիտարկման հիմնական չափանիշներով:

6.1. Պարապմունքի դիտարկման վերլուծություն՝ ըստ չափանիշների

Պարապմունքների քարտերի վերլուծությունը իրականացվել է ըստ քարտում ներառված ութ չափանիշների: Նախ ներկայացնենք այդ չափանիշների ձևավորվածության միջինացված ցուցանիշը բոլոր նախակրթարանների համար:

Գծապատկեր 37-ից երևում է, որ նախակրթարաններում բոլոր չափանիշներն էլ ունեն բավական բարձր արտահայտվածություն և գտնվում են 82.00%-ից բարձր միջակայքում: Առավելապես բարձր է *Հարցեր* չափանիշը /100.00%/:

Գծապատկեր 37. Բոլոր չափանիշների ընդհանրական վերլուծություն



Առաջին չափանիշը *նպատակն է:* Պարապմունքի նպատակը վերլուծելիս հաշվի են առնվել նպատակի հստակությունը, ձևակերպվածությունը, պարզությունը, դասի կառուցվածքային համապատասխանությունը դրված նպատակին, համապատասխանությունը չափորոշիչներին և երեխաների տարիքային առանձնահատկություններին, ինչպես նաև պարապմունքի հստակ պլանավորումը և պլան-կոնսպեկտի առկայությունը:

Վերլուծելով տվյալ չափանիշը 9 նախակրթարանների համար՝ ստացել ենք հետևյալ գծապատկերը.

Գծապատկեր 38. *Նպատակ* չափանիշի վերլուծությունը ըստ բոլոր նախակրթարանների



Գծապատկեր 38-ից երևում է, որ տվյալ չափանիշը մաքսիմալ /100.00%/ արտահայտվածություն ունի Ստեփանավանում, Սպիտակում, Ներքին Ծաղկավանում և Դովեղում: Առավել ցածր ցուցանիշ է գրանցվել Ոսկեհատում և Ոսկեպարում /50.00%/:

Այժմ ներկայացնենք տվյալ չափանիշի առկայությունը մարզերի կտրվածքով:

Գծապատկեր 39. *Նպատակ* չափանիշի վերլուծությունն ըստ մարզերի



Գծապատկերից երևում է, որ բոլոր երեք մարզերում տվյալ չափանիշի առկայությունը, ընդհանուր առմամբ, բարձր արտահայտվածություն ունի. առավելագույն ցուցանիշը գրանցվել է Լոռիում /97.22%/, իսկ համեմատաբար ցածրը՝ Արմավիրում /72.22%/:

Դիտարկմանը ենթակա երկրորդ չափանիշը պարապմունքների ընթացքում կիրառված *մեթոդներն* էին: Այս չափանիշի վերլուծության ժամանակ հաշվի են առնվել մեթոդների համապատասխանությունը պարապմունքի նպատակին, բովանդակությանը, երեխաների տարիքային առանձնահատկություններին, նրանց պատրաստվածության մակարդակին, պարապմունքի ընթացքում տարբեր մոտեցումների համակցությունը, դիդակտիկ նյութի, խաղային էլեմենտների ապահովումը և այլն:

Վերլուծելով տվյալ չափանիշը 9 նախակրթարանների համար՝ ստացել ենք հետևյալ գծապատկերը.

Գծապատկեր 40. *Մեթոդներ* չափանիշի վերլուծությունն ըստ նախակրթարանների



Տվյալ չափանիշի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ այն առավելապես է արտահայտված Արմավիրի նախակրթարանում /100.00%/, իսկ ամենացածրը՝ Ոսկեպարի նախակրթարանում /57.14%/:

Այժմ ներկայացնենք տվյալ չափանիշի առկայությունը մարզերի կտրվածքով.

Գծապատկեր 41. *Մեթոդներ* չափանիշի վերլուծությունը ըստ մարզերի



Համաձայն գծապատկերի, մարզերից ոչ մեկում տվյալ չափանիշի առկայությունը մաքսիմալ չէ: Առավելագույն ցուցանիշը արձանագրվել է Լոռիում /97.62%/, իսկ համեմատաբար ցածրը՝ Տավուշի մարզում /77.38%/:

Հաջորդ չափանիշը *ուսումնական գործողություններն* են, որոնց վերլուծության ժամանակ ուշադրություն է դարձվել ուսումնական նյութի առավել խորքային ընկալման համար նախատեսված գործողությունների բազմազանությանը, հերթափոխմանը, տարաբնույթ վարժությունների, հանձնարարականների կատարմանը, առավել ամբողջական յուրացման նպատակով տարբեր զգայարանների ակտիվացմանը և այլն:

Վերլուծելով տվյալ չափանիշը 9 նախակրթարանների համար՝ ստացել ենք հետևյալ գծապատկերը:

Գծապատկեր 42. *Ուսումնական գործողություններ* չափանիշի վերլուծությունն ըստ նախակրթարանների



Գծապատկեր 42-ի օգնությամբ կարող ենք տեսնել, որ տվյալ չափանիշի մաքսիմալ արտահայտվածություն է նկատվում Ստեփանավանի, Վանաձորի, Սպիտակի և Մեծամորի նախակրթարաններում /100.00%/: Համեմատաբար ցածր է ուսումնական գործողությունների դրսևորումները Ոսկեպարի /75.00%/, այնուհետև՝ Դովեղի /81.25%/ նախակրթարաններում:

Այժմ ներկայացնենք տվյալ չափանիշի առկայությունը մարզերի կտրվածքով.

Գծապատկեր 43. *Ուսումնական գործողություններ* չափանիշի վերլուծությունը ըստ մարզերի



Վերոնշյալ գծապատկերից երևում է, որ *Ուսումնական գործողություններ* չափանիշի արտահայտվածությունը բոլոր չորս մարզում բավականին բարձր է /85.42%-ից բարձր/: Առավելագույնը արտահայտված է Լոռու մարզում /100.00%/:

Պարապմունքների դիտման քարտի հաջորդ չափանիշը *Հարցերն* են: Տվյալ չափանիշը գնահատելիս հաշվի են առնվել հարցերի ձևակերպման առանձնահատկությունները /հստակություն, պարզություն, նյութին համապատասխանություն և այլ/, համապատասխանությունը երեխաների տարիքին, տրամաբանական կառուցվածքը, վերլուծելու, արտահայտվելու, մտածական կարողությունները խթանելուն ուղղվածությունը և այլն:

Վերլուծելով տվյալ չափանիշը 9 նախակրթարանների համար՝ ստացել ենք հետևյալ գծապատկերը.

Գծապատկեր 44. *Հարցեր* չափանիշի վերլուծությունը ըստ նախակրթարանների



Ինչպես կարող ենք նկատել բերված գծապատկերից, տվյալ չափանիշի արտահայտվածությունը առավելագույնն է: Բոլոր նախակրթարաններում գրանցվել է առավելագույն ցուցանիշը /100.00%/:

Այժմ ներկայացնենք տվյալ չափանիշի առկայությունը մարզերի կտրվածքով՝

Գծապատկեր 45. *Հարցեր* չափանիշի վերլուծությունն ըստ մարզերի



Վերլուծելով *Հարցեր* չափանիշի ձևավորվածությունն ըստ մարզերի՝ նորից կարող ենք տեսնել նույն պատկերը՝ բոլոր մարզերում այն ունի արտահայտվածության բարձր մակարդակ /100.00%/:

Հաջորդ չափանիշը, որն առանձնացվել է պարապմունքների դիտարկման ընթացքում, *ժամանակն* է: Տվյալ չափանիշի վերլուծության ժամանակ հաշվի են առնվել պարապմունքի ժամանակային սահմանների պահպանումը, յուրաքանչյուր առաջադրանքի, վարժության համար նախատեսված ժամանակային հստակ պլանավորումը և պահպանումը, ժամանակի որակյալ օգտագործումը պարապմունքի յուրաքանչյուր փուլի համար և այլն:

Վերլուծելով տվյալ չափանիշը 9 նախակրթարանների համար՝ ստացել ենք հետևյալ գծապատկերը.

Գծապատկեր 46*. Ժամանակ* չափանիշի վերլուծությունը ըստ նախակրթարանների



Վերլուծելով Գծապատկեր 46-ը կարող ենք նկատել, որ այս չափանիշը գրեթե բոլոր նախակրթարաններում կայուն արտահայտվածություն ունի /80.00%/, իսկ առավելագույն ցուցանիշը գրանցվել է Սպիտակի նախակրթարանում /100.00%/: Սա նշանակում է, որ ժամանակի գործոնը գրեթե հավասարապես կարևորվում է բոլոր նախակրթարաններում:

Այժմ ներկայացնենք տվյալ չափանիշի առկայությունը մարզերի կտրվածքով.

Գծապատկեր 47. *Ժամանակ* չափանիշի վերլուծությունն ըստ մարզերի



Գծապատկեր 47-ից կարող ենք տեսնել, որ սույն չափանիշն իր մաքսիմալ դրսևորումն ունի Լոռու /86.67%/ մարզում, այնուհետև Արմավիրի և Տավուշի մարզերում՝ հավասարապես /80.00%/:

Հաջորդ չափանիշը *զարգացնող միջավայրն* է: Զարգացնող միջավայրը ապահովում է երեխայի բազմակողմանի և ներդաշնակ զարգացումը, դրդում է երեխային գործողությունների, նպաստում է երեխայի ինքնուրույնության և ստեղծարարության զարգացմանը, երեխայի սուբյեկտային դիրքի զարգացմանը: Տվյալ չափանիշի վերլուծության ժամանակ հաշվի են առնվել դիդակտիկ, զննական, բնական պարագաների և նյութերի առկայությունը, դրանց համապատասխանությունը դասի բովանդակությանը, երեխաների տարիքային առանձնահատկություններին, հետազոտելու, ինքնուրույն վերլուծելու հնարավորությունների ընձեռնմանը և այլն:

Նշված չափանիշը ամենածավալունն է իր բնութագրիչներով և առաջնային նախապայմանն է երեխայի զարգացման և ուսուցանման համար:

Վերլուծելով տվյալ չափանիշը 9 նախակրթարանների համար՝ ստացել ենք հետևյալ գծապատկերը:

Գծապատկեր 48. ***Զարգացնող միջավայր*** **չափանիշի վերլուծությունն ըստ նախակրթարանների**



Ինչպես տեսնում ենք Գծապատկեր 48-ում բերված արդյունքներից, տվյալ չափանիշը խառը արտահայտվածություն ունի, սակայն նվազագույն ցուցանիշն այդքան էլ մտահոգիչ չէ, գրանցվել է Ոսկեհատում և Ոսկեպարում /68.75%/: Առավելագույն արդյունքն արտահայտվել է Սպիտակում /100.00%/: Լավ ցուցանիշ կարելի է համարել այս չափանիշի համար նաև Ստեփանավանի /96.88%/, Վանաձորի և Արմավիրի /90.63%/ նախակրթարանների ցուցանիշները:

Այժմ ներկայացնենք տվյալ չափանիշի առկայությունը մարզերի կտրվածքով.

Գծապատկեր 49. ***Զարգացնող միջավայր*** **չափանիշի վերլուծությունը ըստ մարզերի**



Բերված գծապատկերից երևում է, որ տվյալ չափանիշը բոլոր մարզերում բավականին լավ արտահայտվածություն ունի /78.13% -ից բարձր/: Բարձր արտահայտվածություն ունի Լոռիում /95.83%/:

Պարապմունքների դիտարկման քարտի հաջորդ չափանիշը *երեխաների ակտիվությունը և համագործակցությունն է,* որը ենթադրում է պարապմունքներին երեխաների ընդգրկվածության վերլուծությունը, համագործակցային պայմանների ստեղծումը, խաղասենյակում երեխայի ակտիվության վերլուծություն և այլն:

Վերլուծելով տվյալ չափանիշը 9 նախակրթարանների համար՝ ստացել ենք հետևյալ գծապատկերը.

Գծապատկեր 50. *Երեխաների համագործակցություն, ակտիվություն* չափանիշի վերլուծությունն ըստ նախակրթարանների



Երեխաների ակտիվություն, համագործակցություն չափանիշը երեխայակենտրոն ուսուցման կարևորագույն չափանիշներից մեկն է, որը հնարավորություն է ընձեռնում ուսուցումը կազմակերպել այնպես, որ ուսուցման ընթացքում զարգանա երեխայի ամբողջական անձը: Վերլուծելով այս չափանիշի արտահայտվածությունը բոլոր նախակրթարաններում՝ կարող ենք նկատել, որ այն մաքսիմալ է արտահայտված Ստեփանավանի, Սպիտակի և Մեծամորի նախակրթարաններում /100.00%/: Մյուս նախակրթարաններում չափանիշն ունի 82.14%-ից բարձր արտահայտվածություն:

Այժմ ներկայացնենք տվյալ չափանիշի առկայությունը մարզերի կտրվածքով.

Գծապատկեր 51. *Երեխաների համագործակցություն, ակտիվություն* չափանիշի վերլուծությունն ըստ մարզերի



Գծապատկեր 51-ից երևում է, որ տվյալ չափանիշը բոլոր երեք մարզերում էլ ունի բարձր արտահայտվածություն /86.90%-ից բարձր/:

Վերջին չափանիշը, որը ընդգրկված էր դիտարկման քարտի մեջ, *դաստիարակի հմտություններն* են: Այս չափանիշը դիտարկելիս հաշվի են առնվում դաստիարակի շփման հմտությունները, խոսքի գրագիտությունը, երեխայի անձի հանդեպ հարգալից, ընդունող, հասկացող մոտեցումները, համագործակցությունը օգնականի հետ, գենդերային ասպեկտների հանդեպ նրբանկատությունը և այլն:

Վերլուծելով տվյալ չափանիշը ստացել ենք հետևյալ գծապատկերը:

Գծապատկեր 52. *Դաստիարակի հմտություններ* չափանիշի վերլուծությունը ըստ նախակրթարանների



Տվյալ չափանիշը համարվում է կարևորագույններից մեկը, քանի որ արտահայտում է մանկավարժի թե՛ անձնային, թե՛ մասնագիտական հմտությունների զարգացվածությունը, ինչը անմիջականորեն է ազդում երեխայի անձնային, իմացական, հուզական և այլ ոլորտների զարգացման վրա: Տվյալ չափանիշի վերլուծությունը ցույց է տալիս, որ այն ունի հավասարապես բարձր արտահայտվածություն գրեթե բոլոր նախակրթարաններում /83.33%/:

Այժմ ներկայացնենք տվյալ չափանիշի առկայությունը մարզերի կտրվածքով:

Գծապատկեր 53. *Դաստիարակի հմտություններ* չափանիշի վերլուծությունը ըստ մարզերի



Ինչպես երևում է վերը նշված գծապատկերից, տվյալ չափանիշը երեք մարզերում՝ Լոռիում, Արմավիրում և Տավուշում բարձր արդյունք է գրանցել՝ /83.33% և 81.94% համապատասխանաբար/:

Այժմ, որպեսզի առավել ակնառու տեսնենք բոլոր նախակրթարաններում իրականացված պարապմունքների դիտարկման քարտերի տվյալների միջին ցուցանիշների արտահայտվածությունը և վերլուծենք պարապմունքների իրականացման արդյունավետությունը ըստ դիտարկված չափանիշների, վերլուծենք ներքոնշյալ գծապատկերը:

Գծապատկեր 54. Պարապմունքի դիտարկման որդյունքների վերլուծություն՝ ըստ նախակրթարանների



Բոլոր ցուցանիշների միջինացված տվյալները վկայում են այն մասին, որ բոլոր նախակրթարաններում էլ արդյունավետ պարապմունքներ են իրականացվել /80.00%-ից բարձր/: Համեմատականորեն ցածր է Ոսկեպարի ցուցանիշը /74.92%/, սակայն մտահոգիչ չէ:

Ինչ վերաբերում է մարզային տվյալներին (Գծապատկեր 55), ապա ընդհանրացված տեսքով, կարելի է փաստել, որ ըստ բոլոր ցուցանիշների միջինացված տվյալների՝ Լոռու մարզի նախակրթարանների պարապմունքների ընդհանուր արդյունավետությունը ամենաբարձրն է և կազմում է 94.34%:

Գծապատկեր 55. Պարապմունքների դիտարկման ընդհանուր բնութագիր՝ ըստ մարզերի



6.2. Երեխաների թեստավորման վերլուծություն՝ ըստ ցուցանիշների և ենթաոլորտների

Բոլոր նախակրթարանի երեխաների թեստավորման ու վերաթեստավորման արդյունքներին նայելիս (Գծապատկեր 56–ում), տեսնում ենք, որ առավելապես աճ է դրսևորվել *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (3) թվերի ճանաչում /48.69%→83.78%/, (6) մաթեմատիկական պատկերացումներ /39.01%→73.12%/ և *տրամաբանություն և մտածողություն* ենթաոլորտի (4) օրինաչափությունների կազմում /35.32%→70.52%/ ցուցանիշների մասով:

Նախակրթարան չհաճախող երեխաների թեստավորման ու վերաթեստավորման արդյունքներին նայելիս տեսնում ենք, որ բոլոր ցուցանիշների մասով աճ է գրանցվել: Առավելապես աճել են *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (3) թվերի ճանաչում /48.69%→83.78%/ և *տրամաբանություն և մտածողություն* ենթաոլորտի (11) նմանությունների և տարբերությունների իմացություն /41.62%→58.56%/ ցուցանիշները:

Նայելով Գծապատկեր 56-ին՝ կարող ենք տեսնել, որ նախակրթարան հաճախող երեխաների թեստավորման արդյունքները ևս գերազանցում են նախակրթարան չհաճախող երեխաների թեստավորման արդյունքներին: Առավելապես աճ է գրացվել *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (5) տարրական մաթեմատիկական պատկերացումներ /17.79%/, *բանավոր խոսքի ընկալում* ենթաոլորտի (7) բազմաբայլ հրահանգների հետևում /16.06%/ և

տրամաբանություն և մտածողություն ենթաոլորտի (11) նմանությունների և տարբերությունների իմացություն /23.31%/ ցուցանիշների մասով:

Համեմատելով նախակրթարան հաճախող ու չհաճախող երեխաների վերաթեստավորման արդյունքները՝ տեսնում ենք, որ նախակրթարան հաճախող երեխաներն ավելի բարձր արդյունք են ապահովել տարվա վերջում, քան չհաճախողները: Առավելապես տարբերվում են *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (3) թվերի ճանաչում /31.4%/ և *տրամաբանություն և մտածողություն* ենթաոլորտի (11) նմանությունների և տարբերությունների իմացություն /33.97%/ ցուցանիշները:

Գծապատկեր 56. Թեստավորման ընդհանրացված տվյալներ՝ ըստ ցուցանիշների



Գծապատկեր 57-ում ներկայացված են բոլոր երեխաների թեստավորման միջինացված տվյալները ըստ ենթաոլորտների: Կարող ենք նկատել, որ երեխաների թեստավորման ու վերաթեստավորման արդյունքների մեջ առավելապես աճ է դրսևորվել (2) *տրամաբանություն և մտածողություն* /46.64%→78.27%/ ենթաոլորտի մասով:

Ստուգիչ խմբի երեխաների թեստավորման արդյունքները ևս գերազանցել են վերաթեստավորման արդյունքներին (Գծապատկեր 57): Առավելապես աճ է գրանցվել (2) *տրամաբանություն և մտածողություն* /32.40%→46.38%/ և (3) *բանավոր խոսքի ընկալում* /56.94%→68.86%/ ցուցանիշների մասով:

Գծապատկեր 57-ում երևում է, որ թեստավորման մասով թիրախային խմբի երեխաների արդյունքները՝ բոլոր ենթաոլորտների մասով, գերազանցում են ստուգիչ խմբի երեխաների արդյունքներին: Առավելապես տարբերվում են նորից (2) *տրամաբանություն և մտածողություն* /14.24%/ և (3) *բանավոր խոսքի ընկալում* /16.06%/ ցուցանիշների մասով:

Համեմատելով նախակրթարան հաճախող ու չհաճախող երեխաների վերաթեստավորման արդյունքները՝ տեսնում ենք, որ նախակրթարան հաճախող երեխաներն ավելի բարձր արդյունք են ապահովել ստուգիչ խմբի երեխաներից:

Գծապատկեր 57. Թեստավորման ընդհանրացված տվյալներ՝ ըստ ենթաոլորտների



Այժմ կներկայացնենք երեխաների զարգացման առանձին ենթաոլորտների դինամիկայի և տարբերությունների համեմատությունը՝ ըստ առանձին մարզերի:

Վերլուծությունից տեսնում ենք (Գծապատկեր 58), որ նախակրթարան հաճախող և չհաճախող երեխաների շրջանում ամենազարգացած ենթաոլորտը (3) բանավոր խոսքի ընկալումն է:

(1) տարրական մաթեմատիկական գիտելիքներ ենթաոլորտի մասով թիրախային խմբի երեխաների վերաթեստավորման արդյունքը առավելապես գերազանցում է թեստավորման արդյունքին Լոռու մարզում /45.04%→70.28%/: Ստուգիչ խմբի վերաթեստավորման արդյունքը առավելապես գերազանցում է թեստավորման արդյունքին Արմավիրի մարզում /38.09%→48.96%/: (1) տարրական մաթեմատիկական գիտելիքներ ենթաոլորտի մասով թիրախային խմբի թե թեստավորման և թե վերաթեստավորման արդյունքը առավելապես է գերազանցում ստուգիչ խմբի նույն արդյունքին նորից Արմավիրի մարզում /14.87% և 27.05, համապատասխանաբար/:

Գծապատկեր 58-ից տեսնում ենք, որ (2) *տրամաբանություն և մտածողություն ենթաոլորտի* մասով թիրախային խմբի երեխաների վերաթեստավորման արդյունքն առավելապես գերազանցում է թեստավորման արդյունքին Լոռու մարզում /38.57%→81.55%/: Ստուգիչ խմբի երեխաների վերաթեստավորման արդյունքն էլ առավելապես գերազանցում է թեստավորման արդյունքին Լոռու մարզում /31.19%→55.24%/: Թիրախային խմբի թեստավորման արդյունքն առավելապես է գերազանցում ստուգիչ խմբի և թեստավորման և վերաթեստավորման արդյունքին Արմավիրի մարզում /19.01% և 37.65%, համապատասխանաբար/:

Նայելով Գծապատկեր 58-ին կտեսնենք, որ (3) *բանավոր խոսքի ընկալում* ենթաոլորտի մասով թիրախային խմբի երեխաների վերաթեստավորման արդյունքը առավելապես գերազանցում է թեստավորման արդյունքին Լոռու մարզում /67.62%→100.00%/: Ստուգիչ խմբի վերաթեստավորման արդյունքը առավելապես գերազանցում է թեստավորման արդյունքին նորից Լոռու մարզում /51.43%→80.48%/, բայց զիջում է Տավուշի մարզում գրանցված թեստավորման արդյունքին /6.02%/: Նույն ենթաոլորտի մասով թիրախային խմբի և թեստավորման և վերաթեստավորման արդյունքը առավելապես գերազանցում է ստուգիչ խմբի նույն արդյունքին Տավուշի մարզում /17.13% և 35.65, համապատասխանաբար/:

(4) *վաղ գրաճանաչություն* ենթաոլորտի մասով (Գծապատկեր 58) և՛ թիրախային խմբի, և՛ ստուգիչ խմբի դեպքում վերաթեստավորման արդյունքը առավելապես գերազանցում է թեստավորման արդյունքին Լոռու մարզում /32.65%→52.27%/: Ստուգիչ խմբի վերաթեստավորման արդյունքը առավելապես գերազանցում է թեստավորման արդյունքին նորից Արմավիրի մարզում /22.73%→36.52%/, զիջում է՝ Տավուշի մարզում /26.27%→24.65%/: Նույն ենթաոլորտի մասով թիրախային խմբի և թեստավորման և վերաթեստավորման արդյունքը առավելապես է գերազանցում ստուգիչ խմբի նույն արդյունքին Տավուշի մարզում /10.65% և 32.53%, համապատասխանաբար/:

Գծապատկեր 58. Մարզային վերլուծություն՝ ըստ ենթաոլորտների



Գծապատկեր 58-ից տեսնում ենք, որ (5) *մանր/նուրբ շարժողական* ենթաոլորտի մասով թիրախային խմբի երեխաների վերաթեստավորման արդյունքը առավելապես գերազանցում է թեստավորման արդյունքին Լոռու մարզում /45.06%→56.73%/: Ստուգիչ խմբի վերաթեստավորման արդյունքը գերազանցում է թեստավորման արդյունքին միայն Տավուշի մարզում /36.75%→41.55%/: (5) *մանր/նուրբ շարժողական ենթաոլորտի* մասով թիրախային խմբի թեստավորման արդյունքը առավելապես գերազանցում է ստուգիչ խմբի նույն արդյունքին Տավուշի մարզում /10.24%/, իսկ նույն ենթաոլորտի վերաթեստավորման արդյունքի մասով թիրախային խմբի թեստավորման արդյունքը առավելապես գերազանցում է ստուգիչ խմբի արդյունքին Արմավիրի մարզում /16.36%/:

Գծապատկեր 59-ից տեսնում ենք, որ թեստավորման ժամանակ Տավուշի մարզի արդյունքներն են գերազանցում մյուս երկու մարզերի արդյունքներին, իսկ վերաթեստավորման ժամանակ՝ Լոռու մարզի:

Գծապատկեր 59. Շահառու երեխաների դինամիկայի տոկասային ցուցանիշներ



Գծապատկեր 60-ում ներկայացված են զարգացման բոլոր ենթաոլորտների ցուցանիշների միջինացված տվյալների տարբերությունը ծրագրում ընդգրկված երեխաների առաջին և երկրորդ թեստավորման և ծրագրում ընդգրկված և չընդգրկված երեխաների տվյալների միջև: Տեսնում ենք, որ թիրախային և ստուգիչ խմբերի վերաթեստավորման արդյունքները առավելապես գերազանցում են թեստավորման արդյունքներին Լոռի մարզում /28.4% և 15.2%, համապատասխանաբար/: Թիրախային խմբի արդյունքը թեստավորման մասով առավելապես գերազանցում է ստուգիչ խմբի արդյունքին Արմավիրի մարզի դեպքում /13.4%/, վերաթեստավորման մասով՝ Տավուշի մարզում /25.76%/:

Գծապատկեր 60. Շահառու երեխաների դինամիկայի տոկասային ցուցանիշներ



6.3. Թեստավորման ընդհանրացված սեռային տվյալներ՝ ըստ ցուցանիշների և ենթաոլորտների

Գծապատկեր 61-ը ցույց է տալիս բոլոր մարզերի նախակրթարան հաճախող և չհաճախող երեխաների սեռային բնութագիրը՝ ըստ թեստավորման ցուցանիշների:

Բոլոր նախակրթարանի երեխաների՝ ըստ սեռի թեստավորման ու վերաթեստավորման արդյունքներին նայելիս տեսնում ենք, որ բոլոր ցուցանիշների մասով թե տարվա սկզբում և թե տարվա վերջում տղաների արդյունքներն ավելի բարձր են եղել, քան աղջիկների արդյունքները՝ բացառությամբ տարածական պատկերացումներ ցուցանիշի, որի մասով տարվա սկզբում աղջիկների ցուցանիշը 0.3%-ով գերազանցել է տղաների ցուցանիշին: Տարվա սկզբին տղաների առավելություն նկատվել է առավելապես հետևյալ ցուցանիշների մասով՝ *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (5) տարրական մաթեմատիկական պատկերացումներ /9.01%/, (9) աջի և ձախի իմացություն /14.16%/, և *բանավոր խոսքի ընկալում* ենթաոլորտի (7) բազմաբայլ հրահանգների հետևում /11.56%/:

Նախակրթարան չհաճախող երեխաների թեստավորման ու վերաթեստավորման արդյունքներին նայելիս տեսնում ենք, որ տարվա սկզբում տարբեր ցուցանիշների մասով տղաների և աղջիկների արդյունքները տարբեր են եղել, չնայած տղաների առավելությունը գերակշռել է: Իսկ տարվա վերջին ցուցանիշների մեծ մասի համար տղաներն ավելի լավ ցուցանիշներ են գրանցել: Տարվա սկզբին տղաների առավելագույն առավելություն նկատվել է՝ *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (5) տարրական մաթեմատիկական պատկերացումներ /4.19%/, (3) թվերի ճանաչում /4.75%/, *բանավոր խոսքի ընկալում* ենթաոլորտի (7) բազմաբայլ հրահանգների հետևում /4.79%/ և *մանր/նուրբ շարժողական ենթաոլորտի* (13) զգայաշարժողական հմտություններ /10.27%/ ցուցանիշների մասով: իսկ տարվա վերջում՝ *տրամաբանություն և մտածողություն* ենթաոլորտի (11) նմանությունների և տարբերությունների իմացություն /8.09%/ և (4) օրինաչափությունների կազմում /11.65%/ ցուցանիշների մասով:

Թեև ըստ բոլոր նախակրթարանների միջինացված տվյալների տղաները մեծամասամբ ավելի զարգացած են եղել քան աղջիկները (ինչպես նշում էին նաև որոշ դաստիարակներ), հատկապես նախակրթարան հաճախող երեխաների շրջանում, այնուամենայնիվ սեռային հատկանիշների և երեխաների զարգացվածության միջև կորրելացիայի վերաբերյալ եզրակացություն անել չենք կարող, որովհետև հաջորդ ենթաբաժնում (4.1) ներկայացված է նախակրթարանում ընդգրկված և չընդգրկված երեխաների սեռային զարգացվածությունը ըստ մարզերի և համայնքների և այնտեղ պատկերը մի փոքր այլ է: Երկու մարզերի դեպքում մեծամասամբ աղջիկների ցուցանիշները գերազանցում են տղաների ցուցանիշներին:

Գծապատկեր 61: Թեստավորման ընդհանրացված տվյալներ՝ ըստ ցուցանիշների և սեռի



Գծապատկեր 62-ը ցույց է տալիս բոլոր մարզերի նախակրթարան հաճախող և չհաճախող երեխաների սեռային բնութագիրը՝ ըստ թեստավորման ենթաոլորտների:

Նախակրթարան հաճախող և չհաճախող բոլոր երեխաների՝ ըստ սեռի թեստավորման ու վերաթեստավորման արդյունքներին նայելիս տեսնում ենք, որ բոլոր ենթաոլորտների մասով թե տարվա սկզբում և թե տարվա վերջում տղաների արդյունքներն ավելի բարձր են եղել, քան աղջիկների արդյունքները՝ բացառությամբ թիրախային խմբի վերաթեստավորման մի քանի ենթաոլորտների: Թիրախային խմբի համար թե տարվա սկզբում և թե տարվա վերջում տղաների առավելություն նկատվել է հատկապես (3) *բանավոր խոսքի ընկալում* ենթաոլորտի /11.56% և 13.61%, համապատասխանաբար/: Ստուգիչ խմբի դեպքում տարվա սկբում տղաների արդյունքները առավելապես գերազանցել են (3) *բանավոր խոսքի ընկալում* /4.79%/ *և (5) մանր/նուրբ շարժողական* ենթաոլորտների մասով /4.98%/, իսկ տարվա վերջում՝ *(2) տրամաբանություն և մտածողություն* ենթաոլորտի մասով:

Գծապատկեր 62: Թեստավորման ընդհանրացված տվյալներ՝ ըստ ենթաոլորտների և սեռի



6.4. Նախակրթարանում ընդգրկված և չընդգրկված երեխաների ընտանիքների սոցիալ-ժողովրդագրական բնութագրի նկարագրություն և երեխաների զարգացման դինամիկայի վրա սեռային հատկանիշների ազդեցության նկարագրություն

Գծապատկեր 63-ից երևում է, որ Արմավիրի մարզի երեք համայնքներում, թե տարվա սկզբում և թե տարվա վերջում նախակրթարանում ընդգրկված և չընդգրկված երեխաների հարցման ժամանակ, լավ և միջին սոցիալ տնտեսական վիճակում գտնվող ընտանիքների երեխաներն ավելի զարգացած են եղել (ըստ մեկ երեխայի հաշվով ստացված ճիշտ պատասխանների քանակի) Ոսկեհատում, իսկ վատ սոցիալ տնտեսական վիճակում գտնվող ընտանիքների երեխաները՝ Արմավիրում: Սակայն սա չի նշանակում, որ միայն սոցիալ-տնտեսական վիճակն է կանխորոշում երեխաների զարգացվածության մակարդակը, քանի որ բացի այդ գործոնից ոչ պակաս ազդեցություն ունեն նաև նախակրթարանի գործոնը, ընտանիքների անդամների զբաղվածության կարգավիճակը՝ երեխայի հետ զբաղվելու համար ազատ ժամանակ ունենալու տեսանկյունից, և շատ այլ հնարավոր գործոններ: Այնուամենայնիվ, որակական վերլուծության տվյալներով (ըստ նախակրթարանների տնօրենների և դաստիարակների), սոցիալ-տնտեսական վիճակը ազդում է երեխաների տրամադրության վրա, դասին կենտրոնացման, սոցիալականացման: Մեծամորի և Ոսկեհատի վատ սոցիալ-տնտեսական վիճակում գտնվող ընտանիքների՝ նախակրթարան հաճախող երեխաները թե տարվա սկզբում և թե տարվա վերջում մեկ երեխայի հաշվով ճիշտ պատասխան չեն տվել, իսկ լավ սոցիալական վիճակում գտնվող ընտանիքների՝ նախակրթարան չհաճախող երեխաները ճիշտ պատասխան չեն տվել Մեծամորում:

Գծապատկեր 64-ը ցույց է տալիս Արմավիրի մարզի նախակրթարան հաճախող և չհաճախող երեխաների սեռային բնութագիրը՝ ըստ երեխաների առաջադիմության: Թե տարվա սկզբում և թե տարվա վերջում նախակրթարան հաճախող տղաների զարգացվածությունը՝ ըստ մեկ երեխայի հաշվով տրված միջին ճիշտ պատասխանների, ավելի բարձր է եղել քան նախակրթարան հաճախող աղջիկներինը: Նախակրթարան չհաճախող երեխաների դեպքում պատկերը հակառակն է եղել, բացառությամբ Արմավիրի՝ տարվա սկզբում և Ոսկեհատի՝ տարվա վերջում: Այսպիսով կարող ենք եզրակացնել, որ նախակրթարան հաճախող երեխաների շրջանում բոլոր մարզերում տղաներն ավելի զարգացած են եղել քան աղջիկները, իսկ նախակրթարան չհաճախող երեխաների շրջանում պատկերը տարբեր է եղել:

Գծապատկեր 63. Արմավիրի մարզի նախակրթարանում ընդգրկված և չընդգրկված երեխաների ընտանիքների սոցիալ-ժողովրդագրական վիճակի բնութագիրը՝ ըստ երեխաների առաջադիմության



Գծապատկեր 64. Արմավիրի մարզի նախակրթարանում ընդգրկված և չընդգրկված երեխաների սեռային բնութագիրը՝ ըստ երեխաների առաջադիմության



Գծապատկեր 65-ից երևում է, որ Տավուշի մարզի նախակրթարաններում ընդգրկված և չնդգրկված երեխաների շրջանում, ըստ երեխաների զարգացվածության մակարդակի, թե տարվա սկզբում և թե տարվա վերջում առաջատար դիրքը զբաղեցնում է Ներքին Ծաղկավանը՝ երեխաների ընտանիքների սոցիալ-տնտեսական վիճակի տարբեր կատեգորիաների համար՝ բացառությամբ միջին սոցիալ-տնտեսակ վիճակ ունեցող ընտանիքների՝ չհաճախող երեխաների արդյունքների: Հատկանշական է, որ Դովեղի և Ոսկեպարի լավ սոցիալ տնտեսական վիճակում գտնվող ընտանիքների՝ նախակրթարաններում չընդգրկված երեխաները տարվա սկզբում և վերջում մեկ երեխայի հաշվով ճիշտ պատասխան չեն տվել: Ընդհանուր առմամբ, մեկ երեխայի հաշվով տրված միջին ճիշտ պատասխանների թիվը երեք համայնքների և երեխաների ընտանիքների սոցիալ-տնտեսական վիճակի տարբեր կատեգորիաների համար տարբեր է եղել և ցոցիալ-տնտեսական վիճակի ու երեխաների զարգացվածության միջև կորրելացիա նկատելի չէ:

Գծապատկեր 65. Տավուշի մարզի նախակրթարանում ընդգրկված և չընդգրկված երեխաների ընտանիքների սոցիալ-ժողովրդագրական վիճակի բնութագիրը՝ ըստ երեխաների առաջադիմության



Գծապատկեր 66-ը ցույց է տալիս Տավուշի մարզի նախակրթարան հաճախող և չհաճախող երեխաների սեռային բնութագիրը՝ ըստ երեխաների առաջադիմության: Ի տարբերություն Արմավիրի մարզի, այստեղ թե տարվա սկզբին և թե տարվա վերջին աղջիկների զարգացվածության միջին ցուցանիշներն ավելի բարձր են եղել՝ բացառությամբ ներքին Ծաղկավանի ստուգիչ խմբի տարվա վերջի արդյունքների:

Գծապատկեր 66. Տավուշի մարզի նախակրթարանում ընդգրկված և չընդգրկված երեխաների սեռային բնութագիրը՝ ըստ երեխաների առաջադիմության



Գծապատկեր 67-ից երևում է, որ Լոռու մարզում որևէ համայնքի հստակ առավելություն չի նկատվել և մեկ երեխայի հաշվով տրված միջին ճիշտ պատասխանների թիվը տարբեր համայնքների և երեխաների ընտանիքների սոցիալ-տնտեսական վիճակի տարբեր կատեգորիաների համար բավական տարբեր է եղել: Դա նշանակում է, որ Լոռու մարզի համար ևս երեխաների զարգացվածության վրա նրանց ընտանիքների սոցիալ-տնտեսական վիճակի ազդեցության հստակ պատկեր չի նկատվում, ուստի ազդեցության վերաբերյալ մեկնաբանություն անել չենք կարող: Մտահոգիչ է միայն այն փաստը, որ Սպիտակի լավ սոցիալ-տնտեսական վիճակում գտնվող ընտանիքների՝ նախակրթարան չհաճախող երեխաների կողմից, տարվա սկզբին և տարվա վերջին մեկ երեխայի հաշվով ճիշտ պատասխան չի տրվել:

Գծապատկեր 67. Լոռու մարզի նախակրթարանում ընդգրկված և չընդգրկված երեխաների ընտանիքների սոցիալ-ժողովրդագրական վիճակի բնութագիրը՝ ըստ երեխաների առաջադիմության



Գծապատկեր 68-ը ցույց է տալիս Լոռու մարզի նախակրթարան հաճախող և չհաճախող երեխաների սեռային բնութագիրը՝ ըստ երեխաների առաջադիմության: Ինչպես Տավուշի մարզում, այստեղ ևս տարվա սկզբին և տարվա վերջին նախակրթարան հաճախող և չհաճախող աղջիկների զարգացվածության միջին ցուցանիշներն ավելի բարձր են եղել, քան նախակրթարան հաճախող և չհաճախող տղաների ցուցանիշները՝ բացառությամբ Սպիտակի ստուգիչ խմբի տարվա սկզբի և տարվա վերջի արդյունքների:

Գծապատկեր 68. Լոռու մարզի նախակրթարանում ընդգրկված և չընդգրկված երեխաների սեռային բնութագիրը՝ ըստ երեխաների առաջադիմության



7. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ/ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն բաժնում ներկայացված են՝

- ☐ որակական ուսումնասիրությունների արդյունքների ամփոփումը,
- ☐ քանակական ուսումնասիրությունների արդյունքների ամփոփումը,
  - o երեխաների գնահատման ամփոփում,
  - o պարապմունքների դիտարկման ամփոփում:
- ☐ եզրակացությունները,
- ☐ առկա խնդիրների լուծման ուղիները:

Ընդհանուր առմամբ՝ միկրոծրագրի ղեկավարները, դաստիարակներն ու ծնողները նշում են, որ միկրոծրագիրն ունի դրական ազդեցություն երեխաների զարգացման դինամիկայի վրա:

7.1. Որակական վերլուծության ամփոփում

Այսպիսով, տարեսկզբի և տարեվերջի մարզային այցերից ստացված տեղեկատվության ամբողջական արդյունքների ընդհանրացումը ներկայացված է ստորև.

- ☐ *Նախակրթարանի ընդհանուր պայմաններ*
  - ✓ Նախակրթարանի վրա որոշակի ազդեցությունն կարող է ունենալ համայնքի՝ քաղաքային կամ գյուղական լինելու փաստը, ինչպես ֆիզիկական միջավայրի կազմակերպման, կադրերի ընտրության հնարավորության սահմանափակությունը, այնպես էլ նախակրթարանից սպասումների մակարդակներում:
  - ✓ Նախակրթարանների շենքային պայմանները բարվոք էին, նոր վերանորոգված: Սակայն երկու նախակրթարաններում, որ ունեին երկուական խումբ, մեկ խմբասենյակը միջանցիկ էր և այդ մասով խնդիր են տեսել ծնողներն ու դաստիրակները: Ջեռուցման մասով խնդիր է եղել միայն Դովեղ, Ոսկեպար, Ներքին Ծաղկավան համայնքների նախակրթարաններում, որտեղ բավականին ցուրտ է եղել այցելության պահին: Մի քանի դեպքերում նշվել է, որ նախակրթարանը/դպրոցը համայնքի մի ծայրում են եղել (օրինակ, ոտքով 40 րոպե ճանապարհ) ու ձմռան ամիսներին տեղափոխության խնդիր է եղել: Ջրամատակարարման մասով խնդիր կար Ներքին Ծաղկավանում (օրը մեջ էր կատարվում):
  - ✓ Օրվա ռեժիմի հետ կապված կարելի է ընդհանրացնելով ասել, որ ցանկություն է եղել ծրագրի շրջանակներում օրվա ռեժիմը երկարեցնել, քանի որ օրինակ նախակրթարան է եղել, որ աշխատել է մինչև ժամը 16:00-ն և չի ունեցել քնելու հնարավորություն:

- ✓ Նախակրթարաններ կային, որ օգտվում էին ՄԱԿ-ի պարենային ծրագրից: Բոլոր նախակրթարաններում սնունդն ապահովվում էր ծնողների ամսական ներդրումների հաշվին: Սննդի համար ծնողների վճարած գումարի չափը տատանվում էր տաք և սառը սննդի դեպքում՝ ամսական 500-4000 դրամ, միայն տաք կամ միայն սառը սննդի դեպքում՝ 1000-2000 դրամ:
- ✓ Շատ քիչ նախակրթարաններում են եղել առանձնացված կենտրոններ, մյուս նախակրթարաններում պարզապես առկա էին այդ կենտրոններից պարագաներ: Հատկանշական է, որ շատ նախակրթարաններն այդքան էլ հագեցած չէին ուսումնական նյութերով, դիդակտիկ ու զննական պարագաներով:
- ✓ Քաղաքային համայնքների նախակրթարաններում 5-6 տարեկան երեխաները մեծաթիվ էին, իսկ գյուղական համայնքներում՝ ոչ (Դովեղ, Ոսկեպար, Ներքին Ծաղկավան):
- ✓ Հաճախ տնօրենները բյուջեի արդյունավետ պլանավորման հետ կապված դժվարություն են ունենում, ինչն էլ ազդում է անհրաժեշտ պարագաների թարմացման, թեև ծրագիրը չէր նախատեսում ուտելու և քնելու հնարավորությունների (տաք սնունդ, մահճակալներ) ստեղծման-պահպանման վրա: Բացի այդ, մատուցվող ծառայությունների որակն էլ տուժում է՝ դաստիարակի ցածր աշխատավարձի, ըստ այդմ՝ շահադրդման պակասի պատճառով:

☐ *Նախակրթարանի աշխատակիցներ*

- ✓ Քանի որ բոլոր նախակրթարանները նորաբաց են եղել, ուսումնական ծրագիրը նորություն է եղել բոլորի համար, դաստիարակները հիմնականում լիարժեք չեն պատկերացրել երեխայակենտրոն և ինտեգրված ուսուցման սկզբունքներն ու մեթոդները, իրավիճակային կիրառման ձևերը, ինչը կարելի է կապել փորձի պակասի հետ: Ընդհանուր պատկերի մեջ առանձնացել է Սպիտակի նախակրթարանում աշխատող դաստիարակը, որ պարապմունքների անցկացման գործընթացին ստեղծագործաբար է մոտեցել՝ փորձելով երեխաներին նորովի ու հետաքրքիր մատուցել թեմաները:
- ✓ Բոլոր նախակրթարաններում դաստիարակներն աշխատում են միայնակ: Նախակրթարանի երեխաների հիգիենային դաստիարակները միայնակ չէին կարողանում պատշաճ ուշադրություն դարձնել:
- ✓ Բոլոր դաստիարակները վերապատրաստված էին: Վերապատրաստումներից բոլորն անխտիր գոհ էին և նշում էին, որ այն շատ նյութառատ է եղել, իրենք շատ գիտելիքներ են ստացել:
- ✓ Որոշ նախակրթարաններում կենտրոններով չէին աշխատում, քանի որ վերջիններս ձևավորված չէին: Դաստիարակները հիմնականում երեխաների զարգացման բոլոր ոլորտների վրա էլ կենտրոնանում էին:

- ✓ Դաստիարակները պարապմունքների ընթացքում կիրառում են ինտեգրված սզկբունքը:
- ✓ Դաստիարակներից մեկը ցանկություն է արտահայտել, որ երբեմն իրենց վերապատարստողներն իրենց մոտ դասալսումներ անցկացնեն, որպեսզի իրենք գործնականում հասկանան՝ ինչ են ճիշտ անում, ինչը՝ սխալ:

☐ *Համայնքների սոցիալ-տնտեսական վիճակ, ընտանիքների կենսակերպ*

- ✓ Համայնքներում սոցիալ-տնտեսական վիճակը (ըստ հարցվողների) հիմնականում անուղղակիորեն ազդում էր երեխաների զարգացվածության վրա, օրինակ, երբեմն երեխաներն իրենց ընտանիքի խնդիրները բերում են նախակրթարան, երեխաները լավ են տեղեկացված տան խնդիրներից, ծնողներն ի վիճակի չեն իրենց երեխաներին տանել թատրոն կամ կինո: Բացի մշակութային արժեքներին ծանոթանալուց, սոցիալապես անապահով համայնքներում ծնողներն իրենց ուժերը կենտրոնացնում են առօրյա հոգսերը հոգալու, հանապազօրյա հացը վաստակելու, այլ ոչ երեխային կրթելու վրա: Այս պարագայում նախակրթարաններում ստեղծված պայմանները հնարավորություն են տալիս շտկել սոցիալական տարբերությունները՝ բոլոր երեխաների համար ապահովելով միանման պայմաններ: Հատկապես խնդիրը սուր էր սահմանամերձ գոտիներում (եղել է դեպք, որ երեխան նախակրթարանի սանհանգույցից օգտվել չի կարողացել, քանի որ իրենք տանը չեն ունեցել): Գյուղատնտեսական աշխատաքներում առավել մեծ ներգրավվածություն ուներին Ստեփանավանի նախակրթարանիերեխաները, մասնավորապես՝ կենդանիներին են քշում, կանգնում նրանց մոտ, որ չփախչեն, հողը փոցխում են, կարտոֆիլ հավաքում:
- ✓ Ընտանիքներում երեխաների դաստիարակությամբ զբաղվում էին հայրն ու մայրը հավասարապես, սակայն ինչ վերաբերում է խնամքին, ապա հիմնականում մայրն էր պատասխանատուն: Ծնողները հիմանակում բացատրում էին իրենց որոշումները երեխաներին:
- ✓ Երեխաները հիմնականում ինքնուրույն էին սնվելու, հագնվելու հարցերում, մնացած հարցերում մայրերն օգնում էին իրենց: Երեխաներն օգնում էին տնային պարզ գործերում, հավաքում իրենց հետևից: Մի քանի դեպքերում երեխաներն ինքնուրույն որոշակի պարզ գնումներ են նաև կատարում (օրինակ՝ հաց գնելը): Նրանց արարքներից պատժելի էին՝ սուտը, մեծ քույր-եղբայրների հետ վիճելը: Ծնողները երեխաներին հիմնականում պատժում էին սիրած բաներից զրկելով, անկյուն կանգնեցնելով (հանդիպել են նաև՝ ծեծը, <<հայրիկին կասեմ>>-ը):Սոցիալապես անապահով մեկ ծնողի դեպքում եղել են պահեր, երբ նրա հոգեկան-հուզական վիճակը թույլ չի տվել ամեն ինչ բացատրել երեխային:
- ✓ Նախակրթարաններում շատ են եղել երեխաներ, որ նախկինում մանկապարտեզ են հաճախել, և նախակրթարան են տեղափոխվել, քանի որ այստեղ վարձը քիչ է եղել, մոտիկ է եղել իրենց տանը (մի դեպքում մանկապարտեզում լոգոպետ չի եղել,

երեխային բերել են նախակրթարան, քանի որ դպրոցի լոգոպետը այդ հարցում օգնում է):

- ☐ *Ծնողների սպասումները նախակրթարանից*
  - ✓ Երեխային նախակրթարան տանելու ծնողների հիմանական նպատակը դպրոցին պատրաստ լինելն էր: Նրանք կարծում էին, որ երեխաները նախակրթարանում այլ երեխաների հետ շփման հնարավորություն կունենային, կսովորեին դպրոցի նիստ ու կացին:
- ☐ *Ըստ սեռի՝ երեխաների ընդունակությունների տարբերությունները*
  - ✓ Դաստիարակների մեծամասնությունը նշել էր, որ երեխաների ընդունակությունները սեռից կախված չեն տարբերում, իսկ մնացած մասի կարծիքները հավասարապես են բաշխվել:
- ☐ *Ծրագրի ֆինանսավորումը*
  - ✓ Հիմնականում նախակրթարանների տնօրենները ծրագրի շարունակականության վտանգ չեն տեսել:
- ☐ *Նախակրթարան չհաճախող երեխաների ծնողների կարծիքներ*
  - ✓ Այս ծնողներն իրենց երեխաների նախակրթարան չեն տարել հիմնականում մի քանի պատճառներից ելնելով՝ ֆինանսի բացակայություն, նախակրթարանի հեռու լինելը, երեխային տանը խնամող ունենալը: Սակայն պետք է նշել, որ այս ծնողների շրջանում նախակրթարանի մասին պատկերացումները տանում են դեպի ֆինանսական կողմ: Հիմնականում նրանք կարծում են, որ ով ֆինանսապես հնաարավություն ունի, նա է տանում իր երեխային նախակրթարան:

Ուսումնական տարվա վերջում արձանագրված փոփոխությունները.

- ☐ Ֆիզիկական միջավայրում տեղի ունեցած փոփոխությունների առումով կարելի է ասել, որ տարեվերջին ավելացել են ձեռակերտ պարագաներ, գունավոր պաստառներ: Որոշ նախակրթարաններում ծնողներն ու դաստիարակները նշել են, որ խաղալիքների պակաս կար, որը պատճառ էր կա՛մ պարագաների ի սկզբանե սակավության, կա՛մ երեխաների անփության պատճառով դրանց կոտրվելու:
  - ✓ Դաստիարակները յուրացրել են դասավանդման նոր մոտեցումները, ավելի փորձառու են դարձել, ձեռք են բերել որոշակի վստահություն: Իրականացրել են զանազան միջոցառումներ:
  - ✓ Բոլոր նախակրթարաններում ծնողները գոհ են եղել՝ թե՛ շենքային պայմաններից, թե՛ դաստիարակի վերաբերմունքից և թե՛ երեխաների ձեռք բերած գիտելիքներից: Նախակրթարանը մեծ ներդրում է համարվել, քանի որ երեխաները սովորել են նիստ ու կաց, գրագետ խոսք, տառաճանաչ են դարձել, սովորել են թվերը, հաշվում են, տարրական շփման հմտություններ ունեն: Լեզվական խնդիր ունեցած երեխաների մոտ որոշակի առաջընթաց է նկատվել:

- ☐ Այն երեխաները, ովքեր որոշակի լեզվական խնդիրներ են ունեցել, դաստիարակի կամ դպրոցի լոգոպետի աշխատանքների շնորհիվ դրական տեղաշարժ ունեն: Երեխաները ընդօրինակալ են դաստիարակների խոսքն ու որոշ դեպքերում իրենց տան անդամների խոսքն են ուղղել:
- ☐ Նախակրթարան չհաճախող երեխաների ծնողների հետ խորին հարցազրույցները ցույց են տվել, որ գործող նախակրթարանի մասին ծնողների շրջանում տեղեկատվության պակաս է եղել, երեխաներին նախակրթարան չեն տարել կա՛մ տրանսպորտի բացակայության, կա՛մ ապատեղեկատվության (անվճար լինելու մասին տեղեկացված չեն եղել, ինչն էլ հանգեցրել է նրան, որ անգամ հետաքրքրվելու, պայմաններին ծանոթանալու միտք չի առաջացել), կա՛մ տանը մշտական խնամող ունենալու պատճառներով:

Տնօրենները՝ նախակրթարանների թույլ կողմերի մասին (առաջարկներ)

- ☐ Բյուջեից ավելի շատ գումար պետք է հատկացնեին դիդակտիկ նյութերի ձեռքբերմանը:
- ☐ Նկատառումներ են կատարվել սնման և քնի ռեժիմի հետ կապված (Վանաձորի տնօրենը նշել է՝ ցանկալի է, որ նախակրթարանը դառնա երկարօրյա, երեխաները քնեն նախակրթարանում, քանի որ շատ մայրեր կան, որ աշխատում են: Հատկանշական է, որ նախակրթարանն աշխատում է նաև երկարօրյա ռեժիմով, սակայն երեխաները չեն քնում, պարզապես կարճօրյայի հետ համեմատած՝ ծնողները գումարն են ավելի վճարում՝ 6000 դրամ):
- ☐ Երեխաներին կարողանային ապահովել անվճար սննդով:
- ☐ Պետական ֆինանսավորման անցնելու դեպքում կարող են ֆինանսական խնդիրներ առաջանալ:
- ☐ Առաջացել են խնդիրներ նաև վերանորոգման մասով, ըստ այդմ առաջարկվել է, որ որևէ շինարարական կազմակերպություն պրոֆեսիոնալ մոտեցմամբ իրականացնի այդ գործը՝ պատասխանատվություն կրելով ԾԻԳ-ի առջև:
- ☐ Անհրաժեշտ է, որ շարունակական վերապատրաստումներ լինեն, դաստիարակները նորություններին ծանոթանան հենց վերապատրաստողներից, որպեսզի դաստիարակները այլ մանկապարտեզների դաստիարակներից չստանան անհրաժեշտ տեղեկատվությունը:
- ☐ Անհրաժեշտություն կա, որ նախակրթարանում լինի մեթոդիստ, որ դասալսումներ կիրականացնի, կհամակարգի գործընթացը, քանի որ տնօրենն անձամբ չի հասցնում դասալսումներ կատարել:
- ☐ Քանի որ ծնողական ներդրման միջոցով (ամսական 500 դրամ) դաստիարակներ (բարձրագույն ավարտած) են գալիս ու շաբաթվա մեջ 2-3 անգամ, օրական 20 րոպե օտար լեզվի, երգի դասաժամ են անցկացնում: Ցանկություն կա, որ դպրոցի նման այդ դասաժամերը լինեն սահմանված դասաժամեր:

7.2. Քանակական վերլուծության ամփոփում

7.2.1. Երեխայի թեստավորման ամփոփում

Այսպիսով, վերլուծելով մեկ ուսումնական տարվա ընթացքում նախադպրոցական միկրոծրագրեր իրականացնող հաստատություններ հաճախող երեխաների զարգացման դինամիկան, ինչպես նաև համեմատելով ծրագրում ընդգրկված և չընդգրկված երեխաների թեստավորման արդյունքները ուսումնական տարվա սկզբում և վերջում, կարող ենք փաստել հետևյալ եզրակացությունները՝

- ☐ Ծրագրի իրականացման արդյունքում նախակրթարաններում ընդգրկված երեխաների թեստավորման ու վերաթեստավորման արդյունքների մեջ առավելապես աճ է դրսևորվել *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (3) թվերի ճանաչում, (6) մաթեմատիկական պատկերացումներ և *տրամաբանություն և մտածողություն* ենթաոլորտի (4) օրինաչափությունների կազմում ցուցանիշների մասով:
- ☐ Ստուգիչ խմբի երեխաների թեստավորման ու վերաթեստավորման արդյունքները ցույց են տալիս, որ առավելապես աճել են *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (3) թվերի ճանաչում և *տրամաբանություն և մտածողություն* ենթաոլորտի (11) նմանությունների և տարբերությունների իմացություն ցուցանիշները:
- ☐ Ընդհանուր առմամբ՝ նախակրթարան հաճախող երեխաների թեստավորման արդյունքները գերազանցում են նախակրթարան չհաճախող երեխաների թեստավորման արդյունքներին:
- ☐ Բոլոր երեխաների համար, թեստավորման ու վերաթեստավորման արդյունքների մեջ առավելապես աճ է դրսևորվել (2) *տրամաբանություն և մտածողություն* ենթաոլորտի մասով:
- ☐ Տվյալների վերլուծությունն ըստ առանձին մարզերի՝
  - ✓ Արմավիրի մարզի նախակրթարանների երեխաների թեստավորման ու վերաթեստավորման արդյունքները ցույց են տալիս, որ առավելապես աճ է դրսևորվել *տրամաբանություն և մտածողություն* ենթաոլորտի (4) օրինաչափությունների կազմում և *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (6) մաթեմատիկական պատկերացումներ ցուցանիշների մասով: Ընդհանուր առմամբ՝ նախակրթարան հաճախող երեխաների թեստավորման և վերաթեստավորման արդյունքները գերազանցում են նախակրթարան չհաճախող երեխաների թեստավորման և վերաթեստավորման արդյունքներին: Ինչ վերաբերում է նախակրթարան չհաճախող երեխաների թեստավորման արդյունքներին, ապա դրանք մեծ մասամբ գերազանցում են վերաթեստավորման արդյունքներին:
  - ✓ Տավուշի մարզի նախակրթարանի երեխաների թեստավորման ու վերաթեստավորման արդյունքներին նայելիս տեսնում ենք, որ առավելապես աճ է

դրսևորվել *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (6) մաթեմատիկական պատկերացումներ, (3) թվերի ճանաչում և *տրամաբանություն և մտածողություն* ենթաոլորտի (11) նմանության և տարբերության իմացություն ցուցանիշների մասով: Ինչպես Արմավիրի մարզում, Տավուշի մարզի նախակրթարան հաճախող և չհաճախող երեխաների թեստավորման արդյունքները, բոլոր ցուցանիշների մասով, գերազանցում են նախակրթարան չհաճախող երեխաների արդյունքներին:

- ✓ Լոռու մարզի երեք նախակրթարաններն էլ, ընդհանուր առմամբ, բավականին հաջող էին իրականացնում ծրագիրը: Առավելապես աճ է դրսևորվել *տարրական մաթեմատիկական գիտելիքներ* ենթաոլորտի (3) թվերի ճանաչում, *տրամաբանություն և մտածողություն* ենթաոլորտի (4) օրինաչափությունների կազմում և (11) նմանությունների և տարբերությունների իմացություն ցուցանիշների մասով: Լոռու մարզում ևս նախակրթարան հաճախող և չհաճախող երեխաների թեստավորման և վերաթեստավորման արդյունքները գերազանցում են նախակրթարան չհաճախող երեխաների թեստավորման և վերաթեստավորման արդյունքներին:

7.2.2. Պարապմունքների դիտարկումների ամփոփում

Այսպիսով, վերլուծելով տարվա սկզբում և վերջում նախադպրոցական միկրոծրագրեր իրականացնող հաստատություններում իրականացված պարապմունքների դիտարկման քարտերը, կարելի է եզրակացնել հետևյալը՝

- ☐ Դիտարկման քարտում ընդգրկված բոլոր ութ չափանիշներն էլ ունեն բավական բարձր արտահայտվածություն՝ 82% և ավելի, իսկ առավելագույնը՝ *Հարցեր* չափանիշն է:
- ☐ *Հարցեր* չափանիշի վերլուծությունը ինը նախակրթարանների համար ցույց է տալիս, որ այն առավելագույն արդյունքն է գրանցել՝ բոլոր նախակրթարաններում 100%.
- ☐ Ընդհանուր առմամբ, բոլոր նախակրթարաններում էլ պարապմունքների արդյունավետությունը բարձր է եղել: Մարզային կտրվածքով առաջատարը Լոռին է՝ Սպիտակ համայնքով:
- ☐ Արմավիրի մարզի երեք նախակրթարաններն էլ հաջող են իրականացրել ծրագիրը: Բոլոր չափանիշներն ունեցել են բարձր արտահայտվածություն, իսկ առավելագույնը՝ *Հարցեր* չափանիշն է /100%/:
- ☐ Տավուշի մարզի երեք նախակրթարաններից միայն Ոսկեպարում է գրանցվել պարապմունքների դիտարկման միջին գնահատական, իսկ Դովեղում և Ներքին Ծաղկավանում բավականին հաջող էին իրականացնում ծրագիրը և չափանիշները հիմնականում գտնվում էին 80% և ավելի միջակայքում:

- Լոռու մարզի նախակրթարաններում իրականացված պարապմունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ բոլոր ցուցանիշներն ունեն բարձր արտահայտվածություն /83.33%-ից բարձր/, իսկ առավելագույնը *Ուսումնական գործողություններ և Հարցեր* չափանիշները /100%/:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախակրթարաններում առկա են եղել այն կարևոր միջին պայմանները, որոնք անհրաժեշտ էին նախակրթարանի նորմալ գործունեությունը կազմակերպելու համար: Սակայն, կան հարցեր, որոնց լուծումը կբարձրացնի համակարգի արդյունավետությունը: Այս առումով ստորև առանձնացնենք հետևյալ կետերը:

- *Նախակրթարանի ընդհանուր պայմաններ*
  - ✓ Կարելի է ասել, որ որոշ մասով համայնքի տեսակը ազդեցություն է ունեցել ֆիզիկական միջավայրի կազմակերպման, կադրերի ընտրության հնարավորության սահմանափակության, այնպես էլ նախակրթարանից սպասումների մակարդակներում (հատկապես սահմանամերձ վայրերում): Քաղաքային համայնքների նախակրթարաններում 5-6 տարեկան երեխաները մեծաթիվ էին, իսկ գյուղական համայնքներում՝ ոչ (Դովեղ, Ոսկեպար, Ներքին Ծաղկավան):
  - ✓ Նախակրթարանների շենքային պայմանները բարվոք էին, նոր վերանորոգված:
  - ✓ Նախակրթարաններում հանդիպել են հետևյալ խնդիրները՝ գրաֆիկային ջրամատակարարում, նախակրթարանում ոչ համապատասխան ջերմաստիճան, նախակրթարանի՝ ոչ հարմար դիրք (համայնքի մի ծայրում են եղել): Որոշ նախակրթարաններում երկրարօրյա ռեժիմի կարիք է զգացվել:
  - ✓ Խառը տարիքային խմբի դեպքում դժվար է եղել համադրել թեմաներն ըստ տարիքի՝ տարիքային խնդիր է առաջացել:
  - ✓ Ծրագրով նախատեսված չէ սննդի ապահովում և որոշ նախակրթարաններում առկա էր սննդի կազմակերպման անհրաժեշտություն: Այն նախակրթարաններում, որտեղ այդ հարցը լուծվել էր ՄԱԿ-ի պարենային ծրագրի շրջանակներում՝դպրոցի ճաշարանում (չնայած այս դեպքերում էլ որոշակի անհարմարություններ են առաջացել ճաշարանի՝ նախակրթարանի տարածքից փոքր-ինչ հեռու լինելու պատճառով), երեխաները լիարժեք սնունդ էին ստանում: Իսկ մնացած նախակրթարաններում ծնողներն էին իրենց ուժերով սնունդ ապահովում և երեխաները միայն սառը սնունդ էին ստանում: էլԾնողների ներդրումների չափերը տարբեր նախակրթարաններում իրարից զգալիորեն տարբերվում էին և կար օպտիմալացման խնդիր:
  - ✓ Հատկանշական է, որ հիմնականում նախակրթարաններն այդքան էլ հագեցած չէին ուսումնական նյութերով, դիդակտիկ ու զննական պարագաներով, խաղալիքներով: Բյուջեի քիչ մասն էր հատկացվել ուսումնական նյութեր և պարագաներ ձեռք բերելու համար: Շատ քիչ նախակրթարաններում են եղել առանձնացված կենտրոններ, մյուս նախակրթարաններում պարզապես առկա էին այդ կենտրոններից որոշակի պարագաներ: Իսկ տարվա վեջում ավելացել էին ձեռակերտ պարագաներ, պաստառներ:

- *Նախակրթարանի աշխատակիցներ*
  - ✓ Եթե տարվա սկզբում դաստիարակները փորձի ու վստահության պակաս էին դրսևորում, ապա տարվա վերջում իրավիճակը որոշ մասով շտկվել էր:
  - ✓ Բոլոր նախակրթարաններում աշխատել են միայն դաստիարակներ: Նախակրթարանի երեխաների հիգիենային դաստիարակները միայնակ չէին կարողանում պատշաճ ուշադրություն դարձնել:
  - ✓ Բոլոր դաստիարակները վերապատրաստված էին: Վերապատրաստումներից բոլորն անխտիր գոհ էին և նշում էին, որ այն շատ նյութառատ է եղել, իրենք շատ գիտելիքներ են ստացել: Սակայն, երբ գործը հասել է գործնականին, դաստիարակները անվստահ են եղել՝ արդյոք ամեն ինչ ճիշտ են անում:
  - ✓ Ցանկություն է արտահայտվել, որ երբեմն վերապատարստողներն նախակրթարաններում դասալսումներ անցկացնեն, որպեսզի դաստիարակները գործնականում հասկանան՝ ինչ են ճիշտ անում, ինչը՝ սխալ:
  - ✓ Ցանկություն է արտահայտվել, որ նախակրթարանում մեթոդիստի հաստիք լինի, ով դասալսումներ կիրականացնի, կհամակարգի ողջ ուսումնական գործընթացը:
  - ✓ Ծնողները ցանկացել են, որ նախակրթարանում խմբակներ գործեն:
- *Համայնքների սոցիալ-տնտեսական վիճակ, ընտանիքների կենսակերպ*
  - ✓ Համայնքներում սոցիալ-տնտեսական վիճակը (ըստ հարցվողների) հիմնականում անուղղակիորեն ազդում էր երեխաների զարգացվածության վրա: Նախակրթարաններում ստեղծված պայմանները հնարավորություն են տալիս շտկել սոցիալական տարբերությունները՝ բոլոր երեխաների համար ապահովելով միանման պայմաններ:
  - ✓ Երեխաների դաստիարակությամբ զբաղվում էին հայրերն ու մայրերը հավասարապես: Ծնողները հիմանակում բացատրում էին իրենց որոշումները երեխաներին: Երեխաները հիմնականում ինքնուրույն էին սնվելու, հագնվելու հարցերում, մնացած հարցերում մայրերն օգնում էին իրենց: Երեխաներն օգնում էին տնային պարզ գործերում, հավաքում իրենց հետևից:
  - ✓ Նախակրթարաններում շատ են եղել երեխաներ, որ նախկինում մանկապարտեզ են հաճախել, և նախակրթարան են տեղափոխվել, քանի որ այստեղ վարձը քիչ է եղել, մոտիկ է եղել իրենց տանը (մի դեպքում մանկապարտեզում լոգոպետ չի եղել, երեխային բերել են նախակրթարան, քանի որ դպրոցի լոգոպետը այդ հարցում օգնում է):
- *Ծնողների սպասումները նախակրթարանից*
  - ✓ Ծնողներն իրենց երեխաներին տարել են նախակրթարան, որպեսզի նրանք դպրոցին պատրաստ լինեն: Նախակրթարանի ուսումնական տարվա վերջում արդեն արդարացել են ծնողների սպասումները՝ նրանք գոհ են թե՛ նախակրթարաններից, թե՛

դաստիրակներից և թե՛ այն գիտելիքներից, որ ստացել են իրենց երեխաները: Լեզվական խնդիր ունեցած երեխաների մոտ որոշակի առաջընթաց է նկատվել:

- ☐ *Ծրագրի ֆինանսավորումը*
  - ✓ Հիմնականում նախակրթարանների տնօրենները ծրագրի շարունակականության վտանգ չեն տեսել:
- ☐ *Նախակրթարան չհաճախող երեխաների ծնողների կարծիքներ*
  - ✓ Այս ծնողներն իրենց երեխաներին նախակրթարան չեն տարել հիմնականում մի քանի պատճառներից ելնելով՝ ֆինանսի բացակայություն, նախակրթարանի հեռու լինելը, երեխային տանը խնամող ունենալը: Սակայն պետք է նշել, որ այս ծնողների շրջանում նախակրթարանի մասին պատկերացումները տանում են դեպի ֆինանսական կողմ: Հիմնականում նրանք կարծում են, որ ով ֆինանսապես հնարավորություն ունի, նա է տանում իր երեխային նախակրթարան:
- ☐ *Պարապմունքների անցկացում*
  - ✓ Որոշ նախակրթարաններում կենտրոններով չեն աշխատում, քանի որ վերջիններս ձևավորված չեն:
  - ✓ Դաստիարակները հիմնականում երեխաների զարգացման բոլոր ոլորտների վրա էլ կենտրոնանում էին:
  - ✓ Դաստիարակները պարապմունքների ընթացքում կիրառում են ինտեգրված սկզբունքը:
  - ✓ Ընդհանուր առմամբ, բոլոր նախակրթարանների պարապմունքների անցլացման արդյունավետությունը բարձր է:
  - ✓ Բոլոր դաստիարակները կարողանում են ճիշտ հարցերով ուղղորդել պարապմունքի ճիշտ ընթացքը, կարողանում են ապահովել երեխաների ակտիվությունը խմբասենյակում և կիրառում են ճիշտ ուսումնական մեթոդներ:
- ☐ *Երեխաների զարգացվածություն*
  - ✓ Նախակրթարանների երեխաների վերաթեստավորման արդյունքները հիմնականում ավելի բարձր են եղել, քան թեստավորման արդյունքները: Համեմատած նախակրթարան չհաճախող երեխաների վերաթեստավորման հետ՝ նախակրթարանների երեխաների վերաթեստավորման արդյունքներն ավելի բարձր են եղել: Սա թույլ է տալիս փաստելու, որ նախակրթարանը կարևոր դերակատարում է ունեցել երեխաների զարգացման հարցում:
  - ✓ Վերլուծությունից պարզ է դարձել, որ վերոնշյալ երեք մարզերում երեխաների ընտանիքների սոցիալ-տնտեսական վիճակի և իրենց գիտելիքների միջև հստակ կապ չի դիտարկվել. պատկերը անկանոն է: Ընտանիքի սոցիալ-տնտեսական վատ վիճակի ազդեցության մասին կարող ենք նշել միայն այն, ինչ պարզվել է որակական

հետազոտության ժամանակ՝ սոցիալ-տնտեսական վատ վիճակը երեխային դարձնում է ինքնամփոփ և կաշկանդված, ծնողները ավելի քիչ ժամանակ են ունենում երեխայի հետ զբաղվելու համար:

- ✓ Երեխայի սեռային հատկանիշներից կախված նրանց զարգացվածությունը տարբեր է եղել, ուստի նշանակալի հետևություն անել չենք կարող: Որոշ համայնքներում աղջիկների գիտելիքներն են գերազանցել, որոշ համայնքներում էլ՝ հակառակը:

Առաջարկում ենք.

- ☐ Շարունակել պահպանել միկրոծրագրի՝ պետական բյուջեից ֆինանսավորման մոդելը:
- ☐ Սննդի ապահովման մոտեցումը փորձել նույնականացնել բոլոր նախակրթարաններում, որպեսզի բոլոր երեխաների համար ապահովվեն նույն պայմանները:
- ☐ Հնարավորության դեպքում աջակցել նախակրթարաններին.
  - ✓ բացօթյա խաղահրապարակների ստեղծման և համալրման հարցում,
  - ✓ տրամադրվող ֆինանսական միջոցների ավելացմանը՝ ընձեռելով հնարավորություն ավելացնելու խմբաքանակը այն նախակրթարաններում, որտեղ արձանագրվել են երեխաների թվաքանակի և/կամ պահանջակի աճ:
  - ✓ պարբերաբար համալրել անհրաժեշտ պարագաներով՝ գրականություն, տեխնիկա, խաղալիքներ, դիդակտիկ պարագաներ և սպորտային գույք բյուջեի հաշվին,
  - ✓ օրվա ռեժիմի և երեխաների քնի կազմակերպման հարցում աջակցել այն նախակրթարաններին, որտեղ նկատվել է վերջիններիս անհրաժեշտությունը, և առկա են վերջիններս կազմակերպելու հնարավորությունները,
  - ✓ նախակրթարաններում դիտվել է դաստիարակի օգնականի հաստիքի անհրաժեշտություն, քանի որ դաստիարակներն իրենց զբաղվածության հետ մեկտեղ չեն հասցնում պատշաճ կերպով հետևել երեխաների հիգիենային:
- ☐ Սահմանել դաստիարակների աշխատանքի գնահատման չափորոշիչներ: Կատարել մոնիթորինգ և արդյունքների հիման վրա՝ առաջատար և բարձր ցուցանիշներ ունեցող դաստիարակներին խրախուսել և լուսաբանել բոլոր գործող նախակրթարաններում, ինչը կնպաստի առողջ մրցակցությանը:
- ☐ Փորձը ցույց է տվել, որ միայն վերապատրաստումը քիչ է և վերապատրաստողների կողմից անհրաժեշտ է մշտադիտարկումներ իրականացնել, քանի դեռ դաստիարակը վստահ ու պրակտիկորեն պատրաստ չի աշխատելուն:
- ☐ Հնարավորության շրջանակներում՝ նախակրթարաններում կազմակերպել լրացուցիչ խմբակներ:
- ☐ Ինչպես անցած տարի, այս տարի ևս արդիական է ուսումնական նյութերի բավարար քանակի ապահովման խնդիրը: Այս առումով բյուջեում *ուսումնական և ուսուցողական նյութեր* տողին անհրաժեշտ է ավելի մեծ նշանակություն տալ՝ կարևորելով պարագաների

բավարար քանակով ապահովումը, քանի որ դրանք մեծ դեր ունեն երեխայի զարգացման միջավայրն ապահովելու հարցում: Հարկավոր է բյուջեում նախատեսված այդ տողին տալ բացվածք՝ ներառելով բոլոր անհրաժեշտ պարագաները դասապրոցեսն արդյունավետ կազմակերպելու և միջոցներն արդյունավետ օգտագործելու համար:

- ☐ Բյուջեն օպտիմալ ծախսելու նպատակով, ամեն մարզում կարելի է կազմակերպել՝ մեծածախ գնումներ կահույքի, ուսումնական և ուսուցողական նյութերի ձեռքբերման համար: Արդյունքում բոլոր նախակրթարանների կահույքները կլինեն միատեսակ՝ ըստ արժեքի, կհամապատասխանեն երեխայի զարգացման չափանիշներին՝ ըստ գույնի, որակի և այլն: Բացի դրանից՝ մեծ քանակության դեպքում հնարավոր կլինի ձեռք բերել ավելի մատչելի գնով:
- ☐ Կենտրոնների հստակ առանձնացում (ինչպես վերապատրաստումն է ենթադրում), քանի որ պարագաների հստակ դասավորվածությունը երեխաների մոտ կոկիկության ու կարգուկանոնի զգացողությունը կամրացնի:
- ☐ Մշտապես իրականացնել նախակրթարանների գործունեության վերաբերյալ լուսաբանման աշխատանքներ:
- ☐ Ընձեռել հնարավորություն նախակրթարան չհաճախող երեխաների ծնողներին՝ նախակրթարանում կազմակերպվող ծրագրային թեմատիկ միջոցառումներին մասնակից լինելու՝ երեխային նախակրթարան տանելու հարցը ավելի պարզ գնահատելու և կողմնորոշվելու համար, օրինակ՝ նրանց հրավիրելով նախակրթարանի սաների հանդեսներին կամ այլ միջոցառումներին: